


# ՂԱԶԱԽՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ.

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐ



# ՂԱԶԱԽՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐ

Վեց տարի անընդմեջ Հայաստանում լույս է տեսնում հայ-ղազախական համագործակցությանը և դրա զարգացման հեռանկարներին նվիրված գիրք: «Ղազախստան-Հայաստան. համագործակցության հարթակներ» գիրքն իր մեջ ներառում է հայ-ղազախական համագործակցության տարբեր ոլորտներ՝ սկսած հին ժամանակներից, հայ-ղփչաղական կապերից, վերջացրած տարբեր հարթակներում (քաղաքականություն, տնտեսություն, գիտություն, մշակույթ և այլն) համագործակցության ներկա փուլով:

ԵԱՏՄ, ԱՊՀ, ՀԱՊԿ, Ղազախստանի ժողովրդի ասամբլեա, Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների համագումար, Աստանայի տնտեսական փորում, «ԷՔՍՊՈ-2017», «Ունիվերսիադա-2017». սա հարթակների ոչ լրիվ ցանկն է, որտեղ Հայաստանն ու Ղազախստանը համագործակցում են երկար տարիներ՝ ցուցադրելով փոխհարաբերությունների առավելագույն կառուցողական և վստահելի բնույթը:

«Ղազախստան-Հայաստան. համագործակցության հարթակներ» գիրքը «Արմեդիա» տեղեկատվական-վերլուծական գործակալության, «Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ-ի և Հայաստանում Ղազախստանի Հանրապետության դեսպանության փոխգործակցության արդյունքն է: Մեր նախորդ գրքերում մենք գրել ենք մի երկրի պատմության և հասարակական-քաղաքական կարգի մասին, որի հետ Հայաստանին կապում են բազմադարյա բարեկամությունը և ընդհանուր խորհրդային անցյալը: Մենք գրել ենք Հայաստան-Ղազախստան պետական փոխհարաբերությունների, ՂՀ-ում հայկական համայնքի, Ղազախստանի մշակույթի ու ավանդույթների, սովորույթների ու կենցաղի մասին, նրա մշակութային ժառանգության և հանդուրժողականության ու միջէթնիկական համաձայնության այսօրվա ավանդույթների մասին, որոնցով իրավամբ հպարտանում է ժամանակակից Ղազախստանի Հանրապետությունը:

«Ղազախստան. հեռու և մոտ», «Ղազախստան. բազմամշակույթ և յուրօրինակ», «Ղազախստան. ավելի մոտ Հայաստանին», «Ղազախստան. հաջողության գաղտնիքները», «Ղազախստանի նախաձեռնությունները». մեր այս նախորդ հրատարակություններում մենք փորձել ենք ընդգրկել այն ամենը, ինչով կարող է հպարտանալ և ինչ կարող է աշխարհին ցույց տալ այս զարմանահրաշ երկիրը: «Ղազախստան-Հայաստան. համագործակցության հարթակներ» գրքում մենք փորձել ենք ներկայացնել այն ոլորտները, որոնք ցույց են տալիս հին փորձը և նոր հնարավորություններ բացում մեր երկու երկրների միջև համագործակցության համար: Գրքում շատ են բացառիկ նյութերը առաջին ձեռքից, որոնք կստիպեն ընթերցողներին նորովի նայել այն երկրին, որն աշխարհագրորեն թերևս հեռավոր է, սակայն միաժամանակ այնքա՜ն մոտ է Հայաստանին:

«Ղազախստան-Հայաստան. համագործակցության հարթակներ» գիրքը նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար, յուրաքանչյուրը գրքում կարող է ինչ-որ յուրահատուկ բան գտնել: Գիրքը կտարածվի անվճար, հայերենով և ռուսերենով:

Հաճելի ընթերցում…



# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆ-ՂԱԶԱԽՍՏԱՆ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐ

# ՀԱՅԱՍՏԱՆ-ՂԱԶԱԽՍՏԱՆ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐ



Ղազախստանը Եվրոպայի և Ասիայի հատման կետում գտնվելու իր աշխարհագրական դիրքի շնորհիվ աշխարհների յուրահատուկ խաչմերուկ է, որն իր մեջ համադրում է այդ աշխարհամասերի մշակութային արժեքները:

Հայերին ու ղազախներին շատ բան է միավորում՝ սկսած բազմադարյա համագործակցության ավանդույթներից մինչև 21-րդ դարի աշխարհայացքը: Ղազախստանն այն երկիրն է, որի հետ Հայաստանը գտնվում է անվտանգության միևնույն համակարգում: Որքան մենք ճանաչում ենք մեր բարեկամներին, այնքան ավելի խորն ենք մենք նրանց հասկանում, այնքան ավելի շատ ենք հարստանում ինքներս:

Հայ-ղազախական կապերի պատմությունը գնում է դեպի խորը միջնադար՝ մանավանդ հայ-ղփչաղական խաղաղ և ռազմական համագործակցության ժամանակաշրջան: 12-13-րդ դարերում Հայաստանի տարածքում են հայտնվում ղազախների նախնիների՝ ղփչաղների մի քանի խմբեր: Ղփչաղական հզոր խմբերից մեկը հայտնվում է Հայաստանի տարածքում 13-րդ դարի սկզբին՝ մոնղոլական արշավանքի ժամանակ: Հին ավանդությունների համաձայն՝ շուրջ 40 հազար ղփղաչներ, փախչելով մոնղոլներից և պաշտպանական մարտեր մղելով, հայտնվում են Անդրկովկասում Հյուսիսային Իրանից: Միավորվելով վրացական, հայկական ապստամբների հետ՝ նրանք սկսում են դիմակայել Չինգիզ խանի զորքերին: Շուտով ղփչաղների, հայերի և վրացիների միացյալ զորքը ենթարկվում է մոնղոլ զավթիչներին և սկսում նրանց հարկեր վճարել: Իսկ այս 40 հազար ղփչաղները իրենց ընտանիքների հետ որոշում են մնալ հայկական հողում: Նրանց տրամադրում են հսկայական տարածք՝ ի նշան ռազմական դաշինքի համար երախտագիտության:

«Մինչև հիմա այդ վայրը կա,- պատմում է Եվրասիական կենտրոնի (Աստանա) տնօրեն Չիյաբեկ Կաբուլդինովը,- մենք այդտեղ եղել ենք, այնտեղ մի հին գյուղ կա, որն անվանում են Ղփչաղ, կա բնակավայր՝ Ղազախ անունով, գետ կա, որը մինչև հիմա կոչվում է Ղազախ, կան միջնադարյան ղփչաղական գերեզմաններ՝ ավանդական ղփչաղական քանդակներով: Այսպես, եթե անվանի ղփչաղ է մահանում, ապա նրա գերեզմանին դնում են ձիու քանդակ, իսկ եթե երեխան է այն աշխարհ գնում, նրա գերեզմանին օրորոց են պատկերում,



որը հարյուր տոկոսով հիշեցնում է ժամանակակից ղազախների այսօրվա մանկական օրորոցները: Ավելին՝ հայերի մեջ հանդիպում են ղազախա-ղփչաղական անուններ՝ Բերիկ, Կարաբալա և այլն: Ղփչաղ գյուղի շրջակայքում ապրող բնակիչներն ասում են, որ երբ իրենց մոտ երեխա է ծնվում, նրա պոչուկի վրա լինում է սև նշան՝ խալի նման, ինչը բնորոշ է քոչվորներին, ղազախներին: Եվ նրանք կարծում են, որ դա մնացել է դեռ այն ժամանակներից, քանի որ այդ 40 հազար ղփչաղների մի մասը 13-րդ դարում, ասիմիլացվել է, հայացվել, իսկ որոշ մասը 17-րդ դարում փոքրաթիվ հայկական համայնքի հետ վերաբնակություն է հաստատել Լվովում:

Այնպես որ հայ-ղազախական կապերը կայուն են, գալիս են դարերի խորքից, և մենք ասում ենք, որ խաղաղ հայ-ղփչաղական, հայ-ղազախական փոխհարաբերությունները դեռ երկար կապրեն: Մենք պատմական հիմքեր ունենք մեր շփումները ձևավորելու և նրանց նոր հուն տեղափոխելու համար: Մի քանի տարի առաջ Աստանայի Եվրասիական համալսարանը Հայաստանում Ղազախստանի դեսպանատան աջակցությամբ Երևանի պետական համալսարանի հիմքի վրա բացեց Ղազախական մշակույթի և լեզվի կենտրոն: Այդտեղ են գալիս մեր ուսանողները, մագիստրանտները, դոկտորանտները, դասախոսները, դասեր են անցկացնում ղփչաղական-ղազախական լեզվով:

Մեր մագիստրանտները սիրում են գալ Հայաստան, քանի որ այստեղ հոյակապ Մատենադարան կա՝ հնագույն ձեռագրերի ինստիտուտ, որտեղ միջնադարյան տեղեկատվություն կա մեր նախնիների մասին: Այնպես որ և՛ գիտական, և՛ մշակութային ոլորտում մենք հիմքեր ունենք միջպետական, միջէթնիկական շփումները կարգավորելու, ուժեղացնելու համար»:



Մատենադարանում պահվում են ղփչաղական ձեռագրեր, որոնք յուրահատուկ են նրանով, որ գրված են հայկական տառերով, բայց ղփչաղական լեզվով: Եվ հայ, և՛ ղազախ մասնագետներն զբաղվում են այս նյութերի ուսումնասիրությամբ, որտեղ շատ հետաքրքիր տեղեկություններ կարելի է գտնել այն հեռավոր ժամանակների կյանքի, կենցաղի, մեր ժողովուրդների միջև հարաբերությունների մասին:

Հայ-ղազախական բարեկամական կապերը շարունակվել են խորհրդային տարիներին, շարունակվում են նաև 1991թ.-ից հետո, երբ մեր երկու երկրները անկախություն ստացան: Անկախության ձեռքբերումից ի վեր Ղազախստանն ու Հայաստանը զարգացնում են երկկողմ հարաբերություններ գործընկերության և փոխշահավետ համագործակցության ոգով:



## ԳԼՈՒԽ 1

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ



Ղազախստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992թ. օգոստոսի 27-ին: Անկախություն ստանալով՝ Ղազախստանն ու Հայաստանը երկկողմ հարաբերություններ են զարգացնում գործընկերության և փոխշահավետ համագործակցության ոգով: Երկու երկրների միջև ձևավորվել է վստահելի երկխոսություն, որոնք զարգանում են Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) շրջանակներում: Երկու երկրները համագործակցության ակտիվ մասնակիցներ են Անկախ պետությունների հանրակցության (ԱՊՀ) գծով և փոխգործակցում են ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում և միջազգային ու եվրոպական այլ կառույցներում:

Ղազախստանի և Հայաստանի ժողովուրդներին միավորում է գոյակցության դրական փորձի և արդյունավետ համագործակցության առկայությունը նախկին ԽՍՀՄ շրջանակներում, և այսօր ղազախա-հայկական հարաբերություններում բացակայում են երկկողմ բնույթի որևէ տարաձայնություններ. այսպես է նշված Հայաստանում Ղազախստանի դեսպանատան կայքում:

Հայաստանի և Ղազախստանի միջև պահպանվում է վստահելի երկխոսությունը պետության ղեկավարների մակարդակով: Փոխշահավետ քաղաքական և առևտրատնտեսական համագործակցություն կառուցելու՝ երկու կողմերի ձգտումը ցուցադրվեց Հայաստանի և Ղազախստանի նախագահների՝ Աստանա ու Երևան զանազան փոխադարձ պաշտոնական այցերի ընթացքում:

Հայաստանում դրական արձագանք և աջակցություն են գտնում շատ ղազախական արտաքին քաղաքական նախաձեռնություններ: Այսպես, երկկողմ երկխոսության զարգացման առումով կարևոր քայլ էր Հայաստանի կողմից Ղազախստանի թեկնածության աջակցությունը ԵԱՀԿ նախագահության համար 2010թ.-ին: Բացի այդ՝ Հայաստանն աջակցել է Աստանա քաղաքի թեկնածությունը 2017թ. ԷՔՍՊՈ միջազգային մասնագիտացված ցուցահանդեսն այնտեղ անցկացնելու համար և հանդես է եկել ՄԱԿ-ում որպես ղազախական բանաձևի համահեղինակ՝ օգոստոսի 29-ը Միջուկային փորձարկումների դեմ գործողությունների միջազգային օր հայտարարելու մասին:

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ՝ ԱՊՀ

Անկախ պետությունների համագործակցությունը (ԱՊՀ) ստեղծվել է 1991թ. դեկտեմբերին: Ընդունված հռչակագրում Համագործակցության մասնակիցները հայտարարեցին սուվերեն հավասարության սկզբունքներով իրենց փոխգործակցության մասին:

ԱՊՀ-ում միավորված են Ադրբեջանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը, Մոլդովայի Հանրապետությունը, Ռուսաստանյան Դաշնությունը, Տաջիկստանի Հանրապետությունը, Ուզբեկստանի Հանրապետությունը և Ուկրաինան: 2005թ. օգոստոսից Թուրքմենստանը դուրս է եկել ԱՊՀ անդամությունից և ստացել ասոցացված անդամ-դիտորդի կարգավիճակ: 1993թ. դեկտեմբերից մինչև 2009թ. օգոստոսի 18-ը ԱՊՀ կազմում էր նաև Վրաստանը:

1993թ. սեպտեմբերին ԱՊՀ պետությունների ղեկավարները ընդհանուր տնտեսական տարածություն ձևավորելու համար ստորագրեցին Տնտեսական միություն ստեղծելու մասին պայմանագիր՝ հիմնված ապրանքների, ծառայությունների, աշխատուժի, կապիտալի ազատ տեղաշարժի վրա, համաձայնեցված դրամավարկային, հարկային, գնային, մաքսային, արտաքին տնտեսական քաղաքականության մշակման վրա, տնտեսվարման գործունեության կարգավորման մեթոդների սերտացման, ուղիղ արտադրական կապերի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծման համար:

1995թ. ստորագրվեցին Տնտեսական և հումանիտար ոլորտներում ինտեգրման խորացման մասին համաձայնագիր չորս երկրների՝ Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի միջև, և Սուվերեն հանրապետությունների հանրության ստեղծման մասին համաձայնագիր՝ Բելառուսի և Ռուսաստանի միջև համապատասխան կոորդինացիոն մարմինների ստեղծմամբ: Չորս երկրների (Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ռուսաստան) Միջպետական խորհրդի որոշմամբ 1999թ. փետրվարին Տաջիկստանը ճանաչվում է Մաքսային Միության լիիրավ մասնակից:

2003թ. սեպտեմբերին Բելառուսը, Ղազախստանը, Ռուսաստանը և Ուկրաինան ստորագրում են համաձայնագիր՝ Միասնական տնտեսական տարածության ձևավորման մասին: Ռուսաստանը, Ղազախստանը և Բելառուսը 2010թ. դեկտեմբերի 9-ին փաստաթղթեր են ստորագրում Միասնական տնտեսական տարածության ստեղծման մասին: 2011թ. նոյեմբերի 18-ին Մոսկվայում Ռուսաստանի, Ղազախստանի և Բելառուսի նախագահները փաստաթղթեր են ստորագրում ինտեգրման հաջորդ փուլի մասին՝ Եվրասիական տնտեսական ինտեգրման մասին հռչակագիր, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին պայմանագիր, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքային կանոնակարգ:





Եվրասիական տնտեսական ինտեգրման մասին հռչակագրում հայտարարվում է 2012թ. հունվարի 1-ին ինտեգրացիոն շինարարության հաջորդ փուլին՝ Միասնական տնտեսական տարածության անցնելու մասին, որը հիմնված է Առևտրի համաշխարհային կազմակերպության նորմերի ու սկզբունքների վրա և իր ձևավորման ցանկացած փուլում բաց է այլ պետությունների համար: 2014թ. մայիսի 29-ին Աստանայում ստորագրվում է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիրը: 2015թ. հունվարի 1-ից սկսում է գործել Եվրասիական տնտեսական միությունը:

Երկրների փոխգործակցությունը ԱՊՀ շրջանակներում իրականացվում է նրա կոորդինացնող ինստիտուտների միջոցով (կանոնադրական մարմիններ, գործադիր մարմիններ և ոլորտային համագործակցության մարմիններ):

ԱՊՀ հռչակված նպատակներն են.

- համագործակցության իրականացում քաղաքական, տնտեսական, էկոլոգիական, հումանիտար, մշակութային և այլ ոլորտներում,

- անդամ պետությունների բազմակողմ և հավասարակշռված տնտեսական ու սոցիալական զարգացում ընդհանուր տնտեսական տարածության շրջանակներում, միջպետական համագործակցություն և ինտեգրում,
- մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովում՝ մի-

ջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին և ԵԱՀԿ փաստաթղթերին համապատասխան,

- համագործակցություն անդամ պետությունների միջև միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման, սպառազինության և ռազմական ծախսերի կրճատման, միջուկային և զանգվածային ոչնչացման զենքի այլ տեսակների վերացման հարցում, համընդհանուր և լրիվ զինաթափման արդյունավետ միջոցների իրականացում,

- նպաստել անդամ պետությունների քաղաքացիների ազատ շփմանը և Հանրակցությունում տեղաշարժին,

- փոխադարձ իրավական օգնություն և համագործակցություն իրավական հարաբերությունների այլ ոլորտներում,

- Հանրակցության պետությունների միջև վեճերի և հակամարտությունների խաղաղ կարգավորում:

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ՝ ԵԱՏՄ

Եվրասիական տնտեսական միությունը (ԵԱՏՄ) տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն է, որն ունի միջազգային իրավասուբյեկտայնություն և հիմնադրվել է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով: ԵԱՏՄ-ում ապահովվում է ապրանքների, ինչպես նաև ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի ազատ շարժը և տնտեսության ոլորտներում կոորդինացված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականության անցկացումը:

ԵԱՏՄ անդամ պետություններն են Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը և Ռուսաստանյան Դաշնությունը: ԵԱՏՄ-ն ստեղծվել է ազգային տնտեսությունների բազմակողմ արդիականացման, համագործակցության և մրցունակության բարձրացման և ի շահ անդամ պետությունների բնակչության կենսամակարդակի բարձրացման կայուն զարգացման՝ պայմանների ստեղծման նպատակներով:

1994թ. մարտի 29-ին՝ Ռուսաստան կատարած իր առաջին պաշտոնական այցի ժամանակ, Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանում Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևը հանդես եկավ միասնական տնտեսական տարածության և համատեղ պաշտպանական քաղաքականության հիման վրա Եվրասիական միության ձևավորման մասին գաղափարով: «Հասունացել է մեր երկրների փոխհարաբերությունների որակապես նոր մակարդակի անցում կատարելու անհրաժեշտությունը կամավորության և իրավահավասարության սկզբունքներով ձևավորված նոր միջպետական միավորման հիման վրա: Նման միավորում կարող էր լինել Եվրասիական միությունը: Այն պետք է կառուցվի ԱՊՀ սկզբունքներից տարբերվող սկզբունքների վրա, քանի որ նոր միավորման հիմքը պետք է կազմեն վերազգային մարմինները, որոնք կոչված են լուծելու երկու կարևոր խնդիր՝ միասնական տնտեսական տարածության ձևավորում և համատեղ պաշտպանական քաղաքականության ապահովում», - ասաց նա:





Այն բանից հետո, երբ 2010թ. հուլիսին ուժի մեջ մտան Եվրասիական տնտեսական համագործակցության շրջանակներում Մաքսային միության ստեղծման մասին պայմանավորվածությունները, նույն տարվա դեկտեմբերին ԵՏՀ գագաթաժողովում համաձայնություն ձեռք բերվեց՝ ստեղծելու Եվրասիական տնտեսական միություն Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի Միասնական տնտեսական տարածության հիմքի վրա:

2013թ. սեպտեմբերի 3-ին Ռուսաստանի և Հայաստանի նախագահների բարձր մակարդակով բանակցությունների արդյունքներով ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարեց իր երկրի՝ Մաքսային միություն մտնելու որոշման մասին: Հոկտեմբերի 10-ին ԵԱՏՄ անդամ պետությունների ղեկավարները պայմանագիր ստորագրեցին Միությանը Հայաստանի միանալու մասին: 2014թ. դեկտեմբերի 4-ին Հայաստանի խորհրդարանը վավերացրեց երկրի՝ ԵԱՏՄ-ին միանալու մասին պայմանագիրը: 2015թ. հունվարի 2-ին Հայաստանը պաշտոնապես մտավ ԵԱՏՄ:

2014թ. դեկտեմբերի 23-ին բարձրագույն Եվրասիական տնտեսական խորհրդի նիստին պայմանագիր ստորագրվեց ԵԱՏՄ-ին Ղրղզստանի մասնակցության մասին: Ղրղզստանը պաշտոնապես մտավ ԵԱՏՄ 2015թ. օգոստոսին:

2015թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտավ Եվրասիական տնտեսական միության ստեղծման մասին պայմանագիրը: Նույն օրն սկսեց գործել ԵԱՏՄ կայքը: Այն հասանելի է բոլոր մասնակից անդամ երկրների ազգային լեզուներով:

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ՝ ՀԱՊԿ

ՀԱՊԿ-ը՝ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը, ռազմաքաղաքական դաշինք է ԱՊՀ ներսում, որի խնդիրն է պայմանագրի մասնակից երկրների տարածքատնտեսական տարածության պաշտպանությունը բանակների և օժանդակ ստորաբաժանումների համատեղ ջանքերով ցանկացած արտաքին ռազմաքաղաքական ագրեսորներից, միջազգային ահաբեկիչներից, ինչպես նաև խոշոր մասշտաբի բնական աղետներից: ՀԱՊԿ-ի բարձրագույն մարմինն է Հավաքական անվտանգության խորհուրդը (ՀԱԽ), որի կազմի մեջ են մտնում անդամ պետությունների ղեկավարները: Խորհուրդը դիտարկում է Կազմակերպության գործունեության սկզբունքային հարցերը և դրա նպատակներն ու խնդիրներն իրականացնելուն ուղղված որոշումներ է ընդունում:

Դաշինքն ստեղծվել է նախկին խորհրդային հանրապետությունների կողմից Հավաքական անվտանգության պայմանագրի հիման վրա, որն ստորագրվել է 1992թ. մայիսի 15-ին Տաշքենդում Հայաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի կողմից: 1993թ. սեպտեմբերի 9-ին պայմանագրին միանում է Վրաստանը, իսկ դեկտեմբերի 31-ին՝ Բելառուսը: Նույն թվականին ՀԱՊ-ին է միանում Ադրբեջանը:

1994թ. ապրիլի 20-ին պայմանագիրը մտնում է ուժի մեջ և հաշվարկված էր 5 տարվա համար, սակայն թույլատրում էր երկարաձգում:

1999թ. ապրիլի 2-ին Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի և Տաջիկստանի նախագահներն արձանագրություն են ստորագրում պայմանագրի գործողության ժամկետը ևս հինգ տարով երկարաձգելու մասին, սակայն Ադրբեջանը, Վրաստանը և Ուզբեկստանը հրաժարվում են երկարաձգել պայմանագիրը:

2002թ. մայիսի 14-ին ՀԱՊ-ի մոսկովյան նիստի ժամանակ որոշում է կայացվում ՀԱՊ-ը միջազգային լիարժեք կազմակերպության՝ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) վերածելու մասին:

2002թ. հոկտեմբերի 7-ին Քիշնևում ստորագրվում են ՀԱՊԿ կանոնադրությունը և իրավական կարգավիճակի մասին համաձայնագիրը, որոնք վավերացվում են ՀԱՊԿ բոլոր անդամ պետությունների կողմից և ուժի մեջ մտնում 2003թ. սեպտեմբերի 18-ին:





2004թ. դեկտեմբերի 2-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան բանաձև է ընդունում ՀԱՊԿ-ին ՄԱԿ-ի ԳԱ-ում դիտորդի կարգավիճակ տալու մասին:

2006թ. օգոստոսի 16-ին Սոչիում որոշում է ստորագրվում Ուզբեկստանի՝ ՀԱՊԿ-ին լիիրավ միանալու (անդամությունը վերականգնելու) մասին:

2009թ. փետրվարի 4-ին Մոսկվայում ՀԱՊԿ երկրների առաջնորդները հավանություն են տալիս Արագ արձագանքման հավաքական ուժերի ստեղծմանը: Ստորագրված փաստաթղթի համաձայն՝ Արագ արձագանքման հավաքական ուժերը կօգտագործվեն ռազմական ագրեսիային դիմակայման, միջազգային ահաբեկչության և ծայրահեղականության, տրանսազգային կազմակերպված հանցավորության, նարկոթրաֆիքի դեմ պայքարելու համար հատուկ գործողությունների անցկացման, ինչպես նաև արտակարգ իրավիճակների հետևանքները վերացնելու համար:

2009թ. հունիսի 14-ին տեղի է ունենում պետությունների հավաքական անվտանգության խորհրդի նիստը, որի որոշմամբ ստեղծվում են Արագ արձագանքման հավաքական ուժերը:

2012թ. հունիսի 28-ին Տաշքենդը ծանուցման նոտա է ուղարկում ՀԱՊԿ-ում Ուզբեկստանի անդամությունը դադարեցնելու մասին (պաշտոնապես դադարեցվում է նույն թվականի դեկտեմբերի 19-ին):

Նշենք, որ ՀԱՊԿ յուրաքանչյուր մասնակից-անդամ իրավունք ունի դուրս գալու ՀԱՊԿ կազմից ցանկացած ժամանակ սեփական ցանկությամբ: Բացի այդ՝ ՀԱՊԿ-ը՝ որպես ռազմաքաղաքական դաշինք, երբեք չի մասնակցել մարտական գործողությունների:



## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ՝ ՈՉ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՇԽԱՐՀ

Երկիր մոլորակի ավելի քան 200 000 մարդ իրենց խոսքն են ասել աշխարհի առաջնորդներին՝ պահանջելով նրանցից առանց միջուկային զենքի աշխարհ: Այսպիսի դիմում կարելի է ստորագրել ATOM միջազգային նախագծի կայքում, որի հեղինակն է Ղազախստանի Հանրապետությունը (theatomproject.org): ATOM նախագծի անվանումը կազմված է հետևյալ չորս անգլերեն բառերի առաջին տառերից՝ “Abolish Testing – Our Mission” («Փորձարկումների դադարեցումը մեր առաքելությունն է»): Սա Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևի հերթական նախագիծն է, որն ուղղված է ոչ միջուկային աշխարհի ստեղծմանը: Նախագծի էությունն այն է, որ մեր մոլորակի մարդիկ սկսեն ազդել իրենց իշխանությունների վրա՝ Երկիր մոլորակի վրա բոլոր միջուկային փորձարկումները դադարեցնելու նպատակով:

1991թ. օգոստոսի 29-ին Ղազախստանի նախագահի նախաձեռնությամբ փակվեց Սեմիպալատինսկի միջուկային փորձադաշտը, որտեղ կատարվել է նվազագույնը 468 միջուկային փորձարկում: Վիճակագրություն կա, որի համաձայն՝ ղազախական հողում միջուկային լիցքերի գումարային հզորությունը 2500 անգամ գերազանցում է Հիրոսիմայի վրա նետված ատոմային ռումբի հզորությանը, իսկ Սեմիպալատինսկում պայթյունների գումարային հզորությունը հավասար է 116 «չեռնոբիլի»: Հավանաբար այս սարսափելի թվերը և դրանց հետևանքներն են դրդել Նուրսուլթան Նազարբաևին դառնալու ոչ միջուկային աշխարհի ամենաթունդ պաշտպանը: Հենց նա է նախաձեռնել օգոստոսի 29-ի հռչակումը Միջուկային փորձարկումների դեմ գործողությունների միջազգային օր, ինչը միաձայն ընդունվեց ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 64-րդ նստաշրջանում (2009թ. դեկտեմբերի 2-ի 64/35 բանաձևը): Այդ ժամանակ Հայաստանը ոչ միայն աջակցել է ղազախական նախաձեռնությանը, այլև դարձել «Միջուկային փորձարկումների դեմ գործողությունների միջազգային օր» բանաձևի 26 համահեղինակներից մեկը:

Ի դեպ, Հայաստանը, ինչպես և Ղազախստանը Միջուկային զենքի չտարածման պայմանագրի անդամ (NPT) է, դա ՄԱԿ-ի զինաթափման կոմիտեի կողմից մշակված միջազգային ակտ է, որի նպատակն է ամուր պատնեշ դնել միջուկային զենք ունեցող երկրների շրջանն ընդլայնելու ճանապարհին: Հայաստանը 1996թ.-ին ստորագրել, իսկ 2006-ին վավերացրել է Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման մասին պայմանագիրը:

Այսօր Ղազախստանը շարունակում է կոչ անել այն երկրներին, որոնք կամ չեն վավերացրել, կամ չեն ստորագրել Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման մասին պայմանագիրը, որքան կարելի է շուտ քայլեր անել դեպի ոչ միջուկային աշխարհ: Ղազախստանը մտել է G-8 խմբի երկրների գլոբալ գործընկերություն՝ զանգվածային ոչնչացման զենքի տարածման դեմ: Երկիրը, որը տիրում էր աշխարհում չորրորդ միջուկային զինանոցին և կարող էր մտնել աշխարհի խոշորագույն միջուկային տերությունների շարքը, ոչ միայն կամովին հրաժարվեց դրանից, այլև դարձավ ոչ միջուկային Երկիր մոլորակի ամենաակտիվ ջատագովը: Ղազախստանում որոշում ընդունվեց, որը, ինչպես ասում է Նազարբաևը, համապատասխանում է «երրորդ հազարամյակի բանականությանը և բարոյախոսությանը»: 2012թ. Ղազախստանը հանդես եկավ նոր՝ ATOM նախաձեռնությամբ, որի նպատակն է ոչ միջուկային աշխարհ ցանկացող մոլորակի բնակիչների միավորումը:



«Միջուկային զենքի փորձարկումների սպառնալիքը բոլորիս վրա ազդում է ամեն օր: Դա անցյալի խնդիր չէ: Դա հեռավոր ապագայում մեզ սպասող դատարկ սպառնալիք չէ: Միջուկային զենքի փորձարկումներն իրենց մեջ կրում են սարսափազդու հետևանքներ: Ցավոք, այսօր շարունակում են երեխաներ ծնվել ծանր բնածին արատներով, քանի որ նրանց ընտանիքների անդամները ճառագայթման էին ենթարկվել տարիներ առաջ կատարված միջուկային փորձարկումների արդյունքում: Որքան շատ է աշխարհը հետաձգում Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման պայմանագրի ընդունումը և գործարկումը, այնքան ավելի է մեծանում հավանականությունը, որ մարդկությունը կիմանա, թե ինչ են ռադիոակտիվ տեղումները ոչ թե գրքերից, այլ դրանց ազդեցությունը կզգա իր վրա», ասում են ATOM ծրագրի նախաձեռնողները:

«Գործե՛ք հիմա: Դադարեցրե՛ք միջուկային զենքի փորձարկումները» - սա ATOM ծրագրի լեյտմոտիվն (հիմնական սկզբունք) է, որը ձգտում է նպաստել աշխարհում իրական փոփոխություններին՝ միջուկային զենքի փորձարկումները դադարեցնելու համար քաղաքացիներին միավորելու միջոցով: Գաղափարի հեղինակները կոչ են անում աշխարհի բոլոր քաղաքացիներին միանալ իրենց ձայնին և «Ո՛չ» ասել այն աշխարհին, որտեղ դեռ միջուկային զենք կա: Գաղափարի հեղինակները կոչ են անում մոլորակի բնակիչներին ստեղծել առանց միջուկային սպառնալիքների աշխարհ, առավել անվտանգ և ավելի մարդասեր աշխարհ…



# 2015-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 20-ԱՄՅԱԿԻ ՏԱՐԻՆ Է




2015թ.-ին երկու խորհրդային երկրներ՝ Հայաստանը և Ղազախստանը, նշում են իրենց երկրների հիմնական օրենքի 20-ամյակը: Այս տարեթիվը ոչ միայն որոշակի արդյունքներ ամփոփելու, այլև հետադարձ հայացքով անցած 20 տարիների հաջողություններին ու բացթողումներին նայելու առիթ է: Չէ՞ որ այդ տարիների ընթացքում Հայաստանն ու Ղազախստանը մի քանի անգամ փոփոխություններ են կատարել իրենց սահմանադրություններում: 2015թ. Ղազախստանում ուշի ուշով հետևում էին Հայաստանում սահմանադրական փոփոխությունների քննարկումներին: Եվ չնայած յուրաքանչյուր երկիր ունի զարգացման իր ուղին, սակայն հաշվի առնելով ժամանակակից ինտեգրացիոն գործընթացները՝ այդ երկրներից որևէ մեկում ցանկացած փոփոխություն իր դրոշմն ու ազդեցությունը կունենա մեր երկու երկրների համագործակցության զարգացման վրա: Մանավանդ որ Ղազախստանի ու Հայաստանի համագործակցության հարթակները տարեցտարի ավելանում են:

ՂՀ գործող սահմանադրությունն ընդունվել է 1995թ. համազգային հանրաքվեի արդյունքում: Ընդունմանը նախորդել է սահմանադրության նախագծի լայն քննարկում. եղել է նախագծի ավելի քան 30 հազար կոլեկտիվ քննարկում, որոնց մասնակցել է ավելի քան 3 մլն քաղաքացի: Քննարկումների արդյունքում սահմանադրության նախագծում մտցվել է շուրջ 1100 փոփոխություն: Սահմանադրության մեջ են մտցվել նոր ինստիտուտներ և նորմեր: Հիմնադրվել են երկպալատ խորհրդարան, Սահմանադրական խորհուրդ, ստեղծվել են դատարանների միասնական համակարգ և դրանց ձևավորման կարգ, որն ապահովում է իշխանության դատական ճյուղի անկախությունը:

Խոսելով Ղազախստանի Սահմանադրական խորհրդի միջազգային համագործակցության մասին՝ այդ գերատեսչության անդամ Ամանժոլ Նորմագամբետովը անդրադարձել է Հայաստանի գործընկերների հետ արդյունավետ համագործակցությանը: Նրա կարծիքով Հայաստանի Սահմանադրական դատարանը ամենաբարձրակարգ դատարաններից մեկն է հետխորհրդային տարածքում, եթե չասենք ավելի լայն: ՍԴ ղեկավար Գագիկ Հարությունյանը սահմանադրական վերահսկողության մարմինների ամենահեղինակավոր ղեկավարներից մեկն է ոչ միայն նախկին խորհրդային հանրապետությունների, այլև այլ երկրների մեջ:



Ժողովրդավարական իրավական պետությունը բնութագրվում է զարգացած, բաց տնտեսությամբ. այս նպատակներով է առաջնորդվել Ղազախստանը արդիականացման իր ռազմավարությունում անկախության առաջին փուլում: Այդ ուղենիշը հակիրճ այսպես է ձևակերպել նախագահ Ն.Նազարբաևը. «Սկզբում՝ տնտեսություն, հետո՝ քաղաքականություն»: Այս հանրապետությունը ԽՍՀՄ փլուզումից հետո տնտեսվարման կապերի կտրուկ խզման պայմաններում կարողացավ կառուցել առաջատար ազգային տնտեսություն: 1995թ. սահմանադրության շնորհիվ Ղազախստանը անցավ տնտեսության շուկայական համակարգի՝ այս ուղղությամբ հասնելով զգալի հաջողությունների: Եթե 1993թ. բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմում էր 700 դոլար, ապա 2014թ.՝ արդեն 12 հազար դոլար:

Անկախության տարիներին Ղազախստանի տնտեսություն է ներգրավվել է 150 մլրդ դոլարի օտարերկրյա ներդրում: Ղազախստանի սոցիալական բնույթի մասին սահմանադրական դրույթը դարձել է այն հիմքը, որը օգնեց երկրի տնեսությանը գոյատևել 2008-2009թթ. գլոբալ ֆինանսական ճգնաժամի ժամանակ:

Երկրի տնտեսությունում և միջազգային ասպարեզում ձեռք բերած հաջողությունները հանգեցրին պետության սոցիալ-քաղաքական կառուցվածքը կատարելագործելու անհրաժեշտությանը: 1995թ. երկրի գործող սահմանադրության ընդունման պահից երեք անգամ ուղղումներ և լրացումներ են կատարվել՝ 1998, 2007 և 2011 թվականներին: Դրանց արդյունքում Աստանա նոր քաղաքը հաստատվել է որպես հանրապետության մայրաքաղաք: Ուժեղացվել է խորհրդարանի դերը երկրի քաղաքական կյանքում և բարձրացվել է



նրա երկու պալատների խոսնակների կարգավիճակը, որոնք պետական հիերարխիայում դարձել են վարչապետից բարձր: Նախագահի լիազորությունների ժամկետը դարձել է 5 տարի՝ նախկին 7-ի փոխարեն: Սկսվել է պետության՝ փուլ առ փուլ անցման գործընթացը նախագահական կառավարումից կուսակցական-խորհրդարանական համակարգի:

Հաշվի առնելով Ղազախստանի բազմազգ կազմը՝ կարևոր նորամուծություն էր 2007-ին Ղազախստանի Ժողովրդի ասամբլեային սահմանադրական կարգավիճակ հատկացնելը: Բացի այդ՝ Ասամբլեան իրավունք ստացավ 9 պատգամավոր ընտրել Խորհրդարանի Մաժիլիս ուղարկելու համար, ինչը զգալիորեն բարձրացրեց ՂԺԱ հասարակական-քաղաքական դերը: Երկրի նախագահ Ն.Նազարբաևի հրամանագրով 2015-ը հայտարարվել է Ղազախստանի Ժողովրդի ասամբլեայի տարի:

Մասնագետների գնահատմամբ Ղազախստանի սահմանադրությունը շատ հաջող է ինչպես ժամանակակից փուլում սահմանադրական-իրավական դաշտի կարգավորման, այնպես էլ հիմնական օրենքի անխափան գործունեության համար մեխանիզմների ապահովման տեսանկյունից: Ինչպես նշել է երկրի նախագահը, կարևոր է հիմնական օրենքի էներգիան վերածել գործնական որոշումների ուժի՝ Ղազախստանի առաջընթացն ապահովող նոր օրենքների և իրավական նորմերի:



***Ամանժոլ Նուրմագամբետով***
*ՂՀ Սահմանադրական խորհրդի անդամ*

# 20 ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՂԱԶԱԽՍՏԱՆՈՒՄ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ ՉԵՆ ԵՂԵԼ

***- 2015 թվականը Ղազախստանի Հանրապետության սահմանադրության 20-ամյակի տարին է: Պատմե՛ք, խնդրեմ, հիմնական օրենքի նշանակության մասին անկախ Ղազախստանի զարգացման գործում:***

- Նախ կցանկանայի անդրադառնալ Ղազախստանի սահմանադրական զարգացման պատմությանը: Այն անցել է զարգացման նույն փուլերը, ինչ որ Հայաստանը: Խորհրդային Միության փլուզումից առաջ և անկախության առաջին տարիներին մեզ մոտ գործում էր նախկին սահմանադրությունը: Այն նորացվել էր 1989-1990թթ.: 1990թ. ապրիլի 24-ին Ղազախստանում ներմուծվեց նախագահի պաշտոնը: Նույն տարվա դեկտեմբերին համաժողովրդական քվեարկությամբ ընտրվեց ՂՀ նախագահ: Չնայած այդ տարիներին գործում էր Ղազախական ԽՍՀ սահմանադրությունը, սակայն ընթանում էին նաև նոր սահմանադրություն ընդունելու աշխատանքները, քանի որ արմատապես փոխվում էր պետական կառուցվածքը, երկրում տնտեսական իրավիճակը:

1993թ. հունվարի 28-ին ընդունվում է անկախ Ղազախստանի առաջին սահմանադրությունը: Այն ժամանակ ես սահմանադրական հանձնաժողովում էի, մասնակցում էի հիմնական օրենքի մշակման աշխատանքներին և պետք է ասեմ, որ այն ժամանակ արդեն կար դրա ժամանակավոր լինելու զգացումը: Բանն այն է, որ ՂՀ 13-րդ գումարման Գերագույն խորհուրդը կիսապրոֆեսիոնալ էր, և դա էլ կարծես այլընտրանքային սահմանադրություն էր: Նույնիսկ դրա գործունեության սկզբից արդեն զգացվում էր ոչ օպերատիվությունը, այն չէր համապատասխանում այդ ժամանակ գոյություն ունեցող պահանջներին: 1995թ. մարտին կայանում են Գերագույն Խորհրդի 14-րդ գումարման ընտրությունները, որոնք ոչ լեգիտիմ են ճանաչվում Սահմանադրական դատարանի որոշմամբ: Որոշում է ընդունվում մշակել նոր սահմանադրություն: 1995թ. օգոստոսի 30-ին համաժողովրդական հանրաքվեի արդյունքում ընդունվում է ՂՀ Սահմանադրությունը: Դա հուլիսի 5-ին Հայաստանի Սահմանադրության ընդունումից մոտ երկու ամիս հետո էր:

Եվ արդեն 20 տարի Ղազախստանում գործում է այդ Սահմանադրությունը: Այն մշակվել է պետության ղեկավարի ղեկավարությամբ, հանրապետության խոշորագույն գիտնականների, առաջատար քաղաքական կուսակցությունների, օտարերկրյա մասնագետների (օրինակ՝ Ֆրանսիայից) մասնակցությամբ: Սահմանադրությունը շատ հաջող ստացվեց ժամանակակից փուլում սահմանադրաիրավական դաշտը կանոնակարգելու տեսանկյունից:

Սահմանադրության 1-ին հոդվածը ճանաչում է Ղազախստանի Հանրապետությունը՝ որպես ժողովրդավարական, աշխարհիկ, իրավական, սոցիալական պետություն, մարդը նրա հիմնական արժեքն է և այլն: Կա իշխանության ճյուղերի հստակ բաժանում օրենսդրականի, գործադիրի և դատականի: Գրված է, որ մեր պետությունը միասնական է, նախագահը իշխանության ոչ մի ճյուղի մեջ չի մտնում, նա կանգնած է նրանցից վեր և կոորդինացնում է նրանց գործունեությունը: Գրված են նաև իշխանության բոլոր ճյուղերի լիազորությունները, իրավասությունները, որպեսզի նրանք կարողանան համաձայնեցված աշխատել, առանց հակասությունների, ինչը կարող է ճգնաժամի հանգեցնել: Բարեբախտաբար, հիմնականում և՛ երկրի ղեկավարի, և՛ Սահմանադրության շնորհիվ, այս 20 տարում մեզ մոտ ոչ մի ճգնաժամային երևույթ չի եղել՝ ո՛չ քաղաքական, ո՛չ էլ այլ ոլորտներում:

Շատ ուժեղ է ՂՀ Սահմանադրության 2-րդ բաժինը՝ «Մարդը և քաղաքացին»: 1998, 2007 և 2011 թվականներին մեր Սահմանադրության մեջ փոփոխություններ են կատարվել, սակայն դրանք կոնցեպտուալ չեն և այս բաժնին չեն առնչվել:

Կատարված փոփոխությունները հիմնականում առնչվում էին պառլամենտարիզմին, ընտրական օրենսդրության, պետության ղեկավարի լիազորությունների մի մասը խորհրդարանին փոխանցելուն (այդ գործընթացն արդեն մշտապես ընթանում է): 2007թ. փոխվեց պետության ղեկավարի լիազորությունների ժամկետը. այն երկարացվեց մինչև 7 տարի: Ներկա պահին այդ ժամկետը 5 տարի է, սակայն այն չի տարածվում առաջին նախագահի վրա:

***- Մենք գտնվում ենք Սահմանադրական Խորհրդում, որը ստեղծվել է ՂՀ Սահմանադրական դատարանի բազայի վրա: Ինչո՞վ են տարբերվում այս երկու կառույցները, որո՞նք են Սահմանադրական Խորհրդի հիմնական գործառույթները:***

- Սահմանադրական դատարանը ստեղծվեց մեր անկախության երկրորդ տարում, 1992թ. հուլիսի 2-ին ընդունվեց օրենք «ՂՀ Սահմանադրական դատարանի մասին» և օրենք «ՂՀ Սահմանադրական իրավական վարույթի մասին»: Դրանից առաջ փորձ արվեց ստեղծել սահմանադրական հսկողության մարմին, սակայն դա այդպես էլ մնաց այդ փուլում: Իսկ ՍԴ-ն ուներ մեծ լիազորություններ: Օրինակ՝ ՍԴ դատավորը ինքը կարող էր սահմանադրական գործ հարուցել, պատրաստել և հարցը դնել քննարկման: Սակայն այդ իրավունքը հանվեց: Բացի այդ՝ քննարկվում էին նաև քաղաքացիների անհատական բողոքները: Շատ ՍԴ-ներում դա չկա (Գերմանիայում չկար, հետո այդ հնարավորությունը տրվեց, ՌԴ-ում մինչև հիմա գոյություն ունի): Սակայն հասարակությունը մեղադրում էր ՍԴ-ին պոպուլիզմի, իշխանության դատական ճյուղի գործունեությանը միջամտելու մեջ: Այնուամենայնիվ, ՍԴ-ն աշխատեց 3 տարի, և 1995թ. սահմանադրության մշակման ժամանակ կար երկու տարբերակ՝ ՍԴ և Սահմանադրական Խորհուրդ:

Հաշվի առնելով այն, որ մեր Սահմանադրության մեջ դրված են Ֆրանսիայի սահմանադրության հիմունքները՝ որոշում կայացվեց այստեղ ստեղծել Սահմանադրական խորհուրդ լայն լիազորություններով: Այն համապատասխանում է մեր հանրապետությունում ձևավորված իրողություններին և բավարար մակարդակով ապահովում է սահմանադրական վերահսկողությունը Ղազախստանի Հանրապետությունում: Մեզ դիմող սուբյեկտները հստակ սահմանափակված են. դա պետության ղեկավարն է, խորհրդարանի երկու պալատների նախագահները, երկու պալատների պատգամավորների մի մասը, վարչապետը և դատարանները:

Հաջորդ սահմանադրական փոփոխությունը եղավ սահմանադրական հսկողության մարմնի փոխարինումը: Այժմ Սահմանադրական դատարանի փոխարեն Ղազախստանում գործում է 7 անդամից բաղկացած Սահմանադրական խորհուրդ:

Սահմանադրական խորհրդում գործում է նախնական վերահսկողություն, մինչև նախագահի կողմից ստորագրելը, այսինքն՝ ենթադրենք՝ խորհրդարանն օրենք է ընդունել, ուղարկել նախագահին ստորագրելու, բայց միևնույն ժամանակ Սենատի և Մաժիլիսի նախագահները մեզ են դիմում սահմանադրական տեսանկյունից օրենքը ստուգելու: Սրան են վերաբերում նաև նախագահի հրամանագրերը, խորհրդարանի, օրենքները, սահմանադրության մեկնաբանությունները, այնպես որ մեր գործունեության դաշտը շատ լայն է:

***- Իսկ կապեր կա՞ն Հայաստանի Սահմանադրական դատարանի հետ:***

- Հայաստանի Սահմանադրական դատարանը ես համարում եմ ամենաորակյալ դատարաններից մեկը հետխորհրդային տարածքում, եթե չասենք ավելին: Նրա նախագահը սահմանադրական վերահսկողության մարմինների հեղինակավոր ղեկավարներից է ոչ միայն նախկին խորհրդային հանրապետությունների, այլև այլ երկրների մեջ: Չէ՞ որ պարոն Հարությունյանը Վենետիկի հանձնաժողովի ղեկավար մարմնի անդամ է, նրան շատ բարձր են գնահատում: Ի դեպ, «Սահմանադրական արդարություն» մեր ղազախստանյան ամսագիրը հրատարակվում է Հայաստանում: Այնպես որ մենք ունենք անընդհատ շփումներ, փոխայցելություններ, կարծիքների փոխանակում, համագործակցություն:

***- Առնչվո՞ւմ է արդյոք «100 քայլ» ծրագիրը սահմանադրական փոփոխություններին, Ղազախստանի սահմանադրությանը:***

- Նախագահ Նազարբաևը խոսում էր նախատեսվող քաղաքական բարեփոխումների, օրենսդրական և գործադիր իշխանությունների լիազորությունների վերանայման մասին (նախագահի լիազորությունների մի մասի փոխանցումը օրենսդիր իշխանությանը), սակայն դա այժմ քննարկման փուլում է: «100 քայլ ապագայի համար» ռազմավարական ծրագրում հատուկ տեղ է հատկացվում մարդու իրավունքների սահմանադրական ապահովմանը և նրան պաշտպանելու մեխանիզմներին:

# «100 ՔԱՅԼ»՝ ՎՍՏԱՀ ՀԱՅՏ ԴԵՊԻ ԱՊԱԳԱ

2015թ. մայիսի 6-ին՝ ապրիլի 26-ի արտահերթ նախագահական ընտրություններում հաղթանակից հետո, Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևը նոր ռազմավարական ծրագիր առաջադրեց՝ «100 կոնկրետ քայլ. ժամանակակից պետություն բոլորի համար», որը ներկայացվեց Ղազախստանի նախագահին կից նոր ձևավորված Արդիականացման ազգային հանձնաժողովի առաջին նիստին: Այս ծրագրի նպատակներն են՝ «5 ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացում և հասարակության ու պետության հետագա զարգացում»: Այդ 5 բարեփոխումները հետևյալն են՝ ժամանակակից պետական ապարատի ձևավորում, օրենքի գերակայության ապահովում, ինդուստրալացում և տնտեսական աճ, միասնական ապագայի ազգ, թափանցիկ հաշվետու պետություն: Այս ծրագիրը նախատեսվում է իրականացնել 10-15 տարվա ընթացքում:

Աստանայի 7-րդ տնտեսական փորումին, որը սկսվեց «100 քայլ» ծրագրի հրապարակումից երկու օր անց, նախագահ Նազարբաևն իր ծրագիրն անվանեց «հոյակապ ծրագիր», իսկ ՌԴ Կենտրոնական բանկի նախագահ Գերման Գրեֆը նույնիսկ խոստովանեց, որ այս փաստաթուղթը կարդալով՝ «մշակութային շոկ» է ապրել: Նա կարծում է, որ «այն հիշեցնում է Սինգապուրի կառավարության ծրագիրը, և Եվրոպայի շատ երկրներ կնախանձեին դրան» և գնահատել է այն որպես այնպիսի ծրագիր, որ «Ռուսաստանին անհրաժեշտ է ընդունել»:

Ծրագրի ներածական մասում, որն արդեն անվանել են «Ազգի ծրագիր», նշվում է, որ «100 կոնկրետ քայլ»-ը պատասխան է գլոբալ ներքին մարտահրավերներին և երկրի՝ զարգացած պետությունների 30-յակի մեջ մտնելու ծրագրին: Այս ծրագրում Ղազախստանի նախագահը խոստանում է երկիրը վերածել համաշխարհային ձգողականության կենտրոնի, որում կլինի թափանցիկ կառավարություն, «ազնիվ» դատական համակարգ և համաշխարհային ֆինանսական կենտրոն՝ AIFC - Աստանայի միջազգային ֆինանսական կենտրոն ASTANAEXPO-2017-ի ենթակառուցվածքի բազայի վրա՝ տալով նրան հատուկ կարգավիճակ՝ անգլիական իրավունքի սկզբունքներով գործող անկախ դատական համակարգով: Ալմաթիից Աստանա կտեղափոխվեն Ազգային բանկը և Տարածաշրջանային ֆինանսային կենտրոնը:

Բարեփոխումների իրականացման ընթացքում ենթադրվում է ներգրավել նվազագույնը 10 տրանսազգային կորպորացիաների՝ Ղազախստանի վերամշակող ոլորտում արտահանման համար ապրանքներ ստեղծելու համար: Մոտ ապագայում երկիրը կվերածվի ներդրողների համար առավելագույնս գրավիչ մի վայրի, կստանա ժամանակակից արդյունաբերական, այլ ոչ թե հումքային պետության կարգավիճակ: Ի դեպ, փորձագետները համարում են, որ Ղազախստանում արդեն այսօր է ստեղծված բավականին գրավիչ ներդրումային կլիմա ողջ Կենտրոնական Ասիայի մասշտաբով:



«100 քայլ» ռազմավարությունը Ղազախստանի քայլ առ քայլ մուտքն է հաղորդակցությունների համաշխարհային համակարգ, կառավարության արդիականացում լավ կադրերի ներգրավման միջոցով, այդ թվում՝ օտարերկրյա, արդարադատության համակարգի բարեփոխում, տնտեսության մեջ փոփոխությունների անցկացում, նոր ղազախստանյան ինքնության կառուցում և վերջապես անցում դեպի կառավարման նախագահական-խորհրդարանային ձևի:

Ինչպես ասում է «Ունիվերսիադա-2017» գործադիր տնօրեն Իլյա Ուրազակովը, փորձագետները՝ առաջին հերթին բիզնես ոլորտից, «100 քայլ» ծրագիրն անվանում են «Ղազախստան-2050» գլխավոր ծրագրի իսկական կոնկրետացում: «Պետության ղեկավարը՝ որպես գրագետ մենեջեր, վերջնականապես, հստակ և մանրամասն նկարագրել է, թե ինչ է հարկավոր անել այդ նպատակին հասնելու համար: Կառավարությունը կոնկրետ քայլեր է նշել, դրանց ժամկետները, առաջնահերթությունը և հաջորդականությունը»:

Փորձագետների կարծիքով՝ «Ազգի ծրագրում» քաղաքական բարեփոխումները գծագրված են «Մանգիլիկ Ել» (Հավերժական երկիր) ուսմունքում, իսկ Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի «Մեծ երկիր՝ մեծ ընտանիք» ծրագիրը կկատարելագործի քաղաքացիական հասարակությունը: Ղազախստանը միտված է ինքնուրույն եվրասիական համաշխարհային ֆինանսային, տրանսպորտային և կրթական կենտրոն դառնալուն՝ ընդգծելով համագործակցությունը արևմտյան վեկտորով, ինչպես նաև գործընկերությունը Չինաստանի հետ, Ղազախստանը բազմամոդել տրանսպորտային Ասիա-Եվրոպա միջանցքի վերածելու միջոցով:

ՂՀ խորհրդարանի Սենատի 4-5 գումարումների պատգամավոր Անատոլի Բաշմակովը նշում է, որ «100 քայլ» ծրագիրը հինգ ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման մի գործիք է, մեխանիզմ: «Եթե մտնենք դրանց բովանդակային դաշտը, ապա դրանք հասարակության, կառավարության, յուրա-

քանչյուրիս առջև կանգնած համալիր խնդիրներ են: Նախևառաջ դրանք արդյունավետ տնեսության, արդյունավետ պետական կառավարման և մարդկանց ընտրելու հարցեր են, մարդկանց և՛ մասնագիտական պատրաստվածության, և՛ մարդկային չափողականության տեսակետից: Տնտեսություն լինել չի կարող, եթե այն կառավարում են ոչ պարկեշտ մարդիկ: Այժմ մեր խնդիրն է, որպեսզի յուրաքանչյուր ղազախստանցի, իսկ նրանք 17,5մլն են, այդ «100 քայլն» իր սրտի միջով անցկացնի», - ասում է Բաշմակովը:

Վերջին 25 տարում Ղազախստանը լուրջ հաջողություններ է ցուցադրել տնտեսության զարգացման և քաղաքացիների կյանքի որակի բարելավման հարցում: «100 քայլ» ծրագրում ասվում է, որ Ղազախստանի առաջ մեծ խնդիրներ են ծառացած՝ առողջապահության բարելավում, կրթական համակարգի բարելավում, մատչելի բնակարանային պայմաններով ղազախստանցիների ապահովում: Չէ՞ որ ոչ մի տնտեսական բարեփոխում հնարավոր չէ չլուծված սոցիալական հարցերի առկայության դեպքում:

Եվ, ի դեպ, Ղազախստանում անկախության 23 տարիների ընթացքում ազգամիջյան և միջդավանային ոչ մի հակամարտություն չի եղել, չնայած որ ղազախական հողում ապրում են ավելի քան 130 ազգերի և ազգությունների ներկայացուցիչներ: Ինչպես նշում է ղազախստանյան պետության ղեկավարը, «Երկրի արդիականացման «100 քայլ» ծրագիրը մեր վստահ հայտն է դեպի ապագա»:




# ԳԼՈՒԽ 2

## ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՍԱՄԲԼԵԱՆ 20 ՏԱՐԵԿԱՆ Է

# ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՍԱՄԲԼԵԱՆ 20 ՏԱՐԵԿԱՆ Է

Ղազախստանում մի յուրահատուկ ինստիտուտ կա, որը կոչվում է Ղազախստանի ժողովրդի ասամբլեա (ՂԺԱ): 1992թ. գումարվեց Ղազախստանի ժողովրդի առաջին համաժողովը, որի ժամանակ ՂՀ նախագահ Նուրսուլթան Նազարբաևը մի որևէ մարմին ձևավորելու մասին գաղափար արտահայտեց, որը կապահովեր ժողովրդի միասնություն և համազգային համաձայնություն: Եվ ահա այդպիսի մարմին է ստեղծվում 1995թ. մարտի 1-ին, որի մեջ մտնում են Ղազախստանում բնակվող բոլոր 130 ազգերի ու ազգությունների ներկայացուցիչները:

«Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի ստեղծման սկզբունքի հիմքում ընկած էր այն, որ Ղազախստանում բնակվող յուրաքանչյուր էթնիկ խումբ վերադառնա սեփական արժատներին: Նրանց առջև նպատակ դրվեց և օրենսդրորեն հնարավորություն տրվեց ուսումնասիրելու սեփական մշակույթը, պատմությունը և լեզուն», - նշում է Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի Քարտուղարության սեկտորի վարիչ Նազիպա Շանային:

Ղազախստանում բոլոր էթնոսները հավասար են, նրանք չեն կոչվում «ազգային փոքրամասնություն», այլ միասին կազմում են Ղազախստանի ժողովուրդ: Ուստի եթե սկզբնական շրջանում այդ կազմակերպությունը կոչվում էր «Ղազախստանի ժողովուրդների ասամբլեա», ապա 2007-ին այն վերանվան-





վեց «Ղազախստանի ժողովրդի ասամբլեա»-ի, և այսօր այն ներկայացնում է բոլոր՝ 17,5 մլն ղազախստանցիների շահերը:

Սկզբում այս ինստիտուտը ձևավորվում էր որպես խորհրդատվական-խորհրդակցական մարմին՝ ղազախստանյան պետության ղեկավարին կից, իսկ այժմ այն ունի սահմանադրական կարգավիճակ: ՂԺԱ-ն ունի 9 պատգամավոր, որոնց հենց Ասամբլեան է առաջադրում խորհրդարան, և որոնք Մաժիլիսում ներկայացնում են ողջ Ասամբլեան: Սա, ինչպես շեշտում են ՂԺԱ անդամները, այս կառույցի վրա բազմահանդուրժողականության գործառույթ ավելի շատ է դնում:

2009-ից ամեն տարի ազգային-մշակութային միավորումներից ընտրվում են Ասամբլեայի նախագահի երկու տեղակալներ տարեկան ռոտացիայի հիման վրա, որպեսզի Ղազախստանի բոլոր էթնիկ խմբերը լինեն Ասամբլեայի ղեկավար կազմում և զգան նրա աշխատանքի պատասխանատվության ու կարևորության աստիճանը:

Այսօր Ասամբլեան միջէթնիկական հարաբերությունների պետական ազգային քաղաքականության իրականացման գործուն գործիք է:

«Ասամբլեայի հաջողության գաղտնիքն այն է, որ այդ ինստիտուտը ղեկավարում է հենց պետության ղեկավարը, - պատմում է ՂԺԱ Քարտուղարության պետ Լեոնիդ Պրոկոպենկոն: - Դեռ անկախության սկզբում առաջատար արևմտյան փորձագետները՝ մասնավորապես Զբիգնև Բժեզինսկին, ասում էին, թե Ղազախստանը միջինասիական Բալկաններ է, որն անխուսափելիորեն կմասնատվի ազգային-կրոնական հողի վրա: Սակայն այդպիսի բան տեղի չունեցավ, քանի որ հենց սկզբից ղազախստանյան պետության ղեկավարը լրջորեն զբաղվել է այս հարցով»:

Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի նստաշրջանը ՂՀ նախագահի մասնակցությամբ անցկացվում է Խաղաղության և համաձայնության պալատում:



Այս շենքում, որը կառուցված է բուրգի տեսքով, աշխատում են Աստանա քաղաքի ազգային-մշակութային կենտրոնները, Մշակույթների և կրոնների միջազգային կենտրոնը և Թյուրքական աշխարհի ակադեմիան: Ազգային-մշակութային կենտրոնները գտնվում են բուրգի չորրորդ հարկում, այնտեղ շուրջ 100 գրասենյակ կա: Նրանք աշխատում են շաբաթը 5 օր:

Ասամբլեայի Խորհրդի մեջ են մտնում բոլոր ազգային-մշակութային միավորումների ներկայացուցիչները, որոնք ստեղծել են հանրապետական ասոցիացիաներ: Դրանք այժմ 28-ն են: Ասամբլեային կից գործում է Գիտական-փորձագիտական հանձնաժողով, որը զբաղվում է Ղազախստանում ողջ էթնոմշակութային քաղաքականության գիտական, մեթոդոլոգիական ապահովմամբ: Նրա մեջ են մտնում երկրի գիտնականների, քաղաքագետների, մշակութաբանների, ազգագրագետների ամենալավ մասնագետները: Հանձնաժողովն աշխատում է այն բանի վրա, որպեսզի ճիշտ կիրառվեն տերմինները, ստեղծում է մեթոդական ցուցումներ, մշակումներ: «Օրինակ, երբ դուք ասում եք «Ղազախստանի հայկական համայնք», դա նորմալ է,- բացատրում է Նազիպա Շանային հայկական «Արմեդիա» տեղեկատվական-վերլուծական գործակալության լրագրողներին,- սակայն Ղազախստանի համար դա սփյուռք չէ, նրանք մեր քաղաքացիներն են, դա մի էթնիկ խումբ է, որը գտնվում է Ղազախստանի ժողովրդի կազմում»:

Ասամբլեային կից աշխատում է նաև միջէթնիկական հարցեր լուսաբանող Լրագրողների ակումբը: Այս Ակումբի աշխատանքի արդյունքը դարձավ այն, որ այսօր արդեն քրեական լուրերում ազգությունը չի նշվում:

Մեկուկես տարի առաջ Աստանայի Եվրասիական համալսարանում ստեղծվեց ՂԺԱ առաջին ամբիոնը: Այժմ արդեն Ղազախստանի 12 համալսարաններում կան նման ամբիոններ, շուտով կբացվեն ևս երեքը: Այս ամբիոնները երեք խնդիր են կատարում՝ գաղափարական-քաղաքական դաստիարակություն, գիտական ապահովում և ուսումնական ծրագիր:

Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի մասնակցությամբ հրատարակվում են թերթեր ու ամսագրեր 15 լեզուներով, և հեռարձակվում են ռադիո- և հեռուստահաղորդումներ 11 լեզուներով: Երկրում գործում է ավելի քան 100 ազգային դպրոց, 170 կիրակնօրյա դպրոց, որտեղ սովորում են 23 մայրենի լեզու: Ազգային վերածննդի երեք դպրոցներում աշխատում է 12 մայրենի լեզու ուսումնասիրող 29 բաժին: Կա 4 ազգային թատրոն՝ կորեական, ույղուրական, գերմանական և ուզբեկական, 14 մարզերում կա 14 ռուսական թատրոն: Ղազախստանի նախագահի հանձնարարությամբ երկրում ստեղծվել է «Ազգերի թատրոն»՝ անտրեպրիզի թատրոն, որի կազմն անընդհատ փոխվում է, և այն էթնիկ խմբերը, որոնք դեռ իրենց սեփական թատրոնը չունեն, ներկայացում բեմադրելու և ելույթ ունենալու յուրահատուկ հնարավորություն են ստանում: Գործում են 350 ազգային-մշակութային կենտրոններ, կա 35 էթնիկական լրատվամիջոց:

Հենց Ղազախստանի ժողովրդի ասամբլեան է 1995թ. նախաձեռնել նոր սահմանադրություն ընդունելու համաժողովրդական հանրաքվեն: Այսինքն՝

Ասամբլեան իր էությամբ ցանկացած հակամարտություն հենց արմատից հանելու և դրա կարգավորման արդյունավետ գործիք է: Բացի այդ՝ նորից ՂԺԱ-ից է եկել 2015թ. ապրիլին արտահերթ նախագահական ընտրություններ անցկացնելու մասին համաժողովրդական հանրաքվեի գաղափարը:

ՂԺԱ-ն նաև իսկայական բացատրական աշխատանք է տարել լեզվական քաղաքականության առնչությամբ, որպեսզի բոլորը հասկանան պետական լեզվի՝ որպես ժողովրդի միասնականության դերն ու նշանակությունը: Ղազախստանյան հասարակության մեջ կային տարաբնույթ կարծրատիպեր, երբ ասում էին, թե պետական լեզվի տարածումը կապված է այլ լեզուների ոտնահարման հետ, և դա հակամարտությունների համար առիթ էր: Ի դեպ, 2006թ. ԵԱՀԿ էթնիկ փոքրամասնությունների հարցերով բարձրագույն հանձնակատարը Ղազախստանում լեզվական քաղաքականության ուսումնասիրություն էր կատարում, և այս երկիրը ճանաչվել է հետխորհրդային տարածքում ամենալիբերալը: Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի 12-րդ նստաշրջանի ժամանակ բարձրացվում է կիրիլիցայից լատինատառի անցնելու հարցը: Նախատեսվում է լատինատառի փուլառփուլ ներմուծում առաջին դասարանից:

2013թ. ապրիլին տեղի է ունենում ՂԺԱ հոբելյանական՝ 20-րդ նստաշրջանը՝ «Մեկ ժողովուրդ, մեկ երկիր, մեկ ճակատագիր» անվանումով: «Մեկ ժողովուրդ», այսինքն՝ բոլորի համար միասնական ազգային շահեր: «Մեկ երկիր», այսինքն՝ բոլորի համար միասնական Հայրենիք: «Մեկ ճակատագիր», այսինքն՝ դժվարություններ ու հաղթանակներ, որ միասին անցել են: Իսկ հոբելյանական նստաշրջանի նախօրեին նախագահը ստորագրեց ՂԺԱ զարգացման հայեցակարգը մինչև 2020թ.-ը: Խոսելով «Ղազախստան-2050» ռազմավարության իրականացման մեջ ՂԺԱ դերի մասին՝ ՂՀ նախագահն այն համոզմունքն է հայտնել, որ մինչև 2050թ. Ղազախստանը կլինի մեկ միասնական ամրակուռ ժողովուրդ, օրինակելի ազգային պետություն:

Ինչպես իր ելույթում նշել է նախագահ Ն.Նազարբաևը, Ասամբլեան անցել է մեծ էվոլյուցիոն ուղի՝ հասնելով չափահասության, դառնալով ազգի կարևորագույն համաքաղաքացիական ինստիտուտը: Ղազախստանը դարձել է էթնիկ հակամարտություններից ազատ տարածք: Միջէթնիկական հանգստության և ներդաշնակության շնորհիվ երկրում հաջողությամբ իրականացվել են տնտեսական և սոցիալ-քաղաքական բարեփոխումներ:

2015թ. մայիսին ՂՀ նախագահը ներկայացնում է «100 քայլ» ծրագիրը, որի նպատակն է հինգ ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումը: Այնտեղ կան նաև «Մանգիլիկ Ել» (Հավերժական երկիր) գաղափարը, ՂԺԱ-ի «Մեծ երկիր՝ մեծ ընտանիք» նախագիծը:

Իսկ վերջերս կայացել է ՂԺԱ 22-րդ նստաշրջանը, որի ժամանակ նախագահ Նազարբաևն առաջարկել է Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի կազմավորման օրը՝ մարտի 1-ը, ամեն տարի նշել որպես «երախտագիտության օր թե՛ բոլոր էթնոսների՝ միմյանց նկատմամբ, թե՛ այն ղազախների նկատմամբ, ովքեր գթասրտություն են ցուցաբերել և ընդունել այդ մարդկանց որպես հարազատների: Դա ավելի է մեզ իրար մոտեցրել: Այս օրը կարող է դառնալ բոլոր



ղազախստանցիների՝ միմյանց նկատմամբ գթասրտության, բարեկամության և սիրո մի վառ տոն»:

Անկախության տարիների ընթացքում Ղազախստանի Հանրապետությունը մշակել է միջէթնիկական միասնության սեփական առանձնահատուկ մոդելը և կարողացել է հասարակության բազմաբնույթ էությունն ի օգուտ իրեն դարձնել՝ տարածաշրջանային և դավանանքային, սոցիալական և մշակութային, լեզվական և էթնիկական հակասությունների ֆոնին:

Միջէթնիկական հանդուրժողականության և հասարակական համաձայնության ոլորտում Ղազախստանի մոդելն արդեն հայտնի է աշխարհի տարբեր երկրներում: 15 պետություններ ուղարկել են իրենց ներկայացուցիչներին՝ ղազախստանյան փորձն ուսումնասիրելու համար: Փաստորեն, այսօր կարելի է ասել, որ Ղազախստանի ժողովրդի ասամբլեան հաջողակ երկրի բազմալեզու «այցեքարտն» է:



***Կազբեկ Մանսուրով***
*Ալմաթիի Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի փոխնախագահ*

# «ԿԱ ՄԻ ԳԼԽԱՎՈՐ ԳԱՂԱՓԱՐ՝ ՄԵՆՔ ԲՈԼՈՐՍ ՄԻԱՆՄԱՆ ԵՆՔ»

***- 2015-ը Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի տարին է: Հայաստանում շատ ենք լսում, թե Ղազախստանում ինչպես են խաղաղ գոյատևում 130 ազգերի ու ազգությունների ներկայացուցիչները: Ասացե՛ք, խնդրեմ, դա ձեզ ինչպե՞ս է հաջողվում:***

- Սկսենք 1927 թվից: Վեռնի քաղաքում (այդ ժամանակ մեր քաղաքն այդպես էր կոչվում, հետո՝ Ալմա Աթա, իսկ այժմ՝ Ալմաթի) բնակվում էր 40 ազգություն: Հետո նրանք դարձան մոտ 70, իսկ 1991թ. քաղաքում արդեն 120 էթնիկ խումբ կար: Վերջերս իր ելույթի ժամանակ Ղազախստանի նախագահը նշեց, որ երկրում բնակվում է արդեն մոտ 140 էթնիկ խումբ: Չնայած այդ ժողովուրդները տարբեր թվաքանակ ունեն, բայց այնուամենայնիվ նրանք մեկ ժողովուրդ են: Ղազախստանի բնակչության ընդհանուր թիվը կազմում է 17,8 մլն, որից էթնիկ խմբերի ընդհանուր թիվը 10 մլն է: Կա մի գլխավոր գաղափար՝ մենք բոլորս միանման ենք, կենսաբանորեն մենք միանման մարդիկ ենք, սակայն ունենք տարբեր պատմություն, տարբեր մշակույթ, տարբեր ավանդույթներ: Ընդ որում յուրաքանչյուրը, անկախ ազգությունից, ռասայից, դավանանքից, պատասխանատու է սեփական ժողովրդի և սեփական պետության առաջ:

Ալմաթի քաղաքում այժմ բնակվում է 1,5 մլն մարդ: Դա կարևոր քաղաք է Ղազախստանի զարգացման պատմության մեջ, քանի որ այն և՛ արդյունաբերական, և՛ գիտական, և՛ մշակութային, և՛ սպորտային քաղաք է, հենց այստեղ են ձևավորվում շատ գաղափարներ: Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի շնորհիվ առաջ քաշվեց ՂՀ-ում արտահերթ նախագահական ընտրությունների գաղափարը: Այն հավանություն ստացավ զանազան միջոցառումներում, և բառացիորեն բնակչության համարյա 100%-ը, որը կարող է քվեարկել, եկավ և քվեարկեց մեր իմաստուն նախագահ Նուրսուլթան Նազարբաևի թեկնածության օգտին: Սա նույնպես ասում է, այն մասին, որ, այո՛, կա քաղաքականություն, կա տնտեսություն, որոնք օգնում են պայմաններ ստեղծել մեր պետության զարգացման ու ծաղկման համար: Չեմ սխալվի, եթե ասեմ, որ դա նաև այն բանի շնորհիվ է, որ Ղազախստանի տարածք էին տեղափոխել վերաբնակներ Խորհրդային Միության տարբեր ծայրերից:

Իրենց բնույթով ղազախները հյուրընկալ ժողովուրդ են: Նրանք այդ մարդկանց ընդունեցին, տեղավորեցին, կերակրեցին, ինչով կարող էին, կիսվեցին: Ահա սա էլ այն բանի հիմքն է, որ այսօր կա: Շատ հաճախ իր քաղաքական ելույթներում պետության ղեկավարը խոսում է այն մասին, որ մեզ հարկավոր չէ ո՛չ շովինիզմ, ո՛չ տեղական ազգայնականություն, քանի որ երկուսն էլ խանգարում են: Բոլորը հավասար են հասարակության, պետության, ժողովրդի առջև:

Եվ կա մի ասույթ, որը ես հաճախ եմ կրկնում.

Ժողովուրդները ոսկի են, ահա՛ սրբազան ճշմարտությունը,

և՛ փոքրերը, և՛ մեծերը, եթե վերցնենք որպես օրինակ,

ապա մեկը ոսկու հատիկ է,

իսկ մյուսն իր չափով հանքաքար է:



***Անատոլի Բաշմակով***
*Ղազախստանի խորհրդարանի Սենատի 4-5 գումարումների պատգամավոր, Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի Խորհրդի անդամ*

# «ԱՇԽԱՐՀԸ ԿՓՐԿԻ ՀՈԳՈՒ ԷԿՈԼՈԳԻԱՆ»

***- 2015թ. նշվում է Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի 20-ամյակը: Պատմե՛ք, խնդրեմ, այդ կառույցի նշանակության մասին, ինչքանո՞վ է այն նպաստում Ղազախստանի տարածքում բնակվող ավելի քան 130 ազգությունների համատեղ գոյակցությանը:***

- 2015թ. մարտի 1-ին լրացավ Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի ստեղծման 20 տարին: Այն երևի թե աշխարհում միակ ինստիտուտն է (պետությունից վեր կանգնած, համաժողովրդական), որի մեջ են մտնում մեր երկրում ապրող 130 մշակույթների, էթնոսների, ազգությունների ներկայացուցիչները: Առաջին անգամ մեր նախագահը խոսեց այսպիսի մի գործիքի մասին, որը կարողանար ազդել Ղազախստանի արտաքին քաղաքականության, առաջին հերթին՝ էթնիկ հանդուրժողականության, ազգամիջյան հարաբերությունների մշակույթի վրա, 1991թ. վերջին՝ հենց Ղազախստանի անկախության հռչակումից հետո: Այդ ժամանակ կենտրոնախույս ուժերն արդեն կարող էին իրենց խիստ բացասական դերը խաղալ, արդեն սկսվել էր բնակչության արտահոսքը, տնտեսությունը քանդվում էր, և այս ամենն անդրադառնում էր մարդկանց տրամադրության վրա: Ռուսալեզու բնակչության, այլ ժողովուրդների ներկայացուցիչները սկսել էին մտածել պատմական հայրենիք տեղափոխվելու մասին:

Այս ամենը շատ լավ զգում էր անտեսանելի երևույթները տեսնելու ունակություն ունեցող մեր նախագահը: Եվ այդ ժամանակ, արդեն 1995թ. սկզբին, Նազարբաևը կրկնեց, որ նման ինստիտուտն անհրաժեշտ է: Նա հիմնավորեց հայեցակարգը, մտածեց Ասամբլեայի հիմնական նպատակներն ու խնդիրները, և 1995թ. մարտի 1-ին իր հրամանագրով ստեղծեց այդ ինստիտուտը, ողջ Ղազախստանից հավաքեց ներկայացուցիչներին և իրավաբանորեն ձևավորեց Ղազախստանի ժողովրդի ասամբլեան (ՂԺԱ):

Այնուհետև Ասամբլեան զարգանում էր և՛ իրավական, և՛ սահմանադրական, և՛ քաղաքական, և՛ հոգևոր ուղղություններով, ու այժմ արդեն այն սահմանադրական մարմին է, ունի 9 պատգամավոր, որոնց Ասամբլեան ուղարկում է խորհրդարան, և նրանք այնտեղ ներկայացնում են ողջ Ասամբլեան: Եվ սա ավելի շատ է կառույցի վրա դնում հանդուրժողականության գործառույթը: Օրինակ՝ հայ պատգամավորը պաշտպանում է մյուս բոլոր ժողովուրդների շահերը:

Անցած 20 տարիների ընթացքում Ասամբլեան ընդլայնվել է ոչ միայն լայնությամբ, այլև խորությամբ: Այն ունի Գիտափորձագիտական խորհուրդ, որը մենք համարում ենք Ասամբլեային կից գիտական լաբորատորիա: Խորհուրդն զբաղվում է Ղազախստանում ողջ ազգային-մշակութային քաղաքականության գիտական, մեթոդոլոգիական ապահովմամբ: Խորհրդի մեջ են մտնում գիտնականների, քաղաքագետների, մշակութաբանների, ազգագրագետների միջից լավագույն ուղեղները, նաև ուղղակի հիանալի մարդիկ, որոնք իրենք իրենցով արդեն հանդիսանում են ազգամիջյան հարաբերությունների մշակույթի նմուշ: Նիստերին մենք սովորաբար քննարկում ենք աշխատանքի արդյունավետության բարելավման հետ կապված խնդիրները:

Ի տարբերություն եվրոպական մուլտիկուլտուրալիզմի՝ մեզ համար գլխավոր բազային հիմք է «Մանգիլիկ ել» (Հավերժական երկիր) կոնցեպտը: Այն նախևառաջ ողջ ղազախական էթնոսի մշակութային կոդն է, համաղազախստանյան ինքնության կարևորագույն բաղադրիչը: Որպես կոնցեպտի հիմք է վերցված այն սկզբունքը, որ ազգամիջյան հարաբերությունների մշակույթն անսահման է: Դրանով հնարավորություն է ստեղծվում միմյանցից ստանալու ամենայն լավը, ինչ կա նրանց տարբեր մշակույթներում: Միևնույն ժամանակ մենք՝ որպես հոգու դոնոր, տալիս ենք ամեն լավը, ինչ ունենք, այլ մշակույթների ներկայացուցիչներին: Եվ դրա շնորհիվ մենք ձևավորել ենք ոչ սովորական ղազախստանյան մենթալիտետ: Բայց մշակույթի անսահմանափակության հետ մեկտեղ մենք կարծում ենք, որ այն ունի երեք գործոնների վրա հիմնված իր ազգային արմատները՝ մայրենի լեզու, ազգային ավանդույթներ և պատմական հիշողություն:

***- Այսօր Ղազախստանի բուհերում մենք տեսնում ենք ՂԺԱ ամբիոններ: Ինչո՞ւ են դրանք ստեղծվել:***

- Բացի Ասամբլեայի ներսում Գիտափորձագիտական խորհրդից՝ մենք մեծանում ենք նաև լայնությամբ, դեպի մարզեր՝ ստեղծելով այնտեղի համալսարաններում ՂԺԱ ամբիոններ: Առաջին ամբիոնը ստեղծել ենք Աստանայի Եվրասիական համալսարանում մեկուկես տարի առաջ: Այժմ արդեն Ղազախստանի 12 համալսարաններում կան այսպիսի ամբիոններ, շուտով կավելանան ևս երեքը:

Մենք ստեղծել ենք ասոցիացիա, հավաքվում ենք տարին 1-2 անգամ միասնական մեթոդոլոգիական հայացք ապահովելու համար: Մշակել ենք ուսումնական ծրագրեր, հատուկ դասընթացներ: Այդ ամբիոնները եռակի խնդիր են կատարում. գաղափարական-քաղաքական դաստիարակություն, գիտական ապահովում (պատրաստում ենք մենագրություններ, ելույթներ) և ուսումնական ծրագիր (որի մեջ ներառել ենք մշակութաբանության, քաղաքագիտության, տնտեսության, պետական շինարարության հարցեր):

***- Պատմե՛ք, խնդրեմ, «100 քայլ» ծրագրի մասին:***

- Պետության ղեկավարի կողմից առաջարկված «100 քայլ», կարող ենք ասել՝ ազգի ծրագիրը մի գործիք է հինգ ինստիտուցիոնալ ռեֆորմներ իրականացնելու համար: Դրանք հասարակության, կառավարության առջև դրված համալիր խնդիրներ են: Նախևառաջ դրանք արդյունավետ տնտեսության, արդյունավետ պետական կառավարման և պետական հաստատություններում արժանի մարդկանց ներգրավելու հարցերն են: Արժանի մարդկանց՝ երկու պարամետրերով՝ մասնագիտական պատրաստության և մարդկային լինելու տեսանկյունից, քանի որ կրթությունն առանց դաստիարակության նույնն է, ինչ զենքը անխելքի ձեռքում: Չի կարող տնտեսություն լինել, եթե այն կառավարում են սոցիալական ասպեկտը հաշվի չառնող մարդիկ:

Մարդն այն արևն է, որի շուրջը պետք է պտտվի պետությունը, նրա մարմինները, յուրաքանչյուր պաշտոնյա: Ոչ թե մարդը պտուտակի նման պետք է սպասարկի պետությանը, այլ պետությունը պետք է հոգ տանի յուրաքանչյուր մարդու մասին: Այժմ մեր խնդիրն այն է, որպեսզի յուրաքանչյուր ղազախստանցի՝ 17,5մլն մարդ, այս ճշմարտությունն իր սրտի միջով անցկացնի: Այդ ժամանակ մեզ մոտ չի լինի այն, ինչ այսօր մենք տեսնում ենք Ուկրաինայում, Մերձավոր Արևելքում, նույնիսկ բարեկեցիկ Եվրոպայում:

Երբ մենք մեր մեջ հաղթահարենք միայն ազգային պատկանելությամբ ցածր վերաբերմունքը միմյանց նկատմամբ, դրանից վեր կանգնենք, այդ ժամանակ չի լինի այն, ինչ այսօր տեղի է ունենում Սիրիայում, Լիբանանում, Աֆղանստանում, Իրաքում:



Բոլոր ղեկավարները պետք է հավաքվեն ու մտածեն՝ ինչպե՞ս փրկեն մեր մայր-մոլորակը: Չէ՞ որ բնական աղետները՝ ցունամիների, երկրաշարժերի տեսքով, բնության պատասխանն են իր նկատմամբ մարդկանց մարգինալ վերաբերմունքի համար: Նա երկար է համբերում, բայց երբ համբերությունը հատնում է, ինչ-որ տեղ իրեն զգացնել է տալիս: Հարկավոր է, որ նախագահներն իրենց հետ Աստանա՝ մեր Խաղաղության ու համաձայնության պալատ բերեն իրենց իմաստուններին, որոնք մեզ կասեն, թե ինչպե՞ս շարունակենք ապրել, ինչպե՞ս փրկենք մթնոլորտի օզոնային շերտը: Եկե՛ք հոգ տանենք միմյանց մասին: Էկոլոգիան ոչ թե պետք է վերականգնել, այլ պահպանել, իսկ այն հնարավոր է պահպանել միայն սեփական հոգու, մտքի էկոլոգիայի միջոցով: Եթե այն լինի վեհանձն, հանդուրժող, բնությունն էլ կսկսի կենդանանալ, և մենք էլ քիչ ցավ կպատճառենք միմյանց:

# ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՅԵՐ. ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԿՅԱՆՔԻ ՁԵՎՆ Է, ՄԵՆՔ ԲՈԼՈՐՍ ՂԱԶԱԽՍՏԱՆՑԻՆԵՐ ԵՆՔ

Ղազախստանը հնուց ի վեր ներգրավված է եղել համաշխարհային միջմշակութային գործընթացներում: Հատուկ աշխարհագրական տեղակայումը Արևելքի և Արևմուտքի խաչմերուկում որոշել են Ղազախստանի էթնիկական կերպարը: Այստեղ ապրում են 130 ազգերի ու ազգությունների ներկայացուցիչներ: Բացի ղազախներից՝ դրանք արևելյան սլավոններն են, գերմանացիները, թաթարները, ուզբեկները,ույղուրները, թուրքերը, ադրբեջանցիները, դունգանները, տաջիկները, քրդերը և այլն: Երկրում բնակվում են նաև հայեր, ովքեր հայտնվել են այստեղ դեռ միջին դարերում, իսկ 19-րդ դարի սկզբին ամուր դիրք են գրավել Կասպից ծովի արևելյան ափին գտնվող առևտրային ֆակտորիաներում: 19-րդ դ. կեսին այստեղ սկսեցին ձևավորվել և զարգանալ հայկական համայնքները: Պատմական տեղեկությունների համաձայն՝ 1890թ. Թուրքեստանի Անդրկասպյան երկրամասում բնակվում էր արդեն 2893 հայ, իսկ 1894թ.-ին՝ 3438: Քանի որ հայերը գիտեին ղփչաղերեն լեզուն, նրանք հաճախ ծառայում էին որպես թարգմանիչներ, խորհրդականներ, միջնորդներ՝ դրանով օգնելով օտարերկրացիներին շփվել ղազախական բնակչության հետ: Հայ առևտրականները, արհեստավորները ռուսների հետ կազմում էին Գուրյև (ներկայիս Ատիրաու) և Ֆորտ Շևչենկո (ներկայիս Ակտաու) քաղաքների ժողովրդագրական հիմքը:

Խորհրդային տարիներին հայերը հիմնավորվում են արդյունաբերական կենտրոններում՝ Կարագանդայում, Պավլոդարում: Հայերի թիվն ավելանում է ռեպրեսիաների տարիներին: Ինչպես պատմում է Ալմաթիի հայկական համայնքի անդամ Ալբերտ Պողոսյանը, ով այս քաղաքում ծնված առաջին հայն է, «1937թ. ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի հրամանագրով մեզ՝ հայերիս, աքսորեցին մեր հարազատ հողից: Ինչպես մեզ ընդունեցին ղազախնե՛րը: Դա ես կասեմ ցանկացած ամբիոնից՝ հիանալի: Այդ ժամանակ ղազախներն իրենք էին ապրում աղքատության մեջ, սակայն մեզ օգնեցին իրենց ունեցածի չափով: Եվ ղազախ ազգի շնորհիվ մենք այստեղ չկորանք: Մինչև հիմա մենք հիշում ենք այդ մարդկանց բարությունը, և ժամանակ առ ժամանակ գնում ենք այդ գյուղը, նվերներ տանում այդ ընտանիքներին: Դա մեր երախտագիտությունն է այս հողին, որը մեզ ընդունեց ու կերակրեց: Մենք նրան պարտական ենք: Եվ այս ավանդույթը մենք մեր երեխաներին ենք փոխանցում»:

1991թ. անկախության ձեռքբերումից հետո Ղազախստանի տարածքում սկսում են հայտնվել հայկական ազգային-մշակութային կենտրոններ, որոնք արդեն տասից ավելի են ՂՀ տարբեր քաղաքներում: Դրանք են՝ «Վանը» Աստանայում, «Էրեբունին» Կարագանդայում, «Տապանը» Ուրալսկում, «Ուրարտուն» Ակտոբեում, «Տավրոսը» Ատիրաուում և այլն: Բոլոր կենտրոնները միավորված են Ղազախստանի հայերի ասոցիացիայում: Տարին երկու անգամ հայերը հավաքվում են ղազախստանյան քաղաքներից մեկում Ղազախստանի հայերի համագումարին: Այս տարի Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի 20-ամյակի կապակցությամբ հայկական համայնքի մի շարք ակտիվիստներ պարգևատրվել են ՂԺԱ 20-ամյակի մեդալով:

Ղազախստանում հայերի զբաղվածության ոլորտը բավականին բազմազան է. կան պետական ծառայողներ կրթության, առողջապահության, մշակույթի ոլորտներում, ձեռներեցներ, շինարարներ, նկարիչներ, բժիշկներ: Այսօր Ղազախստանում շատ հայտնի են շինարար-կառուցող Էռնեստ Վարդերեսյանը, վառելիքի արտադրությամբ և արտահանմամբ զբաղվող Դավիթ Վարակյանը, տեղական կոնյակի և գինու արտադրող Արտուշ Կարապետյանը, Լերմոնտովի անվան ռուսական դրամատիկական թատրոնի գլխավոր ռեժիսոր, ՂՀ ժողովրդական արտիստ Ռուբեն Անդրեասյանը, ռեժիսոր Սերգեյ Փաշոյանը, պատմաբան-պրոֆեսոր Էդուարդ Տեր-Պողոսյանը, «Դիոնիս» արտադրական միավորման նախագահ Ռուդիկ Մնացականյանը, գեներալ Վաչագան Վլասովը, ՆԳՆ գնդապետներ Սահակ Սալումյանը, Արմեն Խաչատրյանը և այլն:

Պաշտոնական տվյալներով Ղազախստանում բնակվում է 25 հազար հայ, իսկ ոչ պաշտոնական տվյալներով՝ մոտ 60 հազար: Ալմաթիի «Լույս» հայկական ազգային-մշակութային կենտրոնի նախագահ Նարինե Միքայելյանը պատմում է, որ հայերի մեծ մասը բնակվում է Ալմաթիում՝ 5000 մարդ, դա մոտ 350 ընտանիք է:

«Հայերի մեծամասնությունը կենտրոնացած է «Հայկական տան»՝ Ալմաթիի հայկական մշակութային կենտրոնի շրջանում: Այս շրջանը կատակով









անվանում են «հայերի ավան»: Հայկական մշակութային կենտրոն է հաճախում մոտ 500 մարդ. գալիս են միջոցառումների, Սբ Կարապետ եկեղեցի (կառուցվել է 2005թ.), «Նաիրի» պարային խումբ՝ պարի դասերի, հայկական կիրակնօրյա դպրոց: Հետաքրքիրն այն է, որ մեր կենտրոն են հաճախում ոչ միայն հայերը, այլև այլ ազգերի երեխաներ՝ հայկական պարեր և հայերեն սովորելու համար: Մեր դռները միշտ բաց են բոլորի համար: Հրատարակվում է նաև «Նաիրի» թերթը հայերեն լեզվով», - պատմում է նա:

Աստանայի «Վան» ԱՄԿ (ձևավորվել է 2000թ.) նախագահ Գագիկ Մարտիրոսյանը պատմում է, որ համայնքն ակտիվորեն մասնակցում է ՂՀ բոլոր պետական միջոցառումներին: «Հիմնական նպատակն այն է, որպեսզի մեր ազգը ներկայացնենք ամենալավ ձևով, որպեսզի հայերի մասին իմանան միայն ամենալավը: Հայկական համայնքը Ղազախստանում համեմատաբար փոքր է, սակայն չնայած դրան՝ կարելի է ասել, որ մենք այստեղ գրավում ենք մեր դրական տեղը: Մարդիկ մեզ գիտեն որպես խելացի, աշխատասեր, արարող ազգի, մենք իրականում այդպես էլ կանք: Մենք պետք է ստեղծենք մեր սեփական դեմքը՝ մեր անունը պահպանելու, Հայաստանում ապրող մեր հարազատների համար», - ասում է նա:

Իսկ «Վան» համայնքի քարտուղար Սահակ Սալումյանը նշում է, որ Ղազախստանում հայերն ազատ են ապրում. «Սա մեզ համար կարծես երկրորդ



հայրենիք է: Այս հողում մեզ հնարավորություններ են տրվել, և մարդիկ աշխատում են: Մենք արդեն ունենք կիրակնօրյա դպրոց, պարային խումբ: Մենք գտնվում ենք հայրենիքից հեռու, մենք՝ ավագ սերունդը, դեռ հիշում ենք մեր լեզուն, իսկ այստեղ ծնված մեր երեխաները լեզուն լավ չգիտեն, ուստի այդ դպրոցը շատ անհրաժեշտ է: Պետությունը մեզ աջակցում է, քանի որ, որտեղ էլ լինես, չի կարելի մոռանալ քո լեզուն»:

«Վան» ԱՄԿ անդամ Արամ Բերբերյանը նշում է, որ Ղազախստանում շատ լավ պայմաններ են աշխատանքի համար, ինչպես նաև ոչ մի խտրականություն չկա, ինչը նրա կարծիքով գալիս է երկրի ղեկավարից: «Ես կցանկանայի նշել նաև, որ Ղազախստանում բոլորին հայտնի է Լևոն Միրզոյանը (եղել է Ղազախստանի ղեկավարը 1933-1939թթ.), որին անվանել են Միրզաժան՝ «Հոգիմարդ»: Նա շատ բան է արել Ղազախստանի համար, և մինչև հիմա նախագահ Նազարբաևը հիշեցնում է երկրի զարգացման գործում Միրզոյանի ներդրման մասին»:

Հիշեցնենք, որ Լևոն Եսայիի Միրզոյանը նշանակվում է Ղազախստանի Կոմունիստական կուսակցության առաջին քարտուղարի պաշտոնին Գոլոշչոկինից հետո, որը բնակչությանը սովի էր հասցրել, և նրան հաջողվում է վերացնել սովի հետևանքները հանրապետությունում, զարգացնել գյուղատնտեսությունը, անասնապահությունը, նրա պաշտոնավարման տարիներին Ղազախս-





տանում իսկայական արդյունաբերական շինարարություն է սկսվում: Պոետ Խ.Բեկխոժինը գրել է.

Ալաթաուի ծաղիկներ՝ բազմագույն գորգ:
Իմ եղբայր և Հայաստանի որդի Միրզոյանը
Իր բարի և պայծառ հոգու հարստությունը
Անշահախնդրորեն տվեց ղազախական ծաղիկներին:

Իրոք, Միրզոյանն անշահախնդիր աշխատել է ղազախական ժողովրդի բարօրության համար, ուստի և ռեպրեսիայի ու մահապատժի է ենթարկվել՝ որպես «ղազախական ազգայնական»: 1958թ. Լևոն Միրզոյանը և նրա կին Յուլիա Թևոսյանը ռեաբիլիտացվում են: Լ.Միրզոյանի 100-ամյակի կապակցությամբ 1997թ. Ղազախստանում հանդիսավոր միջոցառումներ են անցկացվում: Ակտոբեում՝ նրա անվան հրապարակում և փողոցում, տեղադրվում է նրա արձանը, Ալմաթիում և Աստանայում նրա պատվին փողոցներ են անվանվում: Սակայն վերջերս որոշում է ընդունվել Աստանայում Միրզոյանի անվան փողոցը վերանվանել, որովհետև իբր գտնվել են որոշ արխիվային փաստաթղթեր, որոնց համաձայն՝ Միրզոյանը մեղավոր է ղազախների նկատմամբ զանգվածային ռեպրեսիաների հարցում:

Հուսով ենք, որ փողոցի վերանվանման հետ կապված թյուրիմացությունը շատ շուտով կլուծվի, և նրանց, ովքեր օգտագործել են Միրզոյանի անունը սեփական քաղաքական նպատակների համար, չի հաջողվի փոխել Ղազախստանի էությունը: Չէ՞ որ Ղազախստանը հպարտանում է իր հանդուրժողական և համերաշխ հասարակությամբ, ինչը կարող է աշխարհի շատ երկրներին օրինակ ծառայել:



Ի դեպ, սա նշում են նաև ղազախահայերը: Ալբերտ Պողոսյանն ասում է. «Մեր նախագահ Նազարբաևի ամենամեծ արժանիքն այն է, որ նա միավորեց բոլորին մի բռունցքի մեջ, իրականություն դարձրեց հանդուրժողականության գաղափարը, որպեսզի յուրաքանչյուր ազգություն պահպանի սեփական ինքնությունն ու մշակույթը: Երևի թե սա միակ պետությունն է, որտեղ բոլորը հավասար են օրենքի առջև»:

Նարինե Միքայելյանը պատմում է. «Մենք նույնիսկ չենք էլ խոսում հանդուրժողականության մասին, քանի որ դա մեր ապրելու ձևն է: Այստեղ մենք ազգությունների չենք բաժանվում, ապրում ենք մի մեծ ընտանիքով: Մենք գիտենք այլ ժողովուրդների ավանդույթները, սովորույթները, նրանց հետ շփվելու հաշվին մենք հոգեպես հարստանում ենք: Եվ այստեղ ինչ-որ բան բաժանելու իմաստ չկա, քանի որ բոլորի համար միատեսակ պայմաններ են ստեղծված: Երկրում, իրոք, շատ լավ է վերաբերմունքը հայերի նկատմամբ»:

Սահակ Սալումյանի խոսքերով. «Ազգամիջյան հակամարտություններ այստեղ չկան: Համենայն դեպս, ես ապրում եմ Ղազախստանում արդեն 24 տարի, և այդ ընթացքում ես չեմ հիշում, որ ազգամիջյան հողի վրա ինչ-որ հակամարտություններ լինեն: Եվ դա պետության ղեկավար Ն.Նազարբաևի քաղաքականության շնորհիվ է: Այստեղ բոլոր 130 ազգություններին տրված են միևնույն հնարավորությունները: Մենք կիսելու ոչինչ չունենք: Այստեղ մի հող է, մի պետություն, մի ազգ: Մենք բոլորս ղազախստանցի ենք»:

Ինչպես ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են…





***Նարինե Միքայելյան***
*Ալմաթիի հայկական մշակութային*
*կենտրոնի նախագահ*

# «ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԿՅԱՆՔԻ ՁԵՎՆ Է»

***- Պատմե՛ք, խնդրեմ, Ալմաթիի հայկական համայնքի մասին: Քանի՞ հայ կա այստեղ, հիմնականում ինչո՞վ են նրանք զբաղվում:***

- Հայերը Ղազախստանում վաղուց են ապրում: Կան, որ եկել են այստեղ, իսկ կան, որ այստեղ են ծնվել: Հայկական մշակութային կենտրոնը ստեղծվել է դեռևս 1990-ականներին: Հայերի մեծ մասն ապրում է Ալմաթիում: Հայկական մշակութային կենտրոն է հաճախում մոտ 500 մարդ. գալիս են միջոցառումների, եկեղեցի, պարի դասերի, հայկական կիրակնօրյա դպրոց: Հետաքրքիրն այն է, որ մեր կենտրոն են հաճախում ոչ միայն հայերը: Մեր «Նաիրի» պարային խմբում պարապում են տարբեր ազգերի երեխաներ: Նրանք նաև հայկական պարեր են պարում, նրանց այստեղ դուր է գալիս. պարային հագուստներ են կարում, մասնակցում տարբեր միջոցառումների, մեր համույթն ամեն տեղ ճանաչում են: Ընդհանրապես, մեր դռները միշտ բաց են բոլորի համար: Ի դեպ, կիրակնօրյա դպրոց էլ են հաճախում տարբեր ազգերի ներկայացուցիչները և այստեղ հայերեն սովորում:

***- Ո՞րն է Ալմաթիի հայկական համայնքի պատմությունը:***

- Հայերը հիմնականում այստեղ են հայտնվել 1930-ականների ռեպրեսիաների ժամանակ: Հայերի մեծամասնությունը կենտրոնացած է «Հայկական տան»՝ Ալմաթիի հայկական մշակութային կենտրոնի շրջանում: Այս շրջանը կատակով անվանում են «հայերի ավան»: Ալբերտ Զաքարի Պողոսյանը Ալմաթիում ծնված առաջին հայն է, նա մեր Կենտրոնի խորհրդի պատվավոր անդամ է: Մենք նաև երիտասարդական առաջնորդներ ունենք, որոնք մեր միջոցառումներին ներգրավում են հայ երիտասարդության ներկայացուցիչներին:

***- Ինչքա՞ն սերտ են կապերը Ղազախստանի մյուս քաղաքների հայկական համայնքների հետ:***

- Ղազախստանի համարյա բոլոր քաղաքներում կան հայկական մշակութային կենտրոններ, և դրանք բոլորը միավորված են Ղազախստանի հայերի ասոցիացիայում, որը գլխավորում է Արտուշ Կարապետյանը: Շուտով Ալմաթիում Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի 20-ամյակին նվիրված համաժողով կանցկացվի, որին կմասնակցեն նաև այլ քաղաքներից ժամանած հայերը: ՂԺԱ փոխնախագահ Երլան Տուգժանովը մեր հայ ակտիվ անդամներին կպարգևատրի ՂԺԱ 20-ամյակին նվիրված մեդալով: Իսկ ընդհանրապես, տարին ամենաքիչը երկու անգամ մենք՝ հայերս, հավաքվում ենք մի որևէ քաղաքում Ղազախստանի հայերի համագումարին: Այդ հանդիպումները տևում են 2-3 օր, անպայման հանդիպում ենք այդ քաղաքի քաղաքապետի հետ, գնում ենք «Բարեկամության տուն», մասնակցում ենք զուտ հայկական միջոցառումներին:

***- Ղազախստանում մեծ նշանակություն է տրվում հանդուրժողականությանը, տարբեր ազգերի խաղաղ գոյակցությանը: Ինչքանո՞վ է դա իրական:***

Մենք նույնիսկ չենք էլ խոսում հանդուրժողականության մասին, քանի որ դա մեր ապրելու ձևն է: Այստեղ մենք ազգությունների չենք բաժանվում, ապրում ենք մի մեծ ընտանիքով: Մենք գիտենք այլ ժողովուրդների ավանդույթները, սովորույթները, նրանց հետ շփվելու հաշվին մենք հոգեպես հարստանում ենք: Եվ այստեղ ինչ-որ բան բաժանելու իմաստ չկա, քանի որ բոլորի համար միատեսակ պայմաններ են ստեղծված: Երկրում, իրոք, շատ լավ է վերաբերմունքը հայերի նկատմամբ:



***Ալբերտ Պողոսյան***
*Ալմաթիի հայկական համայնքի անդամ*

# «ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱՅՆ ՀՈՂԻՆ, ՈՐԸ ԿԵՐԱԿՐԵԼ Է ՄԵԶ»

***- Դուք Ալմաթիում ծնված առաջին հայն եք: Պատմե՛ք, խնդրեմ, ձեր ընտանիքի պատմությունը, ինչպե՞ս հայտնվեցիք այստեղ:***

- 1937թ. ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի հրամանագրով մեզ՝ հայերիս, աքսորեցին մեր հարազատ հողից: Այդ հրամանագրում գրված էր, որ դա արվում է սահմանամերձ շրջանների անվտանգության համար: Այդ գյուղերից 32 ընտանիք աքսորեցին, որոնց մեջ էր նաև հինգ հոգուց բաղկացած մեր ընտանիքը: Մեզ Ղազախստան ուղարկեցին բեռնատար վագոններով: Թույլ տվեցին վերցնել միայն ամենաանհրաժեշտ բաները և պատրաստ լինել 24 ժամվա ընթացքում: Երեք ամիս ճանապարհ էինք գալիս: Այդ ժամանակ աշուն էր, իսկ ես արդեն ծնվեցի փետրվարի 2-ին: 1,5 տարի բարաքներում ենք ապրել, որից հետո մեզ թույլ տվեցին մեզ համար տեղ ընտրել: Այդ ժամանակ հանրապետության ղեկավարը Լևոն Միրզոյանն էր, և մեր մեծերը նրան դիմեցին: Մենք ընտրեցինք երկու գետերի միջև գտնվող Մոլոտովի կոլտնտեսությունը՝ մի սքանչելի հարթավայր Ալմա Աթայից ոչ հեռու:

Ինչպես մեզ ընդունեցին ղազախնե՞րը: Դա ես կասեմ ցանկացած ամբիոնից՝ հիանալի: Այդ ժամանակ ղազախներն իրենք էին ապրում աղքատության մեջ, սակայն մեզ օգնեցին իրենց ունեցածի չափով. մեկը հավ տվեց, մեկը՝ գառ, մյուսը՝ ալյուր: Եվ ղազախ ազգի շնորհիվ մենք այստեղ չկորանք: Աստիճանաբար հիմնավորվեցինք: Մինչև հիմա մենք հիշում ենք այդ մարդկանց բարությունը, և ժամանակ առ ժամանակ գնում ենք այդ գյուղը, նվերներ տանում այդ ընտանիքներին: Դա մեր երախտագիտությունն է այս հողին, որը մեզ ընդունեց ու կերակրեց: Մենք նրան պարտական ենք: Այս մեր ավանդույթը մենք մեր երեխաներին ենք փոխանցում: Ես շատ լավ ղազախերեն եմ խոսում: Եվ դա էլ է շատ կարևոր: Եթե մի երկրում ապրում ես, ապա նրա լեզուն պետք է իմանաս:

***- Ինչպե՞ս է ապրում հայը անկախ Ղազախստանում:***

- Անկախության ձեռքբերումից հետո Ղազախստանը կանգնեց դժվարին կացության առաջ՝ ինչպե՞ս շարունակել ապրել: Երկրում շատ ազգություններ կան՝ կորեացիներ, ույղուրներ, հայեր, թաթարներ, տաջիկներ և այլն: Նախագահ Նազարբաևի ամենամեծ վաստակն այն է, որ նա կյանքի է կոչել հանդուրժողականության գաղափարը, որպեսզի յուրաքանչյուր ազգություն պահպանի իր ինքնությունն ու մշակույթը: Մեր ակտիվիստների շնորհիվ մենք կազմակերպել ենք մեր մշակութային կենտրոնը: Ես հայերի գիտեմ, ովքեր թատրոններ, խոշոր բիզնես են ղեկավարում Ղազախստանում: Ես՝ որպես ազգությամբ հայ, հպարտանում եմ իմ ավանդույթներով, պահպանում եմ դրանք, իմ փորձն եմ փոխանցում երեխաներիս, թոռներիս: Սա մի պետություն է, որտեղ բոլորն օրենքի առաջ հավասար են, այստեղ իմ իրավունքները ոչ ոք չի ոտնահարում:

Մեր մշակութային կենտրոնում մենք կիրակնօրյա դպրոց ենք բացել, որտեղ, բացի հայերենից, ուսուցանվում է նաև ղազախերեն, ստեղծել ենք «Նաիրի» պարային խումբը: Պետական, քաղաքային շրջանային մասշտաբի միջոցառումներին (Նոր տարի, Մայիսի 1, Հաղթանակի օր և այլն) մեր հայկական մշակութային կենտրոնը միշտ ակտիվ մասնակցություն է ցուցաբերում: Մենք ցուցադրում ենք մեր մշակույթը, խոհանոցը, հագնում ենք մեր ազգային տարազը, դա շատ գեղեցիկ է: Մեր կենտրոնում մենք շատ հանդիպումներ ենք կազմակերպում, հրավիրում ենք մյուս ազգային-մշակութային կենտրոնների անդամներին՝ անկախ ազգությունից և դավանանքից: Նույնիսկ Շառլ Ազնավուրն է մեզ մոտ եղել: Այդ հանդիպումը մեզ հնարավորություն տվեց նրա հետ զրուցելու: Եվ ընդհանրապես ցանկացած դեմառդեմ հանդիպում մեզ թև է տալիս: Ղազախստանում դա շատ կարևոր է: Ես՝ որպես տարեց մարդ, կարծում եմ, որ հենց սկսվի մի կրոնի գերակայությունը մյուսի նկատմամբ, դա ողբերգություն կլինի: Այստեղ մենք համարյա մի ընտանիքի պես ենք ապրում, ես շատ ղազախ ընկերներ ունեմ: Կեցցե՛ Ղազախստանի և Հայաստանի միջև բարեկամությունը:



***Արտյոմ Սերոբյան***
*Ալմաթիի հայկական համայնքի ակտիվ անդամ*

## «ԱԼՄԱԹԻԻ ՀԱՅԵՐԸ ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ 62 ՀԱԶԱՐ ՄՈՄ ԵՆ ՎԱՌԵԼ»

***- Խնդրում եմ՝ պատմեք Ալմաթիում հայկական եկեղեցու մասին:***

- Ղազախստանի հայերի ղեկավար Արտուշ Կարապետյանն իր կյանքի ընթացքում միշտ ցանկացել է հայկական եկեղեցի կառուցել: Եվ 2005 թվին նրա ֆինանսավորմամբ կառուցվեց Ալմաթիի Սուրբ Կարապետ եկեղեցին, իսկ ժողովուրդն էլ արդեն օգնեց ներքին հարդարանքի հարցում. ծեռք բերվեցին հոգևոր թեմաներով նկարներ, Հայաստանից հրավիրվեց նկարիչ՝ պատերի որմնանկարները նկարելու համար: 2006 թվին կանչեցինք Երզաս Ներսիսյանին, ով օծեց եկեղեցին: 2007թ. մեր խնդրանքով Էջմիածինն այստեղ ուղարկեց տեր Մարկոս քահանային՝ որպես հոգևոր հովվի, ով աշխատեց մինչև 2014թ.: Դրանից հետո եկեղեցին մնացել է առանց քահանայի, սակայն ժողովուրդը շարունակում է այցելել եկեղեցի: Մշտական այցելուները 15-20 հոգի են, իսկ կիրակի օրերը՝ 30-40 հոգի: Իհարկե, եթե քահանա լիներ, մեզ համար ավելի լավ կլիներ:

Ալմաթիում կա մինչև 5000 հայ, որոնք հիմնականում ապրում են եկեղեցու շրջակայքում՝ հայկական թաղամասում: Մշակութային կենտրոնը գտնվում է հենց հայկական թաղամասի մեջտեղում: Վերջին երկու ամիսը մենք ակտիվ աշխատանք ենք տանում և ցանկանում ենք այդպես շարունակել: Ակտիվացել է նաև երիտասարդությունը:

Ապրիլի 24-ին մեծ միջոցառում կազմակերպեցինք, մեծ քանակությամբ ժողովուրդ եկավ: Նրանց ներկայացվեց Եղեռնի պատմությունը. ե՞րբ է սկսվել, ինչպե՞ս է կատարվել, ի՞նչ հետևանքներ է ունեցել, ի՞նչ նշանակություն ունի հայ ազգի հոգու և սրտի համար: Շատ մարդիկ ոչինչ չգիտեին այդ մասին: Այնպես որ միջոցառումը շատ լավ անցավ: Միայն երեք օրվա ընթացքում վաճառվեց 62 հազար մոմ:

Մեկուկես տարի առաջ այստեղ էր Շառլ Ազնավուրը: Իսկ այս տարի մենք նշեցինք նրա 91-ամյակը՝ կազմակերպելով մեծ միջոցառում. պատմվեց նրա կենսագրությունը, նրա՝ հաջողության հասնելու պատմությունը, երգեցինք նրա երգերից: Տեսագրությունը որոշել ենք ուղարկել նրան: Այս տարի տոնել ենք նաև Հովհաննես Շիրազի 100-ամյակը: Ընդհանուր առմամբ, աշխատանքներ շատ կան, և մենք փորձում ենք ակտիվորեն աշխատել:



***Արամ Նավասարդյան***
*Ալմաթիի հայկական համայնքի երիտասարդական թևի ակտիվիստ*

## «ՀԱՐԿԱՎՈՐ Է ՄԵՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ՈՐՔԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՇԱՏ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎԵԼ»

***- Խնդրում եմ՝ պատմեք, թե ինչով է զբաղվում հայ երիտասարդությունը Ղազախստանում:***

- Հայ երիտասարդությունն ընդգրկված է Ղազախստանի գրեթե բոլոր բնագավառներում՝ լինի դա արհեստ, արվեստ, թե այլ աշխատանքներ, քանի որ շատ տաղանդավոր են, ինչպես և աշխարհում բոլոր հայերը: Նրանք նաև ակտիվորեն մասնակցում են հայկական մշակութային կենտրոնի կյանքին: Իհարկե, ոչ բոլորը, բայց պետք է աշխատենք որքան հնարավոր է շատ երիտասարդներ ներգրավել, որպեսզի նրանք իրենց տաղանդը,

հնարավորություններն օգտագործեն հայկական համայնքի միջոցառումներում:

Կան տարբեր միջոցառումներ, ինչպես, օրինակ, ԽՍՀՄ տարիներից մնացածները, երբ ներկայացնում էին տարբեր ազգերին: Այդ ավանդույթն այստեղ շարունակվում է, և դա գովելի է: Այդ միջոցառումներից են, օրինակ, Մայիսի 1-ը, Նաուրիզը, որոնց ժամանակ տարբեր ազգերի ներկայացուցիչներին տրվում են տաղավարներ, որոնք նրանք զարդարում են ազգային ոճով, այնտեղ ցուցադրում իրենց մշակույթը, ուտեստները: Այդ օրերին կատարվում են ուրախ տոնախմբություններ: Այսպիսի միջոցառումներն ամրապնդում են ազգերի միջև հարաբերությունները:

***- Իսկ Հայաստանից որևէ օգնություն ստանո՞ւմ եք դասագրքերի, տեսանյութերի տեսքով:***

- Մենք համագործակցում ենք և՛ Սփյուռքի նախարարության, և՛ Մշակույթի նախարարության հետ: Բոլոր կարևոր, մեզ անհրաժեշտ գրականությունը մեզ ուղարկվում է, Հայաստանի կողմից այդ գործն արվում է, Սփյուռքի նախարարությունում շատ ջանասեր են աշխատում: Մենք Ղազախստանում պետք է օրինապահ քաղաքացիներ լինենք, քանի որ ներկայացնում ենք Հայաստանը, և նաև պետք է Հայաստանի օրինապահ քաղաքացիներ լինենք, և այդ դրսևորումը շատ ճիշտ է: Մայիսի վերջերին անցկացրինք կինոփառատոն և ներկայացրինք երեք հայկական ֆիլմ: Կարծում եմ՝ եկող տարիներին նման փառատոներ նորից կանցկացնենք, քանի որ այս առաջին փառատոնին հայերն ակտիվորեն մասնակցեցին, և կազմակերպիչները շատ գոհ էին:





***Բարսեղ Թումանյան***
*օպերային երգիչ, ՀՀ ժողովրդական արտիստ*

## «ԱՅՍՏԵՂ ՈՉ ԹԵ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է, ԱՅԼ ՈՒՂՂԱԿԻ ԼԱՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՄԻՄՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ»

***- Ինչպե՞ս եք Ձեզ զգում Ղազախստանում:***

- Խոսենք երեք տարբեր հասկացությունների մասին՝ Ղազախստանի, օպերայի և Ղազախստանի օպերային թատրոնի մասին. այս երեքում էլ ես ինձ շատ լավ եմ զգում: Ղազախստանը բազմազգ երկիր է: Այստեղ պահպանված են բոլոր օրենքները, մարդու իրավունքները պաշտպանվում են: Այստեղ ինձ հանգիստ եմ զգում, մարդկային վերաբերմունքը շատ ջերմ է: Միգուցե դա իմ մասնագիտական բնույթի պատճառո՞վ է… Ինչ վերաբերում է Աստանայի օպերային թատրոնին, ապա այն իր տեսակով յուրատեսակ է, և ոչ միայն այս երկրում, քանի որ այն կառուցվել է այն միտումով, որ լինի համաշխարհային որակի: Եվ այդպես էլ աշխատում են. հրավիրված են աշխարհի լավագույն և՛ դերակատարները, և՛ ռեժիսորները, ինչքան հնարավոր է, հավաքված են աշխատանքի համար լավ ուժեր: Նվագախմբում Ռուսաստանից հրավիրվածներ կան, առաջ իտալացիներ կային, որոնք նաև կառավարման մեջ էին ընդգրկված: Այստեղ շատ խելացի ու ճիշտ քաղաքականություն է տարվում նաև այն իմաստով, որ մինչև ձեռք բերեն իրենց սեփական ուժերը, որպեսզի համապատասխանեն եվրոպական չափանիշներին, աշխատում են հրավիրված մասնագետներով:

***- Իսկ ի՞նչ կասեք ղազախական օպերայի և բալետի մասին:***

- Ղազախական բալետը շատ ուժեղ է, շատ լավն է, լավ կլիներ՝ տեսնեիք: Նրանց պարացանկը բավականին մեծ է, շատ լավ

են աշխատում: Իսկ օպերային բեմադրությունները դեռ քիչ են. ունեն Ձեֆիրելլիի մի քանի բեմադրությունները, «Տրավիատա», «Աիդա»: «Աբայ» օպերան, որը ղազախական օպերա է, պետք է բեմադրի Ջանկարլո դել Մոնակոն՝ Մարիո դել Մոնակոյի որդին: Աշնանը կլինի պրեմիերան: Այնպես որ նրանք պահպանում են բեմադրության այն որակը, որը երկար կմնա բեմի վրա և իր գեղեցկությամբ էսթետիկորեն կզարգացնի հասարակությանը:

Ես զբաղված եմ «Աիդա» և «Աբայ» օպերաներում: Այստեղ շատ կան համերգային դահլիճներ, մենք շատ համերգներ ենք տալիս: Ես նաև մենահամերգ եմ տալիս: Կա մի շատ հետաքրքիր ծրագիր, որը կոչվում է «Դիմանկար»: Այդտեղ ընդգրկվում են դերասանի կատարումները, որը նաև կարող է ձայնասկավառակ դառնալ:

***- Գալով այստեղ և համեմատություն անցկացնելով հայկական օպերայի, նրա կառավարման հետ՝ այստեղի օպերայում ի՞նչ լավ բան կարող ենք գտնել վերցնելու համար:***

- Գիտե՞ք՝ ես ցանկացած հարցի նայում եմ բոլորովին այլ տեսանկյունից: Մեզ հարկավոր չէ որևէ մեկից որևէ բան վերցնել, մենք պետք է տեսնենք, թե մենք ինչի պակաս ունենք, ինչպես դա արվում է այստեղ. ռեժիսորի պակաս ունեն՝ ռեժիսոր են հրավիրում, երաժշտի պակաս ունեն, հրավիրում են: Օրինակ՝ այստեղ հոյակապ երգչախումբ ունեն, փայլուն խմբավար ունեն, որը կարող է հանգիստ Իտալիայում էլ խմբավար աշխատել. թե՛ մասնագիտական, թե՛ երաժշտական առումով նա շատ լուրջ անձնավորություն է: Ուստի չէի ցանկանա համեմատություններ տանել, քանի որ պետք կլիներ նաև համեմատել և՛ Լոնդոնի, և՛ Փարիզի թատրոնների հետ:

***- Դուք այստեղ աշխատում եք տարբեր ազգերի ներկայացուցիչների հետ: Ասում են, որ այստեղ համերաշխ ապրում են 130 ազգություններ: Դուք այդ հանդուրժողականությունն զգո՞ւմ եք:***

- Այո՛, միանշանակ: Դա իրոք կա: Ես չգիտեմ՝ դա խորհրդային ժամանակվանից մնացած մոտեցո՞ւմն է արդյոք, որովհետև այստեղ ընդհանուր լեզվի՝ ռուսերենի հարցը կա, այն ժամանակվա ընդհանուր մշակույթն է պահպանվել: Այստեղ մեծ տոնակատարությունների ժամանակ բոլոր ազգերին բեմահարթակներ են տրամադրում. գերմանացիներն առանձին են ելույթ ունենում, ցուցադրում իրենց մշակույթը, հայերը՝ առանձին՝ փոքրիկ տներով, խորովածով, պարերով և այլն: Յուրաքանչյուր ազգ ցուցադրում է իր մշակույթը, խոհանոցը: Այսինքն՝ այդ համերաշխությունը կա: Չէի ասի՝ հանդուրժողականություն, պարզապես մարդկային լավ վերաբերմունք կա, հարգանք մարդու նկատմամբ, մեկը մյուսի նկատմամբ, և դա ձևական չէ: Դա մտել է նրանց մեջ: Ես ինձ այստեղ շատ հանգիստ եմ զգում, ինձ հարգանքով են վերաբերվում, տրամադրել են առանձին պարապելու տեղ, առանձին բնակարան: Իհարկե, շատ կցանկանայի, որ Հայաստանում էլ նման պայմաններ ունենայինք, որ այնտեղ մեր բազան ունենայինք, մեր ամբողջ ցանկությունն այդ է, որ Հայաստանը լինի մեր բազան, և մենք շրջենք աշխարհում համերգներով, մեր ցանկությունը դա է: Ղազախներին միայն կարելի է շնորհավորել, նրանք դրան հասել են, հասել են շատ լուրջ բաների, և ցանկալի է, որ մեզ մոտ էլ այդպես լիներ:

# ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

- Երբ Կոնֆուցիուսին հարցնում են, թե արդյո՞ք կա մի այնպիսի բառ, որով կարելի է ղեկավարվել ողջ կյանքում, նա պատասխանել է. «Այդ բառը հանդուրժողականությունն է»:

- Մեկ մոմից կարելի է հազարավոր մոմեր վառել, և դրանից նրա կյանքը չի կարճանա: Երջանկությունը չի քչանա, երբ կիսվում ես դրանով ուրիշների հետ: (Բուդդա)

- Հաղթանակից հարբելուց հետո միշտ առաջանում է մեծ կորստի զգացում. մեր թշնամին, մեր թշնամին մեռած է: Նույնիսկ ընկերոջը կորցնելիս մենք այդքան խորը չենք ափսոսում, որքան թշնամու կորստից: (Ֆրիդրիխ Նիցշե)

- Ես իմ թշնամիներին նրանով եմ հաղթում, որ դարձնում եմ ինձ ընկեր: (Աբրահամ Լինկոլն)

- Կյանքում ամենամեծ վայելքը, ամենաշատ ուրախությունն է՝ քեզ զգալ պետքական մարդկանց համար: (Մաքսիմ Գորկի)

- Խաղաղություն, երջանկություն, մարդկանց եղբայրություն՝ ահա թե ինչ է հարկավոր մեզ այս աշխարհում: (Մարկ Տվեն)

- Հավերը մի տանիքի տակ ապրում են հաշտ ու համերաշխ, իսկ երկու աքլոր երբեք մի հավաբնում չեն կարող յոլա գնալ. այդպիսին է նրանց բնույթը: (Լեոնարդո դա Վինչի)

- Երիտասարդ ժամանակ ես մարդկանցից պահանջում էի ավելին, քան նրանք կարող էին տալ՝ հաստատունություն բարեկամության, հավատարմության զգացմունքների մեջ: Այժմ ես սովորել եմ նրանցից ավելի քիչ պահանջել, քան նրանք կարող են տալ՝ լինել կողքին և լռել: Եվ նրանց զգացմունքներին, նրանց բարեկամությանը, նրանց վեհանձն արարքներին ես միշտ նայում եմ որպես իսկական հրաշքի, որպես Աստծո պարգևի: (Ալբեր Քամյու)

- Եթե ցանկանում ես ընկեր ունենալ, դու պետք է նրա համար պատերազմ մղես, իսկ պատերազմ մղելու համար հարկավոր է կարողանալ լինել թշնամի: (Ֆրիդրիխ Նիցշե)

- Ազգը, որը մյուս ազգին վերաբերվում է սովորական ատելությամբ կամ սովորական բարի զգացմունքներով, որոշակի առումով ստրուկ է: Այդպիսի ազգը սեփական թշնամության կամ սեփական բարի զգացմունքների ստրուկն է. այդ երկուսից ցանկացածը բավական է, որպեսզի այդ ազգին հեռացնի իր սեփական պարտականությունից ու շահերից: (Ջորջ Վաշինգտոն)





- Այս կամ այն ռասայի քաղաքակրթության բարձրագույն չափանիշը առավել հաջողակ ժողովուրդներին օգնության ձեռք մեկնելու նրա պատրաստակամությունն է: (Բուքեր Տալյաֆերո Վաշինգտոն)

- Բոլորն էլ թերություններ ունեն. մեկը՝ շատ, մյուսը՝ քիչ: Ահա թե ինչու և՛ բարեկամությունը, և՛ օգնությունը, և՛ շփումը անհնարին կլինեին, եթե մեր միջև գոյություն չունենար փոխադարձ հանդուրժողականություն: (Ֆրանչեսկո Գվիչարդինի)

- Անշահախնդրությունը ստեղծում է բյուրեղյա մաքրություն, որը հանգցնում է ծաղիկների և թանկարժեք քարերի կենդանի գունավորումը, ինչպես որ չափազանց արևային լույսը խամրեցնում է գույների պայծառությունը: (Աննի Բեզանտ)

- Բարոյական մարդը շատ բան է անում իր ընկերների և հայրենիքի համար, նույնիսկ եթե այդ դեպքում նա ստիպված լինի կորցնել իր կյանքը: (Արիստոտել)

- Երբ շունն ու կատուն հանկարծ բարեկամանում են, ապա դա ոչ այլ ինչ է, եթե ոչ դաշինք խոհարարի դեմ: (Ստեֆան Ցվայգ)



*Մեջբերումներ «Բհագավադ-Գիտան, ինչպես որ կա» հնդկական սրբազան գրքից*

- Սովորաբար մարդիկ համարում են, թե բռնությունից հրաժարվել նշանակում է ուրիշներին մահվան չհասցնել և նրանց մարմնական վնասվածքներ չհասցնել, սակայն իրականում բռնությունից հրաժարվել նշանակում է ուրիշներին տառապանքների չենթարկել:

- Ժամանակակից մարդիկ շատ ջանքեր են գործադրում Լուսնին հասնելու համար, սակայն գործնականում ոչինչ չեն անում հոգևոր կատարելության հասնելու համար:

- Մարդիկ դատապարտված են սխալներ անելու, մշտապես պատրանքների մեջ են գտնվում, հակված են ուրիշներին խաբելու և սահմանափակված են սեփական ոչ կատարյալ զգացմունքներով: Այս չորս թերությունները մարդուն զրկում են կատարյալ և համապարփակ գիտելիքի աղբյուր լինելուց:



***Առակները ուղիղ սրտի մեջ թափանցելու բառերի իսկական արվեստ են: Օգտակար է դրանք ժամանակ առ ժամանակ կարդալ և խորհել ամենակարևորի մասին:***

Աշակերտներից մեկը հարցնում է Բուդդային.
- Եթե մեկն ինձ խփի, ես ի՞նչ պետք է անեմ:
Բուդդան պատասխանում է.
- Եթե ծառից վրադ չոր ճյուղ ընկնի և քեզ հարվածի, դու ի՞նչ պետք է անես:
Աշակերտն ասում է.
- Իսկ ի՞նչ պիտի անեմ: Չէ՞ որ դա ուղղակի պատահականություն է, զուգադիպություն, որ ես հենց այդ պահին հայտնվեցի ծառի տակ, երբ նրանից չոր ճյուղն ընկավ:
Բուդդան ասում է.
- Ուրեմն հենց այդպես էլ արա: Մեկը խելագարվել էր, ցասման մեջ էր և հարվածեց քեզ: Դա նույնն է, եթե ծառից ճյուղն ընկնի վրադ: Թող դա քեզ չանհանգստացնի, ուղղակի գնա՛ քո ճանապարհով, կարծես թե ոչինչ չի պատահել:

❖❖❖

Մի անգամ հին հնդկացին իր թոռանը պատմում է կյանքի մի ճշմարտություն.
- Յուրաքանչյուր մարդու ներսում պայքար է գնում, որը շատ նման է երկու գայլերի կռվին: Մի գայլը ներկայացնում է չարիքը՝ նախանձ, խանդ, հիասթափություն, եսասիրություն, գոռոզություն, սուտ: Մյուս գայլը ներկայացնում է բարին՝ խաղաղություն, սեր, հույս, սիրալիրություն, ճշմարտություն, բարություն, հավատարմություն:
Պապի խոսքերից մինչև հոգու խորքը ցնցված՝ փոքրիկ հնդկացին մի պահ մտքի մեջ է ընկնում, իսկ հետո հարցնում է.
- Իսկ վերջում ո՞ր գայլն է հաղթում:
Ծեր հնդկացու դեմքին հազիվ նկատելի ժպիտ է հայտնվում, և նա պատասխանում է.
- Միշտ հաղթում է այն գայլը, որին դու կերակրում ես:

❖❖❖

Լինում է, չի լինում մի դյուրաբորբոք և անզուսպ երիտասարդ: Եվ մի օր նրա հայրը նրան մեխերով լի պարկ է տալիս և ասում, որ ամեն անգամ, երբ նա չկարողանա զսպել իր ցասումը, մի մեխ խփի ցանկապատի սյանը:
Առաջին օրը սյան վրա մի քանի տասնյակ մեխ է հայտնվում: Հաջորդ շաբաթ նա սովորում է զսպել ցասումը, և ամեն ժամ սյան մեջ մեխվող մեխերի թիվը սկսում է պակասել: Երիտասարդը հասկանում է, որ ավելի հեշտ է վերահսկել սեփական խառնվածքը, քան մեխ խփել:
Վերջապես վրա է հասնում այն օրը, երբ նա ոչ մի անգամ ինքնակառավարումը չի կորցնում: Նա այդ մասին պատմում է հորը, որն էլ պատասխանում է, որ այս անգամ էլ ամեն օր, երբ որդուն կհաջողվի ինքն իրեն զսպել, նա կարող է մեկական մեխ դուրս քաշել սյունից:

Ժամանակ է անցնում, և գալիս է այն օրը, երբ նա կարողանում է հաղորդել հորը, որ սյան մեջ այլևս ոչ մի մեխ չի մնացել: Այդ ժամանակ հայրը վերցնում է որդու ձեռքը և մոտեցնում ցանկապատին:

- Քեզ մոտ լավ ստացվեց, սակայն տեսնո՞ւմ ես, թե ինչքան անցք կա սյան վրա: Այն այլևս երբեք նախկինը չի լինի: Երբ մարդուն ինչ-որ չար բան ես ասում, նրա մոտ մնում է նույնպիսի սպի, ինչպիսին այս անցքերն են: Եվ նշանակություն չունի, թե քանի անգամ դրանից հետո դու ներողություն կխնդրես: Սպին կմնա:



# ԳԼՈՒԽ 3

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿՐՈՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ 5-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿՐՈՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ 5-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ




Տարին երեք անգամ, 2003-ից սկսած, Ղազախստանի նոր մայրաքաղաք Աստանայում անցկացվում է Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների համագումարը: Համագումարին հավաքվում են բոլոր դավանանքների և կրոնական ուղղությունների ներկայացուցիչները հինգ մայրցամաքներից, որպեսզի միասին մշակեն ազգամիջյան համագործակցության և միջդավանանքային երկխոսության իդեալական մոդել:

2015թ. հունիսին տեղի ունեցավ Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների 5-րդ համագումարը: Ինչպես ասել է մասնակիցներից մեկը. «Երբ մարդիկ տեսնում են, որ իրար կողք քայլում են քրիստոնյա քահանան, մուսուլման իմամը, այլ կրոնների ներկայացուցիչները, և նրանք միմյանց հետ զրուցում ու ժպտում են միմյանց, կարծում եմ, որ դա ցանկացած զեկույցից ու ցանկացած ազդագրից լավ է»:

Պատահական չէ, որ Ղազախստանն ընտրվել է որպես գլոբալ հոգևոր դիվանագիտության վայր: Այստեղ բնակվում են շուրջ 130 ազգությունների և ավելի քան 17 տարբեր դավանանքների ներկայացուցիչներ: Անկախության տարիների ընթացքում Ղազախստանում ստեղծվել է ազգամիջյան և միջկրոնական համաձայնության հասարակության մի յուրահատուկ մոդել, որը ողջ աշխարհում ճանաչվել է որպես «ղազախստանյան ուղի»: Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների համագումարն անցկացվում է Խաղաղության ու համաձայնության պալատում, որը կառուցվել է հատուկ այս համագումարների անցկացման համար և ունի բուրգի տեսք: Այս առանձնահատուկ պալատը կառուցվել է աշխարհահռչակ ճարտարապետ Նորման Ֆոսթերի նախագծով և խորհրդանշում է անկախ Ղազախստանը, որի գիրկը բաց է բոլոր ազգերի ու դավանանքների ներկայացուցիչների համար:

Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների հանդիպումներն սկսել են անցկացվել ՂՀ նախագահ Նուրսուլթան Նազարբաևի նախաձեռնությամբ և հովանու ներքո, կրել շարունակական բնույթ (2003, 2006, 2009, 2012, 2015թթ.) և այդպիսով նոր հազարամյակում մարդկության միջդավանանքային երկխոսության սկիզբը դրել: Այստեղ հավաքվում են քրիստո-



նեության, մուսուլմանության, բուդդիզմի, հուդայիզմի, հինդուիզմի, դաոսիզմի, սինտոիզմի ներկայացուցիչները, և դա կարելի է գնահատել որպես ղազախական հողում քաղաքակրթությունների հանդիպումներ: Մինչ այս, որպես նման միջոցառումների կազմակերպիչներ՝ հանդես են եկել հենց առաջատար կրոնների ու դավանանքների ներկայացուցիչները. հիշենք աշխարհի կրոնների ու դավանանքների ներկայացուցիչների հանդիպումները իտալական Ասիզի քաղաքում 1986թ. հոկտեմբերին և 2002թ. հունվարին:

ՂՀ Մշակույթի և սպորտի նախարարության Կրոնների հարցերով կոմիտեի նախագահ Գալիմ Շոյկինը պատմում է, որ Աստանայի համագումարի նպատակը հակամարտություններ թույլ չտալն է: «Դա ամենագլխավոր խնդիրն է, որը համագումարը կատարում է, և դրանում է նրա հիմնական առանձնահատկությունը՝ հարթակ ապահովել երկխոսության համար: Այս համագումարը հնարավորություն է տալիս կրոնական կազմակերպությունների առաջնորդներին՝ ինչքան կարելի է հաճախ հանդիպելու և միմյանց հասցնելու սեփական մտքերը: Ընդ որում ոչ միայն տեղ հասցնելու սեփական մտքերը, այլև լսելու և ունկնդրելու այլ դավանանքների ներկայացուցիչների կարծիքները: Այստեղ խոսքը ոչ թե աստվածաբանական քննարկումների, այլ աշխարհի, հասարակության անվտանգության, տարբեր կրոնների, ազգությունների մարդկանց, պետությունների խաղաղ փոխգործակցության մասին է:

Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների 1-ին համագումարն աշխարհին ցուցադրեց տարբեր կրոնների ներկայացուցիչների համագործակցության և միասնական լինելու գաղափարների իրականացման ժամանակին լինելը և անհրաժեշտությունը՝ հանուն ողջ աշխարհի մարդկանց խաղաղ ու արժանի կյանքի: Նրա նպատակն էր միջազգային միջդավանանքային մշտապես գործող ինստիտուտի ստեղծումը կրոնների երկխոսության իրականացման և համաձայնեցված որոշումների ընդունման համար: Համագու-






մարի գաղափարին հավանություն են տվել այնպիսի քաղաքական գործիչներ, ինչպիսիք են Քոֆի Անանը, Ջորջ Բուշը, Մարգարեթ Թետչերը, Ծյան Ծեմինը, Նելսոն Մանդելան, Ժիսկար դ՛Էստենը և այլն:

Եվ այսպես, առաջին համագումարից ի վեր 12 տարիների ընթացքում այս հոգևոր գագաթաժողովը միջազգային ճանաչում է ստացել: Եթե 2003թ. 1-ին համագումարին մասնակցում էին միտրոպոլիտներ, կարդինալներ, իմամներ 13 երկրների 17 կազմակերպություններից, ապա 5-րդ համագումարին արդեն 80 պատվիրակություն էր 42 երկրից: Բոլոր 5 համագումարների աշխատանքներին մասնակցել են նաև Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչները: Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների 5-րդ համագումարն արդեն անվանում են ամենամասշտաբայինը նման համաժողովների անցկացման պատմության մեջ: Այն յուրահատուկ էր նաև նրանով, որ բացի հոգևոր դեմքերից՝ նրա աշխատանքին մասնակցում էին նաև բարձր կարգի քաղաքական գործիչներ, այդ թվում ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր քարտուղարները, Հորդանանի թագավորը, Ֆինլանդիայի նախագահը:

Կրոնական առաջնորդների և քաղաքական գործիչների երկխոսությունն ուղղված էր ժամանակակից աշխարհի առավել հրատապ խնդիրների լուծման համար ջանքերի միավորմանը, ինչպիսիք են սովը, աղքատությունը, ռազմական հակամարտությունները և տեխնածին աղետները: Այժմ մենք այն բանի վկաներն ենք, որ կրոնն օգտագործվում է քաղաքական նպատակներով, ահա-

բեկչական գործողություններին տրվում է կրոնական երանգավորում: Ժամանակակից համաշխարհային պրակտիկան ցույց է տալիս, որ այնտեղ, որտեղ կրոնը քաղաքականացված է, և՛ աշխարհիկ պետություններում, և՛ այն երկրներում, որտեղ պետական գաղափարախոսությունը հիմնված է կրոնի վրա, որոշակի խնդիրներ են առաջանում: Մինչդեռ կրոնի հիմնական նպատակն է մարդու հոգևոր կատարելությունը: Հինգերորդ հոգևոր գագաթաժողովի արդյունքներով նրա ավելի քան 500 մասնակիցներ հռչակագիր ընդունեցին, որի հիմնական մեխն էր ժամանակակից աշխարհում հոգևորության և բարոյականության վերածնման անհրաժեշտությունը:

Այսօր մեր քաղաքականության համար ամենաարդիական խնդիրը պետք է դառնա թույլ չտալը, որ քաղաքական խնդիրները ի շահ կրոնի օգտագործմանը, կրոնական դիրքորոշումների պատճառով քաղաքական հակամարտությունների առաջացմանը: Անհրաժեշտ է համաշխարհային մշակույթն ու կրոնական բազմազանությունն ընկալել որպես մարդու գոյության ու զարգացման ձև. չէ՞ որ մեծ հաշվով բոլոր կրոններն էլ տանում են դեպի Միակ Աստված, միայն թե յուրաքանչյուրը Նրան յուրովի է անվանում: Ուստի այսօր շատ բան է կախված քաղաքական գործիչներից, նրանց՝ իրենց հետևորդներին արած հայտարարություններից, կոչերից: Ինչպես ասում էր հնդիկ ժողովրդի հոգևոր առաջնորդ, առանց բռնության փիլիսոփայության կողմնակից Մահաթմա Գանդին, «Աստված կրոն չունի»:

Անկասկած, Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների հինգ համագումարներն ունեն պատմական նշանակություն համաշխարհային մասշտաբով, խոշոր, կարևոր իրադարձություն են և իրենց ավանդն են ներդնում միջդավանանքային երկխոսության գործում: Եվ պատահական չէ, որ դրանք անցնում են Ղազախստանում՝ Եվրասիայի կենտրոնում, որը միշտ եղել և շարունակում է լինել խաչմերուկ, Արևելքի ու Արևմուտքի տարբեր կրոնական ավանդույթների, մշակույթների և քաղաքակրթությունների հանդիպման ու երկխոսության վայր:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ. ԱՇԽԱՏԱՆՔ ՄԻԱՍԻՆ

21-րդ դարի սկիզբը նշանավորվեց պատերազմների ու հակամարտությունների աճով: Մոլորակի տարբեր ծայրերում մարդիկ ավելի ու ավելի շատ են խոսում ծայրահեղական տրամադրությունների, ահաբեկչական գործողությունների, անհանդուրժողականության և բացեիբաց թշնամանքի վրա կրոնական գործոնի ազդեցության մասին: Մինչդեռ կրոնի ու քաղաքականության հարաբերակցությունն առավել հրատապ և սուր թեմաներից է ինչպես կրոնական գործիչների ու աստվածաբանների, այնպես էլ հենց քաղաքական գործիչների համար: Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում կայացած 2015թ. հունիսին կայացած Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների 5-րդ համագումարը հավաքել էր ոչ միայն հայտնի կրոնական, այլև անվանի քաղաքական գործիչներին՝ մի քանի երկրների նախագահների, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունին, ԵԱՀԿ գլխավոր քարտուղարին և այլն: Միջոցառման հիմնական շեշտը դրված էր հենց կրոնական ու քաղաքական գործիչների երկխոսության վրա:




Ամեն տարի Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում, Խաղաղության ու համաձայնության պալատում անցկացվում են արդեն ավանդական դարձած Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների համագումարները: Նրանց նպատակն է՝ աշխարհի բոլոր դավանանքների և մշակույթների ներկայացուցիչների միջև երկխոսությունը, հանդուրժողականության գաղափարների առաջքաշումը՝ ի հակակշիռ ատելության ու կրոնական ծայրահեղականության գաղափարախոսության: Հինգերորդ համագումարի թեման շատ հրատապ էր՝ «Կրոնական առաջնորդների և քաղաքական գործիչների երկխոսություն՝ հանուն խաղաղության ու զարգացման»: Համագումարի աշխատանքներին մասնակցում էին 80 պատվիրակություններ աշխարհի 42 երկրներից, որոնք ներկայացնում էին տարբեր դավանանքներ ու կրոններ՝ քրիստոնեություն, իսլամ, հուդայիզմ, հինդուիզմ, բուդդիզմ և այլն:

Ինչպես հինգերորդ, այնպես էլ նախորդ համագումարներին մասնակցում էին նաև Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչները: Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը, ով Ուկրաինայի թեմի առաջնորդն է, Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների համագումարի քարտուղարության մշտական անդամը, ասաց, որ «Հայ առաքելական եկեղեցին ողջունում է Ղազախստանի նման պատրաստակամությունը և նախաձեռնությունը: Եվ ՀԱԵ առաջնորդն իր սեփական մասնակցությամբ ցույց տվեց, որ մեր եկեղեցին միշտ պատրաստ է նման գործնական քայլերի, և մենք միշտ բաց ենք այսպիսի մասշտաբի միջոցառումներին մասնակցության համար»:





«Բուդդայի ուսմունքի համաձայն՝ մենք բոլորս նույնն ենք՝ անկախ ազգից ու կրոնից, մենք բոլորս մարդկային էակներ ենք և ունենք միևնույն նպատակը՝ միասին ապրել խաղաղության մեջ: Բուդդան ասում էր. «Ձեր մեջ իսկական սեր զարգացրեք»: Իսկ իսկական սեր նշանակում է կարեկցանքի վրա հիմնված համբերություն», - համագումարի ժամանակ ասաց բուդդայական վանական Ալթանը Մոնղոլիայից:

Կրոնական ծայրահեղականության հաղթահարման և քաղաքական ու կրոնական գործիչների համագործակցության հարցերը երկու օր քննարկվում էին Աստանայում տարբեր նիստերի ընթացքում: Այդ նիստերի թեմաները բավականին հրատապ էին. «Կրոնական և քաղաքական գործիչներ. պատասխանատվություն մարդկության առջև», «Կրոնի ազդեցությունը երիտասարդության վրա. կրթություն, գիտություն, մշակույթ և ԶԼՄ», «Կրոն և քաղաքականություն. նոր միտումներ և հեռանկարներ» և «Համաշխարհային և ավանդական կրոնների միջև փոխադարձ հարգանքի ու ըմբռնման հիման վրա երկխոսություն՝ ի շահ խաղաղության, անվտանգության և ներդաշնակության»:

«Շատ կարևոր է, որ կրոնական առաջնորդները և գիտնականները երես առ երես խոսեն աշխարհում տեղի ունեցող վերջին իրադարձությունների մասին, մանավանդ Մերձավոր Արևելքում: Ցավոք, բռնությունը, կրոնական ծայրահեղականությունը օրեցօր աճում են: Կարծում եմ, որ կրոնական գործիչները և քաղաքական գործիչները պետք է համագործակցեն աշխարհին խաղաղություն ու արդարություն բերելու համար լուծում գտնելու նպատակով», - լրագրողներին ասաց Ալի Մուհամմեդ Հելմին՝ Իրանի Միջկրոնական երկխոսության կենտրոնի գլխավոր տնօրենը:

Համագումարի ժամանակ նման կարծիք էին արտահայտում համարյա բոլոր ելույթ ունեցողները, որոնք ճիշտ չեն համարում քաղաքական շահերի համար կրոնական գործոնի օգտագործումը: Ինչպես նշեց ՂՀ-ում Պապական նվիրակ, արքեպիսկոպոս Միգել Մաուրի Բուենդիան, «քաղաքական գործիչներն իրենց հերթին, կրոնական գործիչներն իրենց հերթին կարող են կոչ անել իրենց քաղաքացիներին ու հետևորդներին միասին աշխատել խաղաղության, համաձայնության, հանդուրժողականության համար: Կարծում եմ, որ այս համագումարը կարող է օգնել աշխարհը դարձնել ավելի լավ, մանավանդ այնպիսի





հանգամանքներում, երբ որոշ ուժեր օգտագործում են կրոնը այլ նպատակների համար»:

«Հանուն կրոնի կատարված հանցագործությունները հանցանք են նրա դեմ»,- այս մասին հայտարարեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունը՝ ելույթ ունենալով համագումարի ժամանակ:

«Շատ կարևոր է, որ հաջողվել է համագումարին հրավիրել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունին: ՄԱԿ-ը միշտ ընդգծել է, որ այն աշխարհիկ կազմակերպություն է և կրոնի հետ կապ չունի: Իսկ ահա այսօր պարզ է դառնում, որ առանց կրոնի հնարավոր չէ խաղաղության հասնել, և որ առանց կրոնական առաջնորդների անհնարին է կարգավորել նույնիսկ քաղաքական հակամարտությունները: Եվ սա իրոք առաջընթաց է», - կարծում է Մոսկվայի պատրիարքարանի ներկայացուցիչ Հայր Դմիտրի Սաֆոնովը:

Հինգերորդ համագումարի մասնակիցները պայմանավորվեցին հետագայում էլ աջակցել կրոնական առաջնորդների և քաղաքական գործիչների երկխոսությանը՝ բոլոր ռասաների ու կրոնների ներկայացուցիչների համար կայունության ու անվտանգության ապահովման, ինչպես նաև մեր մոլորակի վրա բոլոր հակամարտությունների կանխման ու կարգավորման նպատակով:

«Կա կրոնական առաջնորդների կարծիք, կան հենց կրոնի դոգմաներ, իսկ կան նաև ուժեր, որոնք օգտագործում են կրոնը սեփական քաղաքական նպատակների ու շահերի համար: Եվ տվյալ դեպքում կրոնական կազմակերպությունների մասնակցությունը կրոնական գործիչների հետ ուղիղ երկխոսությանը հնարավորություն է տալիս հայտարարել այն մասին, որ կրոնը քաղաքակա-

նությունից դուրս է, և որ քաղաքական գործիչներն օգտագործում են կրոնն իրենց նպատակների համար, դա ճիշտ չէ, դա խախտում է ներդաշնակության կանոնները մեր կյանքում»,- կարծում է Գալիմ Շոյկինը՝ ՂՀ մշակույթի և սպորտի նախարարության Կրոնների հարցերով կոմիտեի նախագահը:

Որպեսզի կյանքի ներդաշնակության կանոնները չխախտվեն, և կրոնն էլ քաղաքական գործիչների կողմից չօգտագործվի սեփական նպատակների համար, Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների 5-րդ համագումարի մասնակիցները հանդես եկան հռչակագրով, որում իրենց անհանգստությունն արտահայտեցին միջկրոնական, ազգամիջյան լարվածության, քաղաքական անկայունության և աշխարհի տարբեր հատվածներում ռազմական բախումների աճի կապակցությամբ: Դատապարտելով արմատականության և անհանդուրժողականության բոլոր տեսակի դրսևորումները, այդ թվում նաև կրոնական՝ համագումարի մասնակիցները կոչ արեցին զինված հակամարտությունների կողմերին դադարեցնել բախումները, հայտարարել զինադադար և բանակցությունների միջոցով համաձայնագիր մշակել բռնության դադարեցման, խաղաղ քաղաքացիների պաշտպանության և աշխարհում բոլոր հակասությունների խաղաղ կարգավորման մասին:

Իր հերթին ՂՀ նախագահ Ն.Նազարբաևը, ով նման հոգևոր գագաթաժողովների անցկացման գաղափարի հեղինակն է, առաջարկեց Աստանայում ստեղծել Խաղաղության ու համաձայնության թանգարան: Արդեն որոշում է կայացվել, որ Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների հաջորդ համագումարը կկայանա 2018 թվականին:

Նշենք, որ Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների 1-ին համագումարը տեղի է ունեցել 2003թ. սեպտեմբերին Աստանայում Ղազախստանի նախագահի նախաձեռնությամբ: Համագումարի մասնակիցների կարծիքով՝ կրոնների երկխոսությունը կարող է հաղթահարել բռնությունը, ծայրահեղականությունն ու ահաբեկչությունն աշխարհում, որոնք իրոք դարձել են 21-րդ դարի ամենահրատապ խնդիրները:

«Արմեդիա» ՏՎԳ





***Գալիմ Շոյկին***
*Ղազախստանի Մշակույթի և սպորտի նախարարության Կրոնների հարցերով կոմիտեի նախագահ*

## ՂԱԶԱԽՍՏԱՆ՝ «ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ»

***- Ի՞նչ եք կարծում, Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների համագումարին տեղի ունեցած երկխոսությունը որքանո՞վ կարող է նպաստել աշխարհում հակամարտությունների կարգավորմանը:***

- Կցանկանայի սկսել նրանից, որ համագումարի նպատակը հակամարտությունների կանխումն է: Դա ամենագլխավոր խնդիրն է, որը համագումարը կատարում է, և դրանում է դրա հիմնական առանձնահատկությունը՝ հարթակ ապահովել երկխոսության համար: Մարդկային հարաբերություններում էլ են որոշակի խոչընդոտներ, տեսանելի ու անտեսանելի պատեր առաջանում, երբ նրանք երկար ժամանակ շփվում են միմյանց հետ: Արդյունքում մարդը կամ դադարում է այդ մարդկանց հետ շփվել, կամ էլ այդ շփումն արդեն այն չի լինում: Կարծում եմ՝ այս համագումարը հնարավորություն է տալիս կրոնական կազմակերպությունների առաջնորդներին՝ ինչքան կարելի է հաճախ հանդիպել և միմյանց հասցնել սեփական մտքերը: Ընդ որում, ոչ միայն տեղ հասցնել սեփական մտքերը, այլև լսել և ունկնդրել այլ դավանանքների ներկայացուցիչների կարծիքները: Նիստերի ժամանակ համարյա միշտ միատեսակ մոտեցում է հնչում տարբեր դավանանքների ներկայացուցիչներից այս կամ այն խնդրի առնչությամբ, քանի որ խոսքը ոչ թե աստվածաբանական քննարկումների, այլ աշխարհի, հասարակության անվտանգության, տարբեր կրոնների, ազգությունների մարդկանց, պետությունների խաղաղ փոխգործակցության մասին է: Սա կոնկրետ ազդակ է մարդկանց համար. եթե առաջնորդները խոսում են, նստած են միասին մի սեղանի շուրջ և համաձայնվում են միմյանց հետ, ուրեմն այլ կրոնների ներկայացուցիչները թշնամի

չեն, նրանց հետ էլ կարելի է նստել կլոր սեղանի շուրջ և միասին ջանքեր նախաձեռնել՝ խաղաղ ապրելու համար:

***- Հինգերորդ համագումարի նիստերից մեկը նվիրված էր կրոնին ու քաղաքականությանը: Դուք ասացիք, որ կրոնական առաջնորդները կարող են ազդել մարդկանց վրա, իսկ նրանք ինչպե՞ս կարող են ազդել քաղաքական գործիչների վրա, ովքեր որոշումներ են կայացնում:***

- Եթե նախկինում երկխոսության հարթակներ կային, որտեղ քաղաքական գործիչները հանդիպում և տարբեր խնդիրներ էին քննարկում, այդ թվում կրոնական իրավիճակը, ապա նման երկխոսությունը սովորաբար միակողմանի էր լինում: Քաղաքական գործիչները, շփվելով միմյանց հետ, շատ հազվադեպ են ունկնդրում կրոնական առաջնորդներին, մինչդեռ կրոնական գործոնի անտեսումը սովորաբար հանգեցնում է խնդիրների ավելացմանը, քանի որ կա կրոնական առաջնորդների կարծիք, կան հենց կրոնի դոգմաներ, իսկ կան նաև ուժեր, որոնք օգտագործում են կրոնը սեփական քաղաքական նպատակների ու շահերի համար: Եվ տվյալ դեպքում կրոնական կազմակերպությունների մասնակցությունը կրոնական գործիչների հետ ուղիղ երկխոսությանը հնարավորություն է տալիս հայտարարելու այն մասին, որ կրոնը քաղաքականությունից դուրս է:

Այն, որ քաղաքական գործիչներն օգտագործում են կրոնն իրենց նպատակների համար, դա ճիշտ չէ, դա խախտում է ներդաշնակության կանոնները կրոնական կյանքում, քանի որ բոլորս շատ լավ հասկանում ենք, և այս համագումարն էլ ցույց է տալիս, որ ցանկացած կրոնում կա կառուցողական սկիզբ, և այն ուղղված է դեպի մարդկանց զարգացումը, հասարակության, պետության հետ մարդու ներդաշնակությունը: Կրոնը նպաստում է մարդու հոգևոր աճին, ուղղված է դեպի բարեգթություն, մարդու մեջ հայտնաբերում ու զարգացնում է ամենալավ հատկանիշները: Իսկ երբ ինչ-որ հակամարտություններ են առաջանում կրոնական հողի վրա, մենք միշտ կարող ենք գտնել այն սադրող քաղաքական ենթատեքստ: Ուստի շատ կարևոր է, որ կրոնական գործիչների կարծիքը հաշվի առնեն նաև քաղաքական գործիչները և աշխատեն չապականել կրոնը:

Ես միշտ սիրում եմ կրկնել. քաղաքականությունն ու քաղաքական գործիչները հավերժական չեն, իսկ կրոնը հավերժական է, նրա արժեքներն ու դոգմաները հնարավոր չէ ոչնչացնել: Կարծում եմ, որ կրոնական առաջնորդների համագումարի ներուժը շատ մեծ է, մանավանդ երբ կրոնական գործիչների հետ կենսական խնդիրները քննարկում են նաև քաղաքական գործիչները: Նրանք մեկ անգամ ևս կարող են համոզվել, որ կրոնն այսօր կարող է նաև դրական դեր խաղալ, և կրոնի արժեքները կարելի է ուղղել դրական հունով հասարակության զարգացման համար:



***- Ինչպե՞ս կգնահատեք Աստանայի համագումարի արդյունքները:***

- Նախ համագումարի աշխատանքներին մասնակցում էին ազդեցիկ քաղաքական և հասարակական գործիչներ, այսինքն՝ խոսքն այն մասին է, որ համագումարն արդեն հասնում է նոր մակարդակի: Օրինակ՝ Հորդանանի թագավոր Աբդուլլա 2-րդի մասնակցությունը, ով հենց խաղաղարար, խաղաղության ու համաձայնության ապահովմանն ուղղված նախաձեռնությունների նախաձեռնող է, ընդ որում՝ այդ պետությունը գտնվում է բարդ տարածաշրջանում, որտեղ շատ խնդիրներ կան: Իրաքի ներկայացուցիչները խոսում էին ոչ թե այլ բաների, այլ այն մասին, թե ինչ է տեղի ունենում իրենց երկրում, և ինչից են նրանք տառապում: Եվ այս ամենը մեծ նշանակալիություն է տալիս այս համաժողովին:

Համագումարի աշխատանքներին մասնակցում էր նաև այնպիսի խոշոր միջազգային կազմակերպություն, ինչպիսին ՄԱԿ-ն է՝ ի դեմս գլխավոր քարտուղար Պան Գի Մունի: Գիտենք, որ ՄԱԿ-ը կոչված է ողջ աշխարհում խաղաղություն ու կայունություն ապահովելուն, սակայն այն օգտագործում է միայն քաղաքական գործիքներ, այն քաղաքական մարմին է: Այսօր մենք այդ խնդիրն էինք քննարկում, որպեսզի ՄԱԿ-ը զարգանա, իր նպատակներին հասնելու համար ներգրավի ոչ միայն քաղաքական, այլև ուրիշ գործիքներ:

***- Ղազախստանը բազմազգ և բազմակրոն երկիր է: Ասացե՛ք, խնդրեմ, ինչպե՞ս է ձեզ հաջողվում ապրել այստեղ խաղաղության ու համաձայնության մեջ:***

- Սովորաբար, այդպիսի հարցին ի պատասխան, ես ասում եմ, որ դա մեր մենթալիտետն է, որը ձևավորվել է դարերի ընթացքում: Համաշխարհային զարգացման ընթացքում Կենտրոնական Եվրասիան, որտեղ մենք գտնվում ենք, քաղաքակրթությունների տեղաշարժի ուղիների, տարբեր մշակույթների հատման կետն էր: Այստեղով էր անցնում Մեծ մետաքսի ճանապարհը: Նույնիսկ Եվրասիայով անցնող զավթիչներն այստեղ են թողել իրենց մշակույթի մի մասնիկը: Եվ ժամանակի ընթացքում այս տարածքում բնակվող բնակչության մոտ ձևավորվել է մի հատուկ մտածողություն, որը շատ բաց է դեպի այլ մշակույթները, էթնոսներն ու կրոնները: Եվ Ղազախստանի պատմությունը խոսում է այն մասին, որ դարեր առաջ այստեղ ապրել են և՛ բուդդիստներ, և՛ քրիստոնյաներ: Նույնիսկ այն ողբերգական ժամանակահատվածը, որ ապրել է մեր երկիրը խորհրդային ժամանակ, երբ քաղաքական ռեպրեսիաների, տեղահանությունների հետևանքով շատ զոհեր կային, այն ժամանակ մեր Ղազախստանը դարձավ բարեկամության «լաբորատորիա»:

Այստեղ տարբեր ազգությունների ներկայացուցիչներ եկան աղետալի վիճակում, և միակը, որ նրանց կարող էր փրկել, տեղի բնակչությունն էր, որը նրանց կերակրեց, ապաստարան տվեց: Այսօր և՛ այդ ժողովուրդների, և՛ ղազախների սերունդները հիշում են ընդհանուր անցյալի մասին, դա գենետիկորեն է դրված: Մեզ մոտ յուրահատուկ մշակույթ է, և մենք խաղաղ ենք ապրում միայն այսպիսի մշակույթի շնորհիվ: Եթե մենք այն կորցնենք, մենք ապագա չունենք: Ահա այս ամենն էլ ձևավորել է խաղաղասիրության, այլ մշակույթների նկատմամբ հանդուրժողականության մենթալիտետը, և դա մենք անկախության տարիներին վերածեցինք մեր առավելության, քանի որ մենք այսօր փոխադարձորեն հարստանում ենք այդ մշակույթներով: Մենք տոնում ենք բոլոր տոները, թե՛ ազգային, թե՛ կրոնական, հանգստանում ենք միասին: Դա մեր կյանքի գեղեցկությունն է:

***- Ինչքանո՞վ է Ղազախստանի նախագահի «100 քայլ» ծրագիրը հաշվի առնում երկրի բազմակրոնության կոմպոնենտը:***

- Այդ ծրագիրը հիմնվում է հենց այն բազայի վրա, որի վրա ձևավորվել է մեր ժողովրդի մենթալիտետը: «100 քայլ» ծրագրում, որը սահմանում է մեր երկրի զարգացման ծրագիրը, ներկայացվում է Ղազախստանի զարգացման նոր փուլը, բոլորովին նոր մոտեցումներ: Դրանց մեջ կա 6 քայլ, որոնք անմիջականորեն վերաբերում են մեր քաղաքացիների միասնական ապագային, և այդտեղ մեր բազմազգ, բազմակրոն բազմազանությունը պետք է առաջատար դեր խաղա մյուս քայլերի իրականացման համար, քանի որ առանց խաղաղության ու համաձայնության անհնարին է հասնել տնտեսական և այլ զարգացման: Գլոբալ սպառնալիքների, կրոնական ծայրահեղականության մարտահրավերների, կրոնական-էթնիկական տարաձայնությունների, մեր շուրջը կատարվող իրադարձությունների ֆոնին մեզ հարկավոր է համախմբվել: Միայն ներսից համախմբված պետությունը, որը միավորված է մեկ նպատակի և գաղափարախոսության շուրջ, ունի իր ապագան:



***Տեր Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյան***
*Հայ առաքելական եկեղեցու Ուկրաինայի թեմի առաջնորդ, Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների համագումարի քարտուղարության մշտական անդամ*

# ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ. «ՄԵՆՔ ՄԻՇՏ ԲԱՑ ԵՆՔ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ»

***- Պատմե՛ք, խնդրեմ, Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների համագումարներին Հայ առաքելական եկեղեցու մասնակցության մասին: Ի՞նչ նպատակ է հետապնդում մեր եկեղեցին՝ մասնակցելով այս համաժողովին:***

- Մեր եկեղեցու մասնակցությունը սկսվել է 2-րդ համագումարից: Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ հայ եկեղեցու պատվիրակությունն ընդունել է հրավերը և կանոնավոր կերպով մասնակցում է նաև կազմկոմիտեի նիստերին, որը կոչվում է Համագումարի քարտուղարություն: Եվ համագումարի, և՛ քարտուղարության ժողովներն անցնում են գործնական մթնոլորտում, ունեն ընդլայնվելու միտվածություն: 2-րդ համագումարից հետո Քարտուղարությունն ուներ 12 մասնակից, այժմ թիվը կրկնապատկվել է: Արդեն այսօր՝ 5-րդ համագումարին, 70-ից ավելի պատվիրակություն կա, ինչը վկայում է համագումարի ընդլայնվելու միտման և նրա գաղափարների տարածման մասին:

Շատ հետաքրքիր է ընդհանուր ձևաչափը: Ղազախստանի նախագահ Նազարբաևի նախաձեռնությամբ և առաջարկով այն հաստատվել է երկխոսության հիմքի վրա, և այդ երկխոսությունը մենք՝ թե՛ որպես հոգևորականներ, թե՛ որպես համաշխարհային հանրության անբաժանելի մասնիկ, դիտում ենք որպես շատ կարևոր գործողություն: Դա կարևոր է նաև խաղաղության համար, չէ՞ որ մեկուսացումը խնդիրների հաղթահարման չի բերում:

***- Աստանայում այսօր հավաքվել են տարբեր կրոնների ներկայացուցիչներ, և դա շատ ոգևորիչ է: Կարո՞ղ է այս համագումարը հակամարտություններից եռացող աշխարհի համար ուղերձ լինել:***

- Բացման ժամանակ Ղազախստանի նախագահը մատնանշեց, որ աշխարհը գնում է դեպի խնդիրների կարգավորում, բայց դրանք օր օրի ավելանում են: Մենք՝ որպես քրիստոնյաներ, գիտենք, որ մեր կյանքում խնդիրները միշտ էլ շատանալու են, սակայն մենք այդ խնդիրները տեսնելու և դրանց արձագանքելու կամք պետք է ունենանք: Չպետք է գլուխներս հողի մեջ թաղենք, այլ բաց ճակատով պետք է նայենք եղած խնդիրներին. սա է հենց համագումարի պատգամը:

Եթե դիտենք առաջին համագումարից մինչև հիմա ընկած ժամանակահատվածը, թե այս 15 տարում ինչ փոփոխություններ են տեղի ունեցել համաշխարհային առումով, ապա պետք է արձանագրենք, որ պատերազմները շատացել են, ի հայտ են եկել ֆինանսական ճգնաժամեր: Իսկ մենք ի՞նչ ենք անում նման խնդիրները հաղթահարելու համար: Բազում դրական գործողությունների շարքին պետք է դասել նաև այս համագումարը: Սա մի միջոց է, գործիք՝ դժվարությունները տեսնելու և լուծումներ տալու համար:

***- Ինչո՞վ է տարբերվում 5-րդ համագումարը նախորդներից:***

- Ես տեսնում եմ ձևաչափի փոփոխություն. բացի կրոնական առաջնորդներից՝ այժմ համագումարին մասնակցում են նաև անվանի քաղաքական գործիչներ:

***- Կարո՞ղ ենք ակնկալել, որ մեր եկեղեցին ակտիվորեն կշարունակի մասնակցել նման գագաթաժողովներում:***

- Նախատեսվում է, որ համագումարները կանցկացվեն կանոնավոր կերպով, և Ղազախստանն էլ պատրաստակամություն է հայտնել անցկացնելու դրանք: Մենք ողջունում ենք այդ պատրաստակամությունը: Եվ Վեհափառ Հայրապետ Գարեգին 2-րդը իր անձնական մասնակցությամբ ցույց տվեց, որ մեր եկեղեցին միշտ պատրաստ է նմանատիպ գործնական քայլերի: Մենք միշտ բաց ենք խաղաղությանը, հասարակությունների, երկրների միջև փոխհարաբերությունների բարելավմանն ուղղված նախաձեռնություններին: Լինելով ավանդական եկեղեցի, որն ունի իր դերն ու նշանակությունը համաշխարհային մշակույթում, մենք բոլորի հետ պետք է փնտրենք խնդիրների լուծման ուղիները և այդ կարևոր գործում կատարենք փորձի փոխանակում:





***Հայր Դմիտրի Սաֆոնով***
*Մոսկվայի պատրիարքարանի միջկրոնական շփումների սեկտորի վարիչ*

# «ՍԱ ՈՉ ԹԵ ԿՐՈՆԱԿԱՆ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է, ԱՅԼ ԿՐՈՆՈՎ ՔՈՂԱՐԿՎԱԾ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

***- Ո՞րն է Համաշխարհային և ավանդական կրոնների 5-րդ համագումարի հիմնական ուղերձը:***

- Այն, ինչ ես լսեցի համագումարի բացմանը ելույթ ունեցողների շուրթերից, ինձ շատ ուրախացրեց: Բացի միջկրոնական երկխոսությունից՝ ես զբաղվում եմ նաև շատ սուր խնդրով՝ քրիստոնյաների նկատմամբ հալածանքների խնդրով, ինչից այսօր տառապում են քրիստոնյաները աշխարհի շատ երկրներում: Այստեղ մի կարևոր խնդիր էլ բարձրաձայնվեց՝ կրոնական ծայրահեղականության խնդիրը կամ, ավելի ճիշտ, կրոնով քողարկված ծայրահեղականության խնդիրը, քանի որ կրոնը ծայրահեղականություն չի ծնում:

Շատ կարևոր է այսօր կրոնական առաջնորդների շուրթերից լսելը (մանավանդ մուսուլմանական), որ կրոնը բռնություն չի ծնում, այլ խաղաղության և բարիդրացիության կոչ է անում, քանի որ հենց կրոնով քողարկվելով, իսլամի սրբություններով քողարկվելով են այսօր գործում Իսլամական պետության, այլ ահաբեկչական խմբավորումների ծայրահեղականները, որոնք դաժանաբար ոչնչացնում են Սիրիայի, Իրաքի քրիստոնյա բնակչությունը: Այն ցեղասպանությունը, որն իրականացվեց 100 տարի առաջ, ձեզ՝ հայերիդ լավ հայտնի է, այսօր այն իրականացվում է Մերձավոր Արևելքի բոլոր քրիստոնյաների նկատմամբ՝ և՛ հայերի, և՛ ասորիների, և՛ կաթոլիկների, և՛ ուղղափառների և այլն: Այսինքն՝ կրոնի քողի տակ ընթանում է քրիստոնեության

համընդհանուր բնաջնջում, ահա, թե ինչն է սարսափելին: Եվ ոչ թե այն պատճառով, որ նրանք այլ ազգի են պատկանում (քանի որ պատմությունից արդեն գիտենք, թե ինչ է ազգամիջյան կոտորածը), այլ հենց միայն նրա համար, որ նրանք քրիստոնյա են: Եվ ծայրահեղականների կողմից այդ ատելությունը ոչ միայն քրիստոնյաների, այլև մնացած բոլոր այլադավանների նկատմամբ է: Այդ զանգվածային մահապատիժները, որոնք այսօր մեզ սարսափեցնում են, պետք է իրենց գնահատականը ստանան այս համագումարի կրոնական առաջնորդների կողմից:

Այսօր խոսվում էր այն մասին, որ կան որոշակի քաղաքական ուժեր, նույնիսկ պետություններ, որոնք միգուցե ոչ բացահայտորեն, բայց աջակցում ու ֆինանսավորում են, քաղաքական աջակցություն են ցուցաբերում այդ տեսակի ծայրահեղական շարժումներին: Սակայն միջազգային հանրությունը պետք է միասնական լինի:

Շատ կարևոր է, որ հաջողվել է համագումարին հրավիրել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունին: Սա, իրոք, կարևորագույն առաջընթաց է: Ես՝ որպես երկար տարիներ միջկրոնական խնդիրներով զբաղվող անձնավորություն, գիտեմ, թե ՄԱԿ-ը միշտ ինչ զգուշորեն է վերաբերվել կրոնին: Ժամանակին մենք առաջարկել ենք (դա շատ վաղուց էր) ստեղծել ՄԱԿ-ին կից մշտական գործող մարմին՝ կրոնական առաջնորդներից բաղկացած: Սակայն այդ դիրքորոշումը չընդունվեց: Կազմակերպությունը միշտ ընդգծել է, որ այն աշխարհիկ է և կրոնի հետ կապ չունի: Իսկ ահա այսօր պարզ է դառնում, որ առանց կրոնի հնարավոր չէ խաղաղության հասնել, և որ առանց կրոնական առաջնորդների անհնարին է կարգավորել նույնիսկ քաղաքական հակամարտությունները: Եվ սա իրոք առաջընթաց է:

Եվ այն, որ Ղազախստանին հաջողվել է հրավիրել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, և դա, հուսով եմ, կմտնի ՄԱԿ-ի օրակարգ, սա իրոք այս համագումարի կարևորագույն նվաճումն է:





***Շեյխ Մուհամմեդ Հուսեյն Հաջի Նայիբ Ալսաբեկով***
*Ղազախստանի մուսուլմանների փոխմուֆթի*

## «ՏԱՐԵՑՏԱՐԻ ԿՅԱՆՔԸ ԲԱՐԴԱՆՈՒՄ Է, Ի ՀԱՅՏ ԵՆ ԳԱԼԻՍ ՆՈՐ ԱՂԱՆԴՆԵՐ»

***- Ասացե՛ք, խնդրեմ, ո՞րն է Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների համագումարի կիրառական նշանակությունը:***

- Հանուն Ալլահի, ողորմած և բարեգութ: Այսօր մենք հավաքվել ենք այստեղ արդեն հինգերորդ անգամ, սա Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների 5-րդ համագումարն է: Այստեղ տարբերություն չի դրվում ազգությունների, կրոնների միջև: Հենց առաջին իսկ համագումարից իսկայական նշանակություն է տրվում «միջկրոնական համաձայնություն» տերմինին: Ղազախստանի նախագահը կարծես թե կանխատեսում էր այն, ինչ այսօր կատարվում է աշխարհում: Եվ յուրաքանչյուր համագումարի ժամանակ մենք չենք հոգնում կրկնել, որ խաղաղությունն ու համաձայնությունն անհրաժեշտ են աշխարհի բոլոր մարդկանց:

Տարեցտարի կյանքը բարդանում է, ի հայտ են գալիս նոր աղանդներ, նոր քաղաքական կուսակցություններ, որոնք խախտում են մարդկանց հանգստությունը, մեր գեղեցիկ մոլորակի հանգստությունը: Աստանան այսօր խաղաղություն և համաձայնություն է ցույց տալիս, քանի որ դա մեր երկրում ի սկզբանե եղել է: Ինշալլահ, տա՛ Աստված, որ հետագայում էլ այդպես լինի: Եվ մենք ցանկանում ենք, որ մյուս երկրներն էլ ապրեն խաղաղության ու համաձայնության մեջ: Մեր նախագահն աշխատում է, որ Ղազախստանում մենք տարբերություն չդնենք ազգությունների, դավանանքների միջև, որպեսզի բոլորն ապրեն մի ընտանիքի նման:

Ինչո՞ւ ենք մենք հավաքվում ամեն երրորդ տարին: Որովհետև այդ ընթացքում խնդիրներ են կուտակվում: Իսկ նման խնդիրները չի կարող լուծել մեկ առաջնորդը, մեկ երկիրը: Ուստի անհրաժեշտ է միասին հավաքվել ու միասին դրանք լուծել: Յուրաքանչյուր կրոն խաղաղության ու համաձայնության կոչ է անում, պահպանում է մարդկային կյանքը, քանի որ այն անգին է և մարդուն տրվում է Ամենաբարձրյալի կողմից:

Ուստի մարդը, գալով այս հիասքանչ աշխարհը, պետք է իրեն երջանիկ զգա: Երկրային կյանքը պետք է դրախտային լինի: Իսկ եթե մի տեղ խաղաղություն ու համաձայնություն կա, իսկ այլ տեղ չկա, ապա դա ի՞նչ երջանկություն է: Մենք չպետք է տեսնենք պատերազմներ, լաց լինող մարդկանց, արյուն: Մենք պետք է տեսնենք խաղաղ երկինք և բարգավաճող երկրներ:



***Արքեպիսկոպոս Միգել Մաուրի Բուենդիա***
*Ղազախստանում Պապական նվիրակ*

## «ՄԻ ԿՈՂՄԻՑ ՊԵՏՔ Է ՎԱՐՁԸ ՏԱՆՔ ԿԵՍԱՐԻՆ, ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ՝ ԱՍՏԾՈՒՆ»

Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների 5-րդ համագումարը, որը կանոնավոր կերպով անցկացվում է Աստանայում, փորձ է արել միավորել ոչ միայն հոգևոր առաջնորդներին, այլև քաղաքական առաջնորդներին: Դրանք երկու տարբեր մոտեցումներ են, և, ինչպես ասում են, մի կողմից պետք է գործը տանք Կեսարին, մյուս կողմից պետք է տանք Աստծուն: Քաղաքական գործիչներն իրենց հերթին, կրոնական գործիչներն իրենց հերթին կարող են կոչ անել իրենց քաղաքացիներին ու հետևորդներին միասին աշխատել խաղաղության, համաձայնության, հանդուրժողականության համար: Կարծում եմ, որ այս համագումարը կարող է օգնել աշխարհը դարձնել ավելի լավը, մանավանդ այնպիսի հանգամանքներում, երբ որոշ ուժեր օգտագործում են կրոնը այլ նպատակների համար:





***Դր. Ջ.Մ.Դավե***
*BAPS հետազոտական ինստիտուտի տնօրեն,*
*Նյու Դելի, Հնդկաստան*

## ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՉԴԻՄԵԼՆ Է»

***- Արդյո՞ք Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների 5-րդ համագումարը կնպաստի աշխարհում ռադիկալիզմի նվազեցմանը:***

- Ղազախստանը յուրահատուկ երկիր է: Ունենալով մուսուլմանական մեծամասնությամբ բնակչություն՝ այստեղ հանգիստ է նրանց նախագահի շնորհիվ: Եվ այս համագումարը, որն առաջին անգամ անցկացվել է 2003-ին, ավելի կարևոր է դառնում: Գիտե՞ք, թե ով էր 2009-ի համագումարի հիմնական զեկուցողը՝ Շիմոն Պերեսը, Իսրայելի նախագահը: Նայեք 5-րդ համագումարի մասնակիցների ցուցակը՝ 22 մուսուլմանական կազմակերպություն, 9 քրիստոնեական: Չնայած այդքան շատ մուսուլմանների ներկայությանը, նախագահն իր ելույթում ասաց. «Խնդիրը լուծելու միակ ուղին երկխոսությունն է, խոսել միմյանց հետ, հանդիպել, աշխատել ինչքան հնարավոր է ազատ լինել»: Ամենալավը Գանդիի ուղին է՝ բռնություն չիրականացնել:

Ես զգում եմ, որ այս համագումարը շատ կարևոր է, քանի որ խոսելու մթնոլորտ է ստեղծում: Մուսուլմանական մեծամասնությամբ երկիրը հրավիրում է հրեաներին, հինդուներին, քրիստոնյաներին, բուդդայականներին նույն հարթակի վրա և բարձրաձայն հայտարարում է՝ մենք չպետք է ընդունենք արմատականությունը, ահաբեկչությունը և ցանկացածին պետք է խոսելու հնարավորություն տանք: Կարծում եմ, որ այս համագումարը մեծ նպատակի կծառայի: Նույնիսկ եթե որոշ կրոնական և քաղաքական առաջնորդներ հասկանան, թե ինչքան կարևոր է միասին ապրել՝ թույլ տալով բազմազանություն և թույլատրելով

մարդկանց դավանել սեփական կրոնն իր սահմանադրության և օրենքի սահմաններում, դա մեծ նվաճում կլինի:

***- Հնդկաստանը հայտնի է իր հանդուրժողականությամբ: Դուք դա կապո՞ւմ եք երկրի հիմնական կրոնի՝ հինդուիզմի հետ:***

- Հին ժամանակներից Հնդկաստանը թույլ է տալիս մարդկանց հետևել այն կրոնին, որին ցանկանում են: Եթե ցանկանում եք հավատալ միակ աստծուն կամ միլիոն աստվածների, կերպարով կամ առանց կերպարի աստծու, մարդու կամ կենդանու տեսքով աստծու, դա Ձեր ընտրությունն է: Եթե նույնիսկ հավատ էլ չունեք, դա էլ է Ձեր ընտրությունը: Հնդկաստանը երբեք խաչակրաց արշավանքներ չի կատարել, կրոնների միջև մեծ պատերազմներ չեն եղել:

Վերջերս մի քննարկում էր ընթանում՝ հինդուիզմը կրո՞ն է, թե՞ ոչ: Որոշ արևմտյան գիտնականներ պնդում են, որ այն կրոն չէ, քանի որ նախ՝ չունի կրոնի հիմնադիր պատմական դեմք, ինչպիսին Աբրահամն է հուդայականությունում, Քրիստոսը քրիստոնեությունում, Մուհամմեդը իսլամում: Երկրորդ՝ չկա կոնկրետ սուրբ գիրք, որն ընդունեն բոլոր դավանանքները: Օրինակ՝ Աստվածաշունչն ընդունում են կաթոլիկները, ուղղափառները, առաքելականները, բողոքականները, Ղուրանն ընդունում են շիաները, սուննիները, սուֆիները, իսլամիստները:

Իսկ ի՞նչ գիրք են ընդունում հինդուները: Մեկն ասում է՝ Վեդաները, մյուսն ասում է՝ Բհագավատ Գիտան, երրորդը՝ Բհագավատ Պուրանան: Հինդուիզմը ծաղկեփունջ է, և յուրաքանչյուր ծաղիկ զարդարում է այն: Հինդուիզմն ուսուցչի և աշակերտի ավանդույթն է. դու ազատ ես ընդունելու այն, ինչ զգում ես, որ ճիշտ է, ես իմ միտքը քեզ չեմ պարտադրում: Հինդուիզմում եղած բազմազանությունը և լիբերալիզմը ոչ մի այլ կրոնում չկան: Ըստ հինդուիզմի՝ յուրաքանչյուր մարդ անկախ էակ է: Դուք կարող եք նրան սովորեցնել, հոգ տանել, բայց ոչ ուժով, թույլ տալ ձեր տեսակետները լսել՝ դրանք հասկանալու համար, սակայն ֆիզիկապես չստիպել:

Կրոնը հատուկ ապրելաձև է: Նախ մենք պետք է աշխատենք հասկանալ մեր սեփական բնույթը: Որոշ մարդիկ ի ծնե վերլուծելու ընդունակությունների տեր են: Նրանք միշտ հարցեր են տալիս, փորձում ամեն ինչում տրամաբանություն տեսնել: Կան մարդիկ, որ իրենց նվիրել են աշխատանքին, այն դարձրել են իրենց պաշտամունքի առարկան: Իսկ մարդկանց երրորդ խումբն էլ շատ զգացմունքային է:

Սակայն կցանկանայի ասել, որ միևնույնն է՝ «բոլոր ճանապարհներն էլ տանում են դեպի Աստված»...





***Սրբազան Ալթան***
*Տաշի Չոյլինգ վանք (Մոնղոլիա)*

## «ԲՈՒԴԴԱՆ ԱՍՈՒՄ ԷՐ.«ԶԱՐԳԱՑՐԵ՛Ք ՁԵՐ ՄԵՋ ԻՍԿԱԿԱՆ ՍԵՐ»»

- Մոնղոլիայի բուդդիստները մասնակցում են Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների համագումարին հինգերորդ անգամ, և հենց սկզբից էլ մենք ընդունել ենք այս համագումարի առաքելությունը, նպատակը, քանի որ այն տանում է միասնականության: Այստեղ ոչ միայն կրոնական առաջնորդները, այլև քաղաքական առաջնորդներն աշխատում են միասին խաղաղության հասնելու համար, կարեկցանքի վրա հիմնված հանդուրժողականության զարգացման վրա: Ահա, սա է պատճառը, որ մենք գալիս ենք այս համագումարին:

Բուդդայի ուսմունքի համաձայն՝ մենք բոլորս նույնն ենք՝ անկախ ազգից ու կրոնից, մենք բոլորս մարդկային էակներ ենք և ունենք միևնույն նպատակը՝ միասին ապրել խաղաղության մեջ: Մենք կողմ ենք կարեկցանքին, խաղաղ գոյակցությանը: Բուդդան ասում էր. «Ձեր մեջ իսկական սեր զարգացրեք»: Իսկ իսկական սեր նշանակում է զարգացնել կարեկցանքի վրա հիմնված համբերություն: Աշխարհում չպետք է լինի վիճաբանություն և թյուրըմբռնում: Զարգացրեք ձեր մեջ կարեկցանք, սեր և կիսանեք լուսավորության:



***Դր. Ալի Մուհամմեդ Հելմի***
*Իրանի Միջկրոնական երկխոսության*
*կենտրոնի գլխավոր տնօրեն*

# «ՑԱՎՈՔ, ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԵՑՕՐ ԱՃՈՒՄ ԵՆ»

***- Կարո՞ղ են արդյոք Համաշխարհային և ավանդական կրոնների առաջնորդների համագումարի նման համագումարները նպաստել կրոնական հակամարտությունների կարգավորմանը:***

- Նման համագումարները կարող են օգնել առաջնորդներին, գիտնականներին միասին հավաքվել և քննարկել այն հարցերը, որոնք շատ կարևոր են և շատ ավելի հրատապ, քան առաջ: Սա նաև անհրաժեշտ երկխոսություն է կրոնական առաջնորդների միջև: Շատ կարևոր է, որ կրոնական առաջնորդները և գիտնականները երես առ երես խոսեն աշխարհում՝ մանավանդ Մերձավոր Արևելքում տեղի ունեցող վերջին իրադարձությունների մասին: Ցավոք, բռնությունը, կրոնական ծայրահեղականությունը օրեցօր աճում են: Կարծում եմ, որ կրոնական գործիչները և քաղաքական գործիչները պետք է համագործակցեն՝ աշխարհին խաղաղություն ու արդարություն բերելու համար լուծում գտնելու նպատակով: Հուսով եմ, որ այս համագումարը կօգնի, որ մենք միավորվենք: Այս համագումարի համար մենք պետք է շնորհակալություն հայտնենք Ղազախստանի նախագահին և ժողովրդին: Մենք՝ իրանցիներս, եկել ենք այստեղ միջկրոնական երկխոսության մեջ մասնակցություն բերելու համար և վերջին 12 տարին ակտիվորեն համագործակցում ենք համագումարի Քարտուղարության հետ:

Նշեմ, որ այս՝ 5-րդ համագումարը բավականին հաջող անցավ, սակայն երկխոսությունը խոսակցության շատ նուրբ ձև է, դրա մասնակիցները պետք է սեփական կարծիքը փոխելու պատրաստ լինեն: Դա ժամանակ կպահանջի: Եթե բոլոր երկրները ներկա խնդիրներին ուշադրություն դարձնեն և այս հարցում ինչ-որ բան անեն, համոզված եմ՝ մենք ավելի շատ պտուղ ու արդյունք կստանանք աշխարհին ու մարդկանց խաղաղություն բերելու հարցում:

# ԱՍՏԾՈ, ՀԱՎԱՏԻ ԵՎ ԿՐՈՆԻ ՄԱՍԻՆ ԱՖՈՐԻԶՄՆԵՐ, ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐ

## *Ականավոր մարդկանց մտքերից*

Աստծո մոտ ոչ թե խմբեր են էքսկուրսիա գալիս, այլ միայնակ ճամփորդներ: (Վլադիմիր Նաբոկով)

Մարդն ստեղծել է Աստծուն, որպեսզի Աստված փրկի մարդուն: (Էմիլ Զոլա)

Ապացուցել Աստծո գոյությունը սրբապղծություն է, հերքել նրան՝ խելագարություն: (Ջուզեպե Մածինի)

Մենք աղոթում ենք ոչ թե նրա համար, որպեսզի Աստծուն ասենք, թե նա ինչ պետք է անի, այլ որպեսզի Աստված մեզ ասի, թե մենք ինչ պետք է անենք:

Միևնույն ուժը, որն աղետներ է ծնում, բարիներին փործության է ենթարկում, մաքրագործում, ընտրում, չարերին մաղում է, դատարկում, արմատախիլ անում:

Հավատն այն է, որ մենք հավատում ենք այն ամենին, ինչ չենք տեսնում, իսկ հավատի համար պարգևը հնարավորություն է տեսնելու այն, ինչին մենք հավատում ենք: (Օգոստոս Ավրելիոս)

Մարդը պետք է սեփական հոգում նորովի բացի աշխարհի նկատմամբ պատասխանատվության ամենախոր իմաստը, ինչը նշանակում է պատասխանատվություն շատ ավելի բարձրագույնի նկատմամբ, քան ինքը մարդն է: (Վացլավ Հավել)

Ես Աստծուն չեմ հավատում: Ես գիտեմ: (Կարլ Յունգը՝ ի պատասխան այն հարցին, թե՝ հավատո՞ւմ է արդյոք Աստծուն)

Աստված կրոն չունի: (Մահաթմա Գանդի)

«Աստված կա»-ի և «Աստված չկա»-ի միջև մի հսկայական դաշտ է ընկած, որը մեծ դժվարությամբ անցնում է իսկական իմաստունը: (Անտոն Չեխով)

Եկեղեցի կանոնավոր հաճախելը մարդուն չի կարող քրիստոնյա դարձնել, ինչպես որ կանոնավոր կերպով ավտոտնակ գնալը մարդուն չի կարող վարորդ դարձնել: (Ալբերտ Շվեյցեր)

Ես եկեղեցու դեմ ոչինչ չունեմ այնքան ժամանակ, քանի դեռ այն չի միջամտել Ամենաբարձրյալի գործերին: (Բրուկս Ատկինսոն)

Աստվա՞ծ: Դա այն հզոր խելագարն է, որը դեռ հավատում է մարդկանց: (Կուրտ Մարտի)

## *Մեջբերումներ բուդդիզմից*

Մարդու կյանքում ամենամեծ թշնամին հենց ինքն է:

Մարդու կյանքում ամենամեծ հիմարությունը սուտն է:

Մարդու կյանքում ամենամեծ պարտությունը ամբարտավանությունն է:

Մարդու կյանքում ամենամեծ տխրությունը նախանձն է:

Մարդու կյանքում ամենամեծ սխալը ինքն իրեն կորցնելն է:

Մարդու կյանքում ամենամեծ մեղքը անշնորհակալ լինելն է:

Մարդու կյանքում ափսոսանքի ամենաարժանի բանը սեփական արժանապատվության նվաստացումն է:





Մարդու կյանքում ամենաշատը հիացմունքի արժանի բանը ընկնելուց հետո վեր կենալն է:

Մարդու կյանքում ամենամեծ կորուստը հույսը կորցնելն է:

Մարդու կյանքում ամենամեծ ունեցվածքը առողջությունն ու բանականությունն են:

Մարդու կյանքում ամենամեծ պարտականությունը անկեղծ զգացմունքներն են:

Մարդու կյանքում ամենամեծ պարգևը մեծահոգությունն է:
Մարդու կյանքում ամենամեծ թերությունը անհասկացողությունն է:
Մարդու կյանքում ամենամեծ մխիթարանքը բարի գործն է:

### *Մեջբերումներ «Բհագավադ-գիտան, ինչպես որ կա» հնդկական սրբազան գրքից*

- Բարձրագույն Տերն ասաց. «Անվախությունը, սեփական գոյության մաքրագործումը, հոգևոր գիտելիքներում կատարելագործումը, բարեգործությունը, զգացմունքներին տիրապետելը, զոհաբերություններ կատարելը, Վեդաների ուսումնասիրումը, ճգնելը, պարզությունը, բռնությունից հրաժարումը, ճշմարտացիությունը, անցասում լինելը, ինքնահրաժարումը, հանգստությունը, չարախոսության ձգտման բացակայությունը, բոլոր կենդանի էակների նկատմամբ կարեկցանքը, ագահության բացակայությունը, փափկությունը, համեստությունը, վճռականությունը, նպատակասլացությունը, ներելու ընդունակությունը, ամրությունը, մաքրությունը, նախանձի բացակայությունը՝ ահա սրանք են, ո՛, Բհարատի որդի, աստվածային բնույթով օժտված բարեպաշտ մարդկանց աստվածային հատկանիշները»:

- Եթե մարդը չի արթնանում այն աստիճանի, որպեսզի հարցնի, թե ինչու է ինքը տառապում, եթե նա չի գիտակցում, որ չի ցանկանում տառապել, սակայն ցանկանում է ձերբազատվել այդ տառապանքներից, ապա նրան չի կարելի համարել կատարյալ մարդ: Մարդն սկսվում է այն ժամանակ, երբ նման հարցեր են արթնանում նրա ուղեղում:

- Գործունեությունից ուղղակի ձեռնպահ մնալով՝ մարդը կարմայից չի ազատվի, և աշխարհից հրաժարվելու երդումը ինքնին չի օգնի նրան հասնել կատարելության:

- Զոհաբերություններ պետք է կատարել պարտքի զգացումից ելնելով: Հարկավոր է գնալ տաճար կամ եկեղեցի՝ պարտքին ենթարկվելով, հարգանք մատուցել Բարձրագույն աստվածային էակին և առաջարկել Նրան ծաղիկներ ու սնունդ: Բոլորը մտածում են, թե անիմաստ է տաճար գնալ միայն Աստծուն խոնարհվելու համար: Այնուամենայնիվ, սրբազան գրերը խորհուրդ չեն տալիս Տիրոջը խոնարհվել նյութական բարիքներ ստանալու համար: Հարկավոր է տաճար գնալ Տիրոջը հարգանքդ արտահայտելու համար:



## *Աստծո 15 հուշումները մարդուն*

*Որպեսզի կյանքում մարդուն միշտ ուղեկցեն հաջողությունը, ուրախությունը և երջանկությունը, նա պետք է առաջնորդվի ճիշտ պատկերացումներով:*

Մի քանի կարևոր կանոն, որոնց հիմքում Աստծո պատվիրաններն են:
1. Աստված մարդուն տառապանքների համար չի ստեղծել, նա պետք է կյանքով ուրախանա, սիրի և արարի: Քիչ բողոքեք կյանքից, միշտ հիշեք, որ կան մարդիկ, որոնք շատ ավելի վատ են ապրում, քան դուք:
2. Յուրաքանչյուր մարդ այս Երկիր հենց այնպես չի ուղարկվել. նա պետք է հայտնաբերի, ցուցադրի սեփական աստվածային էությունը և ինչ-որ բանով լավացնի շրջապատող աշխարհը: Աստված մարդուն տալիս է տաղանդներ, ուժ և ընդունակություններ: Աստվածային շնորհը հարկավոր է օգտագործել շրջակա աշխարհը կատարելագործելու, ինչպես նաև նրանց օգնելու համար, որոնց իրոք պահանջվում է ձեր օգնությունը:
3. Աշխատեք սիրով լցնել սեփական կյանքը և ձեր մտերիմների կյանքը. դրանով դուք կձգեք նպաստավոր հանգամանքներ, ֆինանսական բարեկեցություն: Եվ հակառակը, ագրեսիան կարտահայտվի կյանքի որակի անփոփոխ վատացմամբ:
4. Կյանքում ընդհանրապես ոչինչ պատահական չէ. մեր մտքերով, խոսքերով, գործողություններով և արարքներով մենք ձևավորում ենք այսօրվա իրականությունը և սեփական ապագան: Այնպես որ կվայելեք, թե՛ ընդհակառակը՝ միայն կտառապեք, ամբողջությամբ կախված է ձեզանից:
5. 4-րդ կանոնի հետ ուղղակիորեն կապված է 5-րդը. մտքերը ձևավորում են իրադարձությունները: Սովորեք դրականորեն մտածել, և դուք կստեղծեք ձեզ ուրախացնող իրականություն: Եվ ընդհակառակը՝ դյուրագրգռությունը, ցասումը, նախանձը, ավելորդ հպարտությունը միայն անհաջողություն և անհաջողություններ են ձգում:
6. Ծուրջը ինչպիսի հանգամանքներ էլ լինեն, միշտ հանգիստ մնացեք, պահպանեք դրական տրամադրվածություն, հավատացեք սեփական ուժերին և Աստծո օգնությանը: Եվ կտրվի ըստ հավատի:
7. Աշխատեք լսել Աստծո ձայնը. ուղղակի տվեք այն հարցը, որի պատասխանը ցանկանում եք ստանալ և ունկնդրեք սեփական ենթագիտակցության ձայնը:
8. Յուրաքանչյուր մարդ կարող է փրկվել Աստծո օգնությամբ: Աստված յուրաքանչյուրիս մեջ է: Գտեք Նրան ձեր մեջ, իսկ հետո Նրան ձեր միջոցով ցուցադրեք ձեր շրջապատում:
9. Անկախ նրանից, թե ինչքան ծանր են զանցանքները, Տերը, միևնույնն է, սիրում է մեզանից յուրաքանչյուրին: Աստվածաշնչում գրված է. «Փնտրեք և կգտնեք, թակեք, և կբացվի»: Սակայն հիշեք՝ Աստված միշտ տալիս է այն, ինչ ձեզ հարկավոր է հենց այդ պահին:
10. Ամենահիմնական աստվածային օրենքներից է «նմանության օրենքը». եթե դուք ինքներդ ձեզ չեք սիրում, ձեզ շրջապատողներն էլ ձեզ չեն սիրի: «Ինչ արշինով որ չափում եք, նույնով էլ ձեզ կչափեն»: Ինչպես դուք վերաբերվում եք շրջապատին, այնպես էլ նրանք ձեզ կվերաբերվեն:
11. Մարդու տհաճությունների պատճառը ոչ թե այլ մարդկանց մեջ է, այլ



իր: Ավերիչ բնույթի տեղեկատվությունը թունավորում է մեր կյանքը և թույլ չի տալիս երջանիկ լինել:

12. Բացարձակապես ամեն բան արդեն կա մարդու ներսում. և՛ իշխանություն, և՛ փառք, և՛ պատիվ, և՛ փող: Խնդիրն այն է, որպեսզի բոլոր այդ լավ բաները ազատ արձակվեն դեպի մեզ շրջապատող իրականությունը: Իսկ դա հնարավոր է Աստծո պատվիրանները խիստ պահպանելու միջոցով:

13. Ձեզ շրջապատող մարդկանց մի՛ բաժանեք «վատերի» ու «լավ»-երի: Մենք այնպիսին ենք, ինչպիսին կանք, և եթե ձեր գործընկերը կամ աշխատակիցը վատ է անձամբ ձեզ համար, ապա մյուսին նա լիովին բավարարում է. «Մի՛ դատեք և չեք դատվի»:

14. «Իմացի՛ր ինքդ քեզ». այս էզոթերիկ կանոնը լիովին հնարավոր է կիրառել նաև շրջապատող իրականության մեջ: Միայն թե ոչ մի ինքնաձաղկում և տառակերություն: Ինքնաիմացությունը ընդունակությունների և տաղանդների բացումն է և դրանց գործնական կիրառումը արտաքին աշխարհում:

15. Աստծո համար չկան այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «մեղքը», «պատիժը» և նման բաները: Կարևոր է հարցնել. ոչ թե «Ինչո՞ւ», այլ «Ինչի՞ համար»: Աստված յուրաքանչյուրին տալիս է սխալի իրավունք, և իհարկե, հնարավորություն՝ այն ուղղելու, այն դասն անցնելու, որը մեզ անհրաժեշտ է անցնել: Եվ բոլոր դժվարությունները տրվում են մեր ուժերին համապատասխան: Սխալներն ուղղելու ամենալավ միջոցը սիրո դրսևորումն է ինքդ քո և շրջապատող մարդկանց նկատմամբ:

### *Մեջբերումներ Ղուրանից*

- Հե՛տ մղիր չարիքը նրանով, ինչն ավելի լավ է, և այդ ժամանակ նա, ում հետ թշնամության մեջ ես, քեզ համար կարծես սիրող ազգականի նման կդառնա:



- Քո Տերը քեզ պատվիրել է չերկրպագել ոչ մեկի, բացի Իրենից, և բարություն անել ծնողներին: Եթե մի ծնողը կամ երկուսն էլ հասնեն ծերության, նրանց մի՛ ասա՝ «Ուֆֆֆ», մի՛ բղավիր նրանց վրա և նրանց հարգանքով վերաբերվի՛ր:

- Գիտնականի թանաքը և նահատակի արյունը նույն արժեքն ունեն Երկնքի առջև:

- Ոչ մի հոգի չի կրի ուրիշի բեռը:

- Օ՛, դո՛ւք, ովքեր հավատում եք: Խուսափե՛ք շատ ենթադրություններից, քանի որ որոշ ենթադրություններ մեղք են: Մի՛ հետևեք միմյանց և մի՛ չարախոսեք միմյանց թիկունքում: Որևէ մեկիդ դուր կգա՞, արդյոք, ուտել սեփական հանգուցյալ եղբոր միսը, եթե դուք դրա նկատմամբ զզվանք եք զգում: Վախեցե՛ք Ալլահից: Իրոք, Ալլահը զղջումներ ընդունող է, բարեգութ:

- Չարիքին հավասարազոր հատուցումը չարիքն է: Սակայն եթե մեկը ների և խաղաղություն հաստատի, նրան Ալլահը կպարգևատրի: Իրոք, Նա չի սիրում անօրեններին:

- Ցանկացած աղետ ձեզ է հասնում միայն նրա համար, թե ինչ են ձեռք բերել ձեր ձեռքերը, և Նա (Տերը) ձեզ շատ բան է ներում:

- Ալլահը Նա է, Ով ստեղծեց երկինքն ու երկիրը և այն, ինչ նրանց միջև է, վեց օրվա ընթացքում, իսկ հետո բարձրացավ Գահին: Ձեզ համար, բացի Նրանից, չկա ո՛չ պաշտպան, ո՛չ բարեխոս: Միթե՞ դուք չեք հիշում խրատը: Նա կառավարում է գործերը երկնքից մինչև երկիր, իսկ հետո նրանք նորից բարձրանում են Նրա մոտ օրվա ընթացքում, որը շարունակվում է հազար տարի այն ձևով, ինչպես որ դուք հաշվում եք: Այսպիսին է Գաղտնիքը և Տեսանելին Իմացողը, Հզորը, Ողորմածը, որը հրաշալիորեն ստեղծել է այն, ինչ արարել է, և սկսել է ստեղծել մարդուն կավից, այնուհետև ստեղծել է նրա սերունդը արհամարհված հեղուկի կաթիլից, հետո տվել նրան համաչափ տեսք, Սեփական հոգու շունչն է տվել և նվիրել ձեզ լսողություն, տեսողություն և սիրտ: Սակայն որքա՜ն քիչ է ձեր երախտագիտությունը:

- Իրո՛ք, նրանք, ովքեր անարդարացիորեն ուտում են որբերի ունեցվածքը, իրենց որովայնը լցնում են կրակով և կայրվեն դժոխքի կրակներում:

- Հոգին կարող է հավատալ միայն Աստծո կամքին համաձայն:

## *Երեխաների նամակներն աստծուն*

Ամերիկացի գրող Ստյուարտ Հեմփլին գրել է մի գիրքը, որտեղ ներկայացված են փոքրիկ ամերիկացիների՝ Աստծուն գրած նամակներից հետաքրքիր դրվագներ: Նրանից հետո այս գաղափարը կրկնում է գրող Միխայիլ Դիմովը և գրում է «Երեխաները գրում են Աստծուն» վերնագրով գիրքը: Նրա հերոսներն են 6-10 տարեկան դպրոցականները:

«Ինչի՞ մասին կցանկանայիք հարցնել, պատմել Աստծուն», «Ի՞նչ կխնդրեիր Աստծուց»: Այսպիսի հարցերով նա դիմում է երեխաներին: Պատասխանները տարբեր էին. ուրախ, տխուր, շատ միամիտ, հուսահատ, տարակուսած, սակայն շատ-շատ կենդանի: Երեխաները գիտեին, որ դիմում են ոչ թե մորը, հորը կամ սիրելի ուսուցչին, այլ ինչ-որ մեկին, ով ամենագլխավորն է, ամենակարողը և ամենահասկացողը:

Ներկայացնում ենք հատվածներ գրքից:

- Եթե Դու աշխարհի վերջ սարքես, իսկ քեզ համար ո՞վ կաղոթի:

- Կապույտ երկինքը, Տե՛ր, դա երբ դու լավ տրամադրությո՞ւն ունես:

- Ո՞ւր է գնում ժամանակը, սպիտակ մազերի մե՞ջ:

- Ինչո՞ւ են մարդիկ ամուսնանում, եթե մենք բոլորս քույրեր ու եղբայրներ ենք:

- Իսկ որ մոմ են վաճառում եկեղեցում, դա քո բիզնե՞սն է:

- Ո՞նց թե, ամեն բան Աստծո կամքո՞վ է: Ուրեմն, և՛ ամա՞ռը, և՛ մայրիկի հիվանդությո՞ւնը, և՛ պատերա՞զմը:

- Կաթոլիկների մոտ մի աստված է, մուսուլմանների մոտ՝ մի այլ, հուդայականների մոտ՝ երրորդը, լյութերականների մոտ՝ չորրորդը, ուղղափառների մոտ՝ հինգերորդը: Այդ ինչքա՞ն եք դուք այնտեղ:

- Իսկ երբ Երկրի վրա կրակում են, ինչ է, Դու չե՞ս լսում, Տե՛ր:

- Եթե Դու երկնքում ես ապրում, ինչո՞ւ արևը քեզ չի այրում:

- Ի՞նչ լեզվով են խոսում հոգիները:

- Կարելի՞ է ես մեկ-մեկ Քո երազին գամ:

- Իսկ ամառային եղանակը Քեզ մոտ ավելի լավ է ստացվում, քան աշնանայինը: Կամ էլ անջատի՛ր անձրևը:



- Ինձ կախարդական փայտիկ տուր, և ես այլևս Քեզ չեմ զզվեցնի:

- Ինչքա՞ն հավատացող կա հավատացյալների մեջ:

- Վաղը կգնամ եկեղեցի ու Քեզ անեկդոտ կպատմեմ աթեիստների մասին: Ծիծաղից ուշքդ կգնա:

- Ինչո՞ւ առաջ կենդանիները խոսում էին, իսկ հիմա՝ ոչ: Դե, հիշի՛ր, նույնիսկ օձն էր զրուցում Եվայի հետ:

- Աստվածաշնչում Դու գրում ես, որ սկզբում եղել է բառը: Ո՞րը:

- Դե հիմա ասա՝ երկրորդ անգամ Դու մարդուն կստեղծե՞ր:

- Այդ ինչպե՞ս ես կարողանում մի հոգով ամեն ինչ տեսնել:

- Իսկ մենք Քո խաղալիքները չե՞նք:

- Երկրի վրա այդքան տառապանք կա, որ մարդիկ չափսոսա՞ն մեռնել:

- Ուրեմն, եթե ես ճիշտ եմ հասկացել էվոլյուցիան, սկզբում Դու ստեղծել ես Ադամին ու Եվային, իսկ հետո մարդն առաջացել է կապիկի՞ց:

- Ես, իհարկե, Քեզ սիրում եմ, բայց մամային ու պապային՝ ավելի շատ: Ոչի՞նչ:

- Ցո՛ւյց տուր ինձ շատ զգույշ գոնե մի հրեշտակի:

- Երբ մեռնեմ, ո՛չ դժոխք եմ ուզում գնալ, ո՛չ դրախտ: Ուզում եմ Քեզ մոտ:

- Արի՛ հանդիպենք մինչև մահը:

- Մի գրքում կարդացի, որ դու ագռավին պանիր ես ուղարկել: Իսկ ինձ էլ չե՞ս ուղարկի: Ես պանիր շատ եմ սիրում:

- Տե՛ր, թող մաման անմահ լինի:

- Իսկ եթե բոլոր մարդիկ դրախտ գնան, այնտեղ բոլորի համար տեղ կլինի՞:

- Երկրի վրա ամենածանր հիվանդությունը, Տե՛ր, սերն է: Սակայն բոլոր մարդիկ, չգիտես՝ ինչու, ցանկանում են վարակվել այդ հիվանդությամբ:



# ԳԼՈՒԽ 4

# 2017՝ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԲՐԵՆԴԱՅԻՆ ՏԱՐԻ

# 2017՝ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԲՐԵՆԴԱՅԻՆ ՏԱՐԻ

2017 թվականը Ղազախստանի համար կդառնա «բրենդային». հենց 2017-ին երկրի երկու քաղաքներում կանցկացվեն միջազգային մասշտաբի միջոցառումներ՝ «ԷՔՍՊՈ-2017»-ը Աստանայում և «Ունիվերսիադա-2017»-ը Ալմաթիում: Հայաստանը երկու միջոցառումներին էլ մասնակցելու է, և դա բնական է, քանի որ Հայաստանը որոշիչ քվեարկության ժամանակ աջակցել է հենց Ղազախստանում այդ կարգի միջոցառումներ անցկացնելու նախաձեռնությանը:

«Աստանա ԷՔՍՊՈ» միջազգային մասնագիտացված ցուցահանդեսը, որը կանցկացվի 2017թ. ամռանը Աստանայում՝ Ղազախստանի մայրաքաղաքում, կանցնի «Ապագայի էներգիա» կարգախոսով: Ցուցահանդեսը նվիրված կլինի հրատապ թեմայի՝ էներգիայի այլընտրանքային աղբյուրներ: Ենթադրվում է, որ այս ցուցահանդեսը շատ նոր տեխնոլոգիական առաջարկներ կգրավի էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործման առնչությամբ: Սպասվում է, որ ցուցահանդեսին կմասնակցեն աշխարհի ավելի քան 100 երկրների և շուրջ 10 միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Կազմակերպիչների հաշվարկներով ցուցահանդես կայցելի ավելի քան 5 մլն մարդ:

«Արմեդիա» ՏՎԳ-ին տված հարցազրույցի ժամանակ «ԷՔՍՊՈ-2017»-ի մամուլի կենտրոնի ղեկավար Այգուլ Մուկեյը նշեց. «Մենք սպասում ենք աշխարհի տարբեր երկրների բնակիչներին, այդ թվում և մեզ բարեկամ Հայաստանից: Շատ կցանկանայինք, որպեսզի Հայաստանի սովորական քաղաքացիներն էլ գային մեր ցուցահանդեսին: Ցուցահանդեսը հրավառությունների, տոնի, համերգների, զանազան միջոցառումների սքանչելի երեք ամիս կլինի: Կկազմակերպվի լայնածավալ մշակութային ծրագիր: Դա, իրոք, մեծ տոն կլինի: Չէ՞ որ այն, ինչ մեզ շրջապատում է, մի ժամանակ ներկայացված է եղել նման ցուցահանդեսին, այդ թվում Զինգեր կարի մեքենան, բաժակով պաղպաղակը և Ipad-ները: Ցուցահանդեսի ուղղվածությունը գիտական է, ինովացիոն, սակայն ուշադրության կենտրոնում կլինի նաև մշակութային կյանքը»:

Սակայն միայն «ԷՔՍՊՈ-2017»-ը չի ձևափոխի Ղազախստանը 2017 թվականին: Բացի միջազգային ցուցահանդեսից՝ Ղազախստանում՝ նախկին մայրաքաղաք Ալմաթիում, կանցկացվի միջազգային ձմեռային Ունիվերսիադան, որը կազմակերպում է Ուսանողական սպորտի միջազգային ֆեդերացիան: Ինչպես հայտնի է, Ունիվերսիադան կոչված է մոտեցնելու սպորտը կրթական գործընթացին: Եվ Ալմաթին 2017թ. ձմռանը կհավաքի ուսանող-մարզիկներին աշխարհի տարբեր երկրներից:



2011թ. Ղազախստանում տեղի են ունեցել Ասիական խաղերը, որոնք արդիականացրել են Ալմաթիի և Աստանայի ենթակառուցվածքը: «Ունիվերսիադա-2017»-ի նախապատրաստման շրջանակներում Ալմաթիում պետք է անցկացվի նվազագույնը 13 խոշոր առաջնություն: Այսօր Ալմաթին յուրացնում է սպորտային մենեջմենթը և բառացիորեն ապրում է Ունիվերսիադայի նախապատրաստությամբ:

«Մեր ծրագրերով ու հաշվարկներով Ունիվերսիադային կմասնակցի 50-55 երկիր: Այսօրվա դրությամբ հստակ ունենք 23 հայտ, որոնց մեջ, անտարակույս, Հայաստանն էլ կա: Ավելին՝ նույնիսկ թեստային միջոցառումների ձևաչափում, որը մենք անցկացնում էինք 2014թ. դեկտեմբերին, Հայաստանից եկել էին 3-4 լեռնադահուկորդներ: Իհարկե, կլինի նաև ողջ Եվրոպան, Հյուսիսային Ամերիկան, Սկանդինավյան շրջանը, և բնականաբար, Ռուսաստանը, Բելառուսը, Հայաստանը, Ուզբեկստանը, Ղրղզստանը», - «Արմեդիա» ՏՎԳ-ին տված հարցազրույցում պատմել է «Ունիվերսիադա-2017»-ի գործադիր տնօրինության տնօրեն Իլյա Ուրազակովը:

Հետաքրքիր է, որ երկու մեծ միջոցառումները՝ ԷՔՍՊՈ-ն և Ունիվերսիադան, աշխարհում «Ղազախստան-2017» փիառ-արշավի անցկացման համար խթան են դարձել: «100 քայլ» ռազմավարությունում Ղազախստանի նախագահ Ն.Նազարբաևն ընդգծում է, որ «հաջողությունը միայն առողջ, զարգացած, մարզական ազգինն է»: Եվ ԷՔՍՊՈ-ի, և՛ Ունիվերսիադայի կազմակերպիչները շեշտում են, որ երկու միջոցառումները նշանակալից կլինեն Ղազախստանի համար:

«Ամբողջ աշխարհը հասկանում է, որ երկու բրենդն էլ բավականին կշիռ ունեն՝ և՛ Միջազգային ուսանողական խաղերը, դա համաշխարհային աշխարհագրություն է, և՛ ԷՔՍՊՈ-ն՝ համաշխարհային ցուցահանդեսը, մանավանդ այնպիսի կարևոր թեմայով, ինչպիսին է «Ապագայի էներգիան»: Մենք, ինչպես և ծեր երկիրը, աշխարհին ցույց կտանք հյուրընկալություն, ինչը մեր արյան մեջ է, ցույց կտանք մեր նոր տեխնոլոգիաները, մեր ֆինանսական ու քաղաքական կայունությունը: Ուստի 2017 թվականը մեզ համար շատ նշանակալից կլինի», - ասում է Ուրազակովը:

## ԱՍՏԱՆԱ. «ԷՔՍՊՈ-2017»-Ի ՆԱԽԱՇԵՄԻՆ

Ղազախստանն ակտիվորեն նախապատրաստվում է «ԷՔՍՊՈ-2017» միջազգային ցուցահանդեսին, որը կանցկացվի հանրապետության երիտասարդ մայրաքաղաքում՝ Աստանայում: Ցուցահանդեսի թեման է՝ «Ապագայի էներգիա», որը բաղկացած է հետևյալ ենթաթեմաներից. «CO2 գազի արտանետումների նվազեցում», «Էներգաարդյունավետ կյանքի ձև» և «Էներգիա բոլորի համար»: «ԷՔՍՊՈ-2017» ցուցահանդեսի նախապատրաստման շրջանակներում առաջին նախագիծը Աստանայում «Էկո-տաքսի» ծառայության ներմուծումն էր: Այսօր քաղաքում արդեն 200 «կանաչ» մեքենա կա, իսկ միջոցառման նախօրեին դրանք արդեն կլինեն մոտ 500:

EXPO 2017
· Future Energy ·
Astana Kazakhstan

«ԷՔՍՊՈ-2017» ցուցահանդեսի նախապատրաստման ու անցկացման նպատակով, 2013թ. Ղազախստանում ստեղծվել է ««Աստանա ԷՔՍՊՈ-2017» ազգային կորպորացիա» բաժնետիրական ընկերությունը: Աստանայում միջազգային ցուցահանդեսը կանցկացվի 2017թ. հունիսի 10-ից սեպտեմբերի 10-ը: Նախատեսվում է, որ կմասնակցի 100 երկիր, այդ թվում Հայաստանը, 10 միջազգային կազմակերպություն, 10 ընկերություն-ինովացիոն տեխնոլոգիաների առաջատարներ: Այսօրվա դրությամբ 21 երկիր և 3 միջազգային կազմակերպություն պաշտոնապես հաստատել են իրենց մասնակցությունը: Ընդհանուր առմամբ «ԷՔՍՊՈ-2017»-ին սպասվում են 2 մլն այցելու և 5 մլն այցելություն, հաղորդում է astana.gov.kz-ը: Ի դեպ, 2017թ. նշվելու է նաև երկրի նոր մայրաքաղաքի՝ Աստանայի 20-ամյակը:

Ցուցահանդեսային համալիրի տարածքում, որի ընդհանուր մակերեսը կազմում է 174 հեկտար, կստեղծվի 38 օբյեկտ, այդ թվում՝ 80մ տրամագիծ ունեցող գնդի տեսքով Ղազախստանի գլխավոր տաղավարը, միջազգային տաղավարները, որոնց հատկացվելու է ցուցահանդեսային համալիրի տարածքի




ավելի քան 42%-ը, կոնգրես-կենտրոն, ամֆիթատրոն, առևտրային-զվարճանքի կենտրոն, մամուլի կենտրոն, ծածկած քաղաք, բնակելի տներ և հյուրանոցներ: Նախատեսվում է, որ «ԷՔՍՊՈ-2017»-ի օբյեկտները կապահովվեն «կանաչ էներգիայով» քամու, արևի և այլ այլընտրանքային աղբյուրների էներգիաների հաշվին:

Նախագծում ներգրավված են 8 շինարարական կազմակերպություններ և ավելի քան 3500 բանվորներ: Ի դեպ, Ղազախստանի նախագահ Ն.Նազարբաևը հանձնարարել է ավելացնել ղազախստանյան մասնակցության չափաբաժինը շինարարության մեջ: Այսօրվա դրությամբ ներգրավված է արդեն 101 ղազախստանյան ձեռնարկություն: Կնքված պայմանագրերի ընդհանուր գումարը կազմում է 88 մլրդ թենգե: Նախատեսվում է, որ ԷՔՍՊՈ-ի օբյեկտների շինարարության մեջ ղազախստանյան հատվածի չափը կկազմի նվազագույնը 60%: Ցուցահանդեսային համալիրի կառուցումը նախանշված է ավարտել 2016-ի դեկտեմբերին, իսկ արդեն 2017-ի հունվարից մասնակից երկրները կսկսեն ձևավորել իրենց տաղավարները:

2015թ. հունիսի 9-ին Փարիզում կայացավ Ցուցահանդեսների միջազգային բյուրոյի Գլխավոր Ասամբլեայի 157-րդ նստաշրջանը «Աստանա ԷՔՍՊՈ-2017»-ի ներկայացուցիչների մասնակցությամբ: Ներկայացված «ԷՔՍՊՈ-2017»-ի նախապատրաստության մասին հաշվետվությունում նշված էր, որ ցուցահանդեսի անցկացման տարածքում օբյեկտների շինարարությունն ընթանում է նախկինում հաստատված ժամանակացույցի ժամկետից շուտ, շենքերի հիմքերի և նկուղային հարկերի կառուցումն արդեն ավարտված է, կատարված է բոլոր շինարարական-մոնտաժային աշխատանքների 35%-ը:

«ԷՔՍՊՈ-2017»-ի համալիրի շինարարության շարունակության համար ղազախստանյան պետության ղեկավարը հանձնարարել է 2015-ին վարկավորման համար հատկացնել ևս 40 մլրդ թենգե՝ ի լրացումն արդեն հատկացված 25 միլիարդի: Նախատեսվում է մայրաքաղաքում ներդնել տրանսպորտի նոր տեսակ՝ ներառյալ արագընթաց ավտոբուսները, նոր երկաթգիծ և օդանավակայան: Բացի այդ՝ կկառուցվեն նոր ճարտարապետական օբյեկտներ, և կթարմացվեն շենքերի ճակատային մասերը:



«ԷՔՍՊՈ-2017» ցուցահանդեսին Ղազախստանի ազգային տաղավարի կոնցեպտը նախատեսում է ներկայացնել այցելուներին Ղազախստանի լանդշաֆտը, մշակույթը, պատմությունը, ներկան և ապագան նորագույն տեխնոլոգիաների միջոցով, երկրի էներգետիկ ներուժը: Ցուցահանդեսին կցուցադրվեն երկրի նվաճումները, նրա հնարավորությունները: Սակայն Ղազախստանի համար ամենագլխավորը կառուցվող շենքերի հետցուցահանդեսային կիրառությունը որոշելն է, և այս հարցով արդեն մանրամասն քննարկումներ են ընթանում:

Ղազախստանյան գիտնականներն այժմ ակտիվորեն զբաղվում են ինովացիոն նախագծերի մշակմամբ, որոնց իրականացումը հնարավորություն կտա ստանալու էներգիայի նոր, էկոլոգիապես մաքուր և վերականգնվող աղբյուրներ: ԷՔՍՊՈ-ի նախաշեմին OnlineExpo-2017 մրցույթներ են անցկացվում գյուտարարների համար, որտեղ ղազախստանյան մասնագետներն առաջարկում են էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի պաշտպանության հարցերում իրենց լուծումները: Նախատեսվում է, որ նման մրցույթ կանցկացվի ամեն տարի մինչև «ԷՔՍՊՈ-2017»-ի սկիզբը, և դրա արդյունքներով կանցկացվեն մինի-ԷՔՍՊՈ ցուցահանդեսներ «Ապագայի էներգիա» ֆորումի շրջանակներում 2015, 2016 և 2017 թվականներին: «Ապագայի էներգիայի» առաջին ֆորումը՝ «CO2 գազի արտանետումների նվազեցում» թեմայով, անցկացվել է 2014թ.: Այս տարվա ֆորումը նվիրված է ցուցահանդեսի երկրորդ ենթաթեմային՝ «Էներգաարդյունավետություն»:

«ԷՔՍՊՈ-2017»-ի թալիսմանն է՝ «Թենգրին և Բորին», որն ընտրվել է 80 հեղինակային աշխատանքներից ղազախստանցիների կողմից օնլայն-քվեարկության արդյունքում:

Ինչպես նշել է Ղազախստանի նախագահը, «ԷՔՍՊՈ-2017»-ը թույլ կտա էլ ավելի ամրապնդել Աստանայի հեղինակությունը: «Մեր հանրապետության մասին գիտեն շատ ասպեկտներով՝ որպես խոշոր էներգետիկ պետություն, ուրանի հանքաքար արդյունահանող առաջատար երկիր, հացահատիկ արտահանող, լայնածավալ բնական պաշարներ ունեցող: Այժմ անհրաժեշտ է ցույց տալ դեպի ապագա ձգտող նոր երկիր: Նույնիսկ ազգային տաղավարի կոնցեպտն է ցույց տալիս, որ Ղազախստանը կանգ չի առնում ձեռք բերածի վրա, այն միշտ նպատակաուղղված է շարժվել առաջ»…




# ՂԱԶԱԽՍՏԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է «ՈՒՆԻՎԵՐՍԻԱԴԱ-2017»-Ի ԱՆՑԿԱՑՄԱՆԸ

Յուրաքանչյուր երկրորդ տարին աշխարհում անցկացվում են ամառային և ձմեռային ունիվերսիադաներ՝ ուսանողական միջազգային սպորտային մրցումներ, որոնք կազմակերպում է FISU-ն՝ Համալսարանական սպորտի միջազգային ֆեդերացիան: Ի դեպ, «ունիվերսիադա» բառը կազմված է երկու բառից՝ «համալսարան» և «օլիմպիադա»:

Ուսանողների միջազգային մրցումներն առաջին անգամ անցկացվել են 1905թ., իսկ արդեն 1923թ. Փարիզում կայացան առաջին Համաշխարհային համալսարանական խաղերը: Այդ ժամանակից սկսած՝ ուսանողների մեջ մարզային մրցումների անցկացումը դրվել է կանոնավոր հիմքի վրա, իսկ 1959-ին այս մրցումները սկսեցին կոչվել «Ունիվերսիադա»: Ստեղծվեց 5 աստղերով շրջապատված «Ս» տառով դրոշ, որն էլ դարձավ ունիվերսիադաների համաշխարհային երթի սկիզբը:

2015թ. ձմեռային Ունիվերսիադան անցկացվեց Գրանադայում (Իսպանիա), իսկ ամառայինը՝ Կվանջու քաղաքում (Կորեա): Այժմ, երբ ավարտվել են այդ մրցումները, ուսանողները սկսել են պատրաստվել 2017թ. համալսարանական օլիմպիադաներին. ամառային Ունիվերսիադան կանցկացվի Թայբեյ-սիթիում (Չինաստան), իսկ ձմեռայինը՝ Ալմաթիում (Ղազախստան): Եվ չնայած մինչև 2017թ.-ը դեռ ժամանակ կա, սակայն նախկին ղազախստանյան մայրաքաղաք Ալմաթին արդեն ապրում է Ունիվերսիադային նախապատրաստությամբ:

Ալմաթին 28-րդ ձմեռային Ունիվերսիադայի մայրաքաղաքն է: Ընդհանրապես, ձմեռային Ունիվերսիադան բաղկացած է հետևյալ պարտադիր մարզաձևերից՝ դահուկային մարզաձևեր (լեռնային դահուկներ և վազքադահուկներ՝ թռիչք բարձրությունից, դահուկավազք, դահուկային կրկնամարտ), բիաթլոն, տափօղակով հոկեյ, չմշկավազք (շորթ-տրեկ, գեղասահք), սինխրոն չմշկասահք, քերլինգ, սնոուբորդինգ: Ծրագրում սովորաբար ներառվում են նաև լրացուցիչ մարզաձևեր, որոնք ընտրվում են ընդունող երկրի կողմից: Ղազախստանցիները տանտիրոջ իրավունքով 2017թ. խաղերի ծրագրում ընդգրկել են գնդակով հոկեյը:



Սովորաբար ձմեռային Ունիվերսիադային միջինը մասնակցում է 2500 մասնակից աշխարհի 50 երկրից:

Ալմաթին 80 տարի եղել է Ղազախստանի մայրաքաղաքը: Այն զարգացած ենթակառուցվածքով, մեծ բնակչությամբ քաղաք է, այն երկրի ֆինանսային կենտրոնն է, որը բերում է հանրապետական բյուջեի մոտ 32%-ը: Հենց նախկին մայրաքաղաքում են ամենաշատ երիտասարդները, ուսանողները: Ասում են, որ երկրի յուրաքանչյուր չորրորդ ուսանողը սովորում է Ալմաթիում: Խորհրդային ժամանակներում շատ հայտնի էր մի հոյակապ համալիր՝ պատմական Մեդեուն, որը չեմպիոնների դարբնոց էր, այստեղ հսկայական թվով համաշխարհային ռեկորդներ են սահմանվել:

Արդեն այսօր Ալմաթիում անցկացվում են ամենամեծ թվով սպորտային միջոցառումները՝ տարեկան 250, ինչը նպաստում է ալմաթիցիների առողջ կենսակերպի ձևավորմանը: Իսկ Ալմաթիից ոչ հեռու գտնվող բարձրլեռնային Մեդեու մարզային համալիրը և Չիմբուլակ լեռնադահուկային առողջարանը Ալմաթին իրոք իդեալական վայր են դարձնում ձմեռային մարզաձևերի մրցումների անցկացման համար:



***Իլյա Ուրազակով***
*«Ունիվերսիադա-2017»-ի տնօրինության գործադիր տնօրեն*

# «ԱԼՄԱԹԻՆ ԱՊՐՈՒՄ Է «ՈՒՆԻՎԵՐՍԻԱ-ԴԱ-2017»-Ի ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՄԲ»

***- Պատմե՛ք, խնդրեմ, ինչպե՞ս Ալմաթիի հայտը հաղթեց «Ունիվերսիադա-2017»-ի անցկացման մրցույթին, ինչպիսի՞ զգացմունքներ ունեիք:***

- Այդ իրադարձությունը տեղի ունեցավ 2012թ. հոկտեմբերին: Մենք ներկա էինք Ուսանողական սպորտի միջազգային ֆեդերացիայի կազմակերպության Գլխավոր Ասամբլեային, որին մասնակցում էր նաև Ալմաթիի քաղաքապետը: Դե, իհարկե, մենք շատ էինք հուզվում, քանի որ մեր մրցակիցները բավականին ուժեղ էին: Դրանք էին Մարիբոր (Սլովենիա) և Տրենտինո (Իտալիա) քաղաքները, որոնք շատ փորձառու են նման խոշոր մարզային միջոցառումներ անցկացնելու ոլորտում, ինչպիսիք են ունիվերսիադաները, օլիմպիական խաղերը: Շատ փորձագետներ մեզ զգուշացնում էին, որ մրցակցությունը շատ բարդ կլինի, ի վերջո, փորձն ու հնարավորությունները նրանց կողմում էին: Արդյունքում մեզ ասացին, որ հնարավորություն են տալիս նոր տարածաշրջանին զարգացնելու ուսանողական սպորտը: Այդ ամենն այնքան տպավորիչ էր: Վերջապես իսկայական աշխատանքը մնաց հետևում. մեկուկես տարի մենք աշխատում էինք մեր հայտի, փաստաթղթերի վրա: Եվ ահա սարն ուսերից ընկավ, մենք այնքան ոգևորված էինք: Սակայն շաբաթներ անց մենք հասկացանք, թե ինչ իսկայածավալ աշխատանք է ընկել մեր ուսերին: Եվ դրանով մենք այսօր ապրում ենք:

***- Նման մարզային միջոցառումներ անցկացնելու ի՞նչ փորձ ունի Ալմաթին:***

- Դե, գիտեք, 80 տարի Ալմաթին եղել է Ղազախստանի մայրաքաղաքը, որը զարգացած ենթակառուցվածքով, մեծաքանակ բնակչությամբ քաղաք է, այն երկրի ֆինանսական կենտրոնն է, որը տալիս է հանրապետական բյուջեի շուրջ 32%-ը: Այստեղ շատ է երիտասարդությունը, շատ են ուսանողները: Երկրի յուրաքանչյուր չորրորդ ուսանողը սովորում է Ալմաթիում: Խորհրդային տարիներին շատ հայտնի էր մեր հոյակապ համալիրը՝ պատմական Մեդեուն, որը չեմպիոնների դարբնոց էր, այստեղ բազմաթիվ համաշխարհային ռեկորդներ են սահմանվել: Այստեղ են նաև մեր հիասքանչ լեռները և Չիմբուլակ համալիրը, որտեղ անցկացվում էին թե՛ խորհրդային, թե՛ միջազգային մակարդակի մրցաշարեր:

2011թ. Ալմաթիում և Աստանայում անցկացվեցին Ասիական խաղերը, որոնց շնորհիվ արդիականացվեց այդ քաղաքների ենթակառուցվածքը: Դրա հաշվին մենք ստացանք համաշխարհային մակարդակի օբյեկտներ, կառուցեցինք սպորտային նոր կառույցներ:

Ըստ կանոնակարգի՝ «Ունիվերսիադա-2017»-ի նախապատրաստման շրջանակներում Ալմաթիում պետք է անցկացվի նվազագույնը 13 խոշոր, այսպես ասած, թեստային առաջնություն: Անցյալ տարի մենք անցկացրել ենք չորս խոշոր առաջնություն լեռնային դահուկավազքից, սահուկավազքից: Մեր թեստային միջոցառումներից մեկին եղել է 36 մասնակից երկիր: Այսօր Ալմաթին յուրացնում է մարզային մենեջմենթը և բառացիորեն ապրում է Ունիվերսիադայի նախապատրաստմամբ:

***- Ի՞նչ ակնկալիքներ ունեք Ունիվերսիադայից:***

- Մենք Ունիվերսիադայի պատրաստման հատուկ ծրագիր ունենք, մեծ աշխատանք է տարվում պոտենցիալ չեմպիոնների հետ: Մենք հուսով ենք, հավատում ենք, գիտենք, որ ցանկացած պարագայում ցանկացած խաղեր, որոնք անցկացվում են այս կամ այն երկրում, միշտ զգալիորեն ավելացնում են դեպի սպորտ գնացող երիտասարդության տոկոսը: Ցանկացած մեծ մրցում հայտնի է դարձնում սպորտը: Նրանք, ովքեր տեսնում, զգում են այդ տոնն այստեղ, իրենց կողքին, նրանք իհարկե ներքաշվում են սպորտի մեջ: Սա «Ունիվերսիադա-2017»-ի ամենագլխավոր նպատակներից մեկն է:

***- Քանի՞ երկիր է մասնակցելու Ունիվերսիադային:***

- Մեր ծրագրերով ու հաշվարկներով Ունիվերսիադային կմասնակցի 50-55 երկիր: Այսօրվա դրությամբ հստակ ունենք 23 հայտ, որոնց մեջ, անտարակույս, Հայաստանն էլ կա: Ավելին՝ նույնիսկ թեստային միջոցառումների ձևաչափում, որը մենք

անցկացնում էինք 2014թ. դեկտեմբերին, Հայաստանից եկել էին 3-4 լեռնադահուկորդներ: Իհարկե, կլինի նաև ողջ Եվրոպան, Հյուսիսային Ամերիկան, Սկանդինավյան շրջանը, և բնականաբար, Ռուսաստանը, Բելառուսը, Հայաստանը, Ուզբեկստանը, Ղրղզստանը:

***- 2017-ին Ղազախստանում՝ Աստանայում կանցկացվի նաև ԷՔՍՊՈ միջազգային ցուցահանդեսը: Այն Ունիվերսիադայի համար մրցակից չի՞ լինի, թե՞, ընդհակառակը, ցուցահանդեսը զբոսաշրջիկների հոսքը կխթանի:***

- Այժմ կառավարությունում քննարկվում է մեր նախաձեռնությունը, որը մենք պատրաստել ենք ԷՔՍՊՈ-ի մեր գործընկերների հետ՝ կազմակերպել առանձին փիառ-արշավ՝ «Ղազախստան-2017» անվանումով: Սկսենք նրանից, որ միջոցառումների անցկացման ժամկետները տարբեր են. մենք 2017-ին կատարում ենք բացումը, մեր միջոցառումը տեղի կունենա հունվար-փետրվարին, իսկ ԷՔՍՊՈ-ն անցկացվելու է ամռանը, ամռան երեք ամիսներին: Եվ մենք միմյանց ո՛չ թեմայով, ո՛չ էլ ժամկետներով չենք խանգարում, իսկ այն, ինչ բիզնեսում անվանում են «սիներգիա», դա մենք այսօր ակտիվորեն օգտագործում ենք: Հսկայական շեշտ է դրված փորձի փոխանակման, կադրերի համատեղ պատրաստման վրա: Օրինակ՝ Ալմաթին շատ ուժեղ է իր կամավորական ջոկատներով: Ես համարյա համոզված եմ, որ մեր խաղերի անցկացման մեջ ներգրավված կամավորների մեծ մասն այնուհետև ամռանը կգնա Աստանա՝ մեր գործընկերներին օգնելու: Ավելին՝ գոյություն ունի նույնիսկ կառավարական որոշում, որի համաձայն՝ Ալմաթիի խաղերին օգտագործվելիք թանկարժեք բարձրտեխնոլոգիական սարքավորումները այնուհետև կփոխանցվեն Աստանա՝ մեր ընկերներին:

***- Փաստորեն Ղազախստանը 2017 թվականի թոփ-թեման կլինի:***

- Ահա հենց դրան էլ մենք ձգտում ենք: Ողջ աշխարհը հասկանում է, որ երկու բրենդն էլ բավականին կշիռ ունեն՝ և՛ Միջազգային ուսանողական խաղերը, դա համաշխարհային աշխարհագրություն է, և՛ ԷՔՍՊՈ-ն՝ համաշխարհային ցուցահանդեսը, մանավանդ այնպիսի կարևոր թեմայով, ինչպիսին է «Ապագայի էներգիան»: Կառավարությունը, Ղազախստանի ղեկավարը շարունակում են բարձրացնել պետության՝ որպես զարգացած, հանդուրժողական երկրի հեղինակությունը, որտեղ ապրում է աշխարհի տարբեր լեզուներով խոսող երիտասարդություն: Մենք, ինչպես և ձեր երկիրը, աշխարհին ցույց կտանք հյուրընկալություն, ինչը մեր արյան մեջ է, ցույց կտանք մեր նոր տեխնոլոգիաները, մեր ֆինանսական ու քաղաքական կայունությունը: Ուստի Դուք լրիվ իրավացի եք, որ 2017 թվականը մեզ համար շատ նշանակալից կլինի:



***- Ինչքանո՞վ են «100 քայլ» ծրագրում հաշվի առնվում սպորտի զարգացման վեկտորները:***

- Եթե խոսենք այն նորարարական գաղափարի մասին, որը ներկայացրել է Ղազախստանի նախագահ Նազարբաևը «100 քայլ»-ում, փորձագետները, առաջին հերթին բիզնեսի ոլորտից, այս ծրագիրն անվանում են «Ղազախստան-2050» գլխավոր ծրագրի իսկական կոնկրետացումը, ծրագիր, որն ընդունվել է դեռ երեք տարի առաջ: Պետության ղեկավարը՝ որպես գրագետ մենեջեր, հասկանալի և մանրամասն նկարագրել է, թե ինչ է անհրաժեշտ անել այդ ծրագրի իրականացմանը հասնելու համար: Կառավարությունը հստակորեն նշել է կոնկրետ քայլերը, դրանց ժամկետները, առաջնահերթությունները և հերթականությունը: Սպորտի հասկացությունը, իսկ եթե գլոբալ ասենք՝ առողջ ապրելակերպի հասկացությունը, երկրում ամեն ինչի հիմքում է, քանի որ բոլորը շատ լավ հասկանում են, որ հաջողությունը առողջ, զարգացած մարզական ժողովրդինն է: Ուստի մենք այդ քաղաքականությունն ընդունում ենք: Արագ թափով Ղազախստանում մարզային օբյեկտներ, երիտասարդ մարզիկների պատրաստման կետեր են կառուցվում: Մեծ նշանակություն է տրվում սպորտի մասսայականացմանը: Այս առումով Ալմաթին բոլոր քաղաքների համար օրինակ է, քանի որ այսօրվա դրությամբ քաղաքի բնակչության 33-34%-ը ներգրավված է զանգվածային սպորտի մեջ:

Պատմականորեն այնպես է ստացվել, որ Ղազախստանում ամենահամբավավոր մարզաձևն ըմբշամարտն է, շատ ենք սիրում նաև բռնցքամարտ, ֆուտբոլ: Ալմաթիի քաղաքապետի շնորհիվ ամբողջ քաղաքն այժմ հեծանիվ է քշում: Օրինակ՝ ամենաքիչը ամիսը երկու անգամ Ալմաթիում անցկացվում է հեծանվավազք, որին մասնակցում է 2000-3000 մարդ. դա արդեն ավանդույթ է դարձել: Ալմաթին մարզական քաղաք է: Մենք մեր թեկնածությունն ենք ներկայացրել նաև 2022թ. ձմեռային օլիմպիական խաղերի անցկացման համար:

**P.S**. Այս հարցազրույցի անցկացումից հետո հայտնի դարձավ, որ Ալմաթին Պեկինին է զիջել Օլիմպիական խաղեր-2022-ը իր մոտ անցկացնելու իրավունքը: Սակայն ամեն ինչ դեռ առջևո՛ւմ է, Ալմաթի՛:



## ՀԱՅԱՍՏԱՆ-ՂԱԶԱԽՍՏԱՆ.
## «ԲԱՐԻ՛ ԳԱԼՈՒՍՏ, ՀՅՈ՛ՒՐ»

Համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից պայմաններում զբոսաշրջությունը առաջատար և դինամիկ զարգացող ոլորտներից է, որը եկամուտ է բերում ոչ միայն ծովային բնապատկերներ և պատմամշակութային տեսարժան վայրեր ունեցող երկրներին, այլև զբոսաշրջության զարգացման համար վարպետորեն քաղաքականություն կառուցող պետություններին:

Հայաստանի տուրիզմի արդյունաբերությունն այսօր առավել դինամիկ զարգացող բնագավառներից է: Այսպես, ՀՀ էկոնոմիկայի նախարարության տվյալներով, 2004թ.-ից Հայաստան այցելող միջազգային զբոսաշրջիկների թիվն աճել է 4,6 անգամ՝ կազմելով մոտավորապես 1 204 000 մարդ 2014թ. (262,959-ից 1,203,746): Ըստ որում, Զբոսաշրջության և ճամփորդությունների համաշխարհային խորհրդի (World Travel and Tourism Council) հետազոտությունների համաձայն, Հայաստանի ՀՆԱ-ում զբոսաշրջության ուղիղ ներդրման մասնաբաժինը 2014թ. կազմել է 3,6%, իսկ ընդհանուր ներդրմանը՝ 12,7%.; Զբոսաշրջության հատվածում ներդրումները կազմել են 32,8 մլրդ դրամ կամ ներդրումների ընդհանուր ծավալի 3,5%-ը:

Այսօր Ղազախստանի և Հայաստանի միջև գոյություն ունի լավ հաստատված համագործակցություն տնտեսական և մշակութային-հումանիտար ոլորտներում: Սակայն Հայաստանի և Ղազախստանի զբոսաշրջիկների համար մեր երկրներն այնքան էլ ճանաչելի և առաջնահերթ չեն: Մինչդեռ զբոսաշրջային փոխադարձ հոսքերի զարգացման և համատեղ հայ-ղազախական տուրապրանքների ստեղծման մեծ ներուժ կա:



Զբոսաշրջիկների թվի աճը միշտ էլ հրատապ խնդիր է: Եվ հենց դրան էր նվիրված «Ղազախստանի և Հայաստանի տուրիստական ներուժը. փորձ, հեռանկարներ, համագործակցություն» հայ-ղազախական համաժողովը, որն անցկացվեց Ծաղկաձորում «Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ ուժերով ՀՀ-ում ՂՀ դեսպանության աջակցությամբ: Համաժողովի աշխատանքներին մասնակցեցին Հայաստանի տուրօպերատորների և հյուրանոցային համալիրների, ինչպես նաև Ղազախստանի տուրբիզնեսի ներկայացուցիչները:

Վիճակագրության համաձայն՝ անցյալ տարի Ղազախստանից Հայաստան է եկել 5000 մարդ: «Եվ չնայած սա անցյալ տարիների տվյալներից մի փոքր ավելի է, սակայն թիվն այնքան էլ մխիթարական չէ»,- շեշտում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության Տուրիզմի զարգացման քաղաքականության վարչության պետ Մեխակ Ապրեսյանը: Մասնավանդ ԱՊՀ երկրներ փոխադարձ այցերի զարգացման համար Ղազախստանում սկսել են օգտագործել «տուրիստական հավաստագրեր»: Այս գաղափարը շատ դուր եկավ զբոսաշրջային ոլորտի մասնագետներին, ովքեր ղազախստանյան գործընկերների հետ համագործակցության կարգավորման համար ուղիներ էին փնտրում:

Համատեղ զբոսաշրջային ապրանքների ստեղծումը, էթնո-փառատոները, ինչպիսիք են գինու, խորովածի, տոլմայի և այլ փառատոները, ընդհանուր





պատմամշակութային տեսարժան վայրերի վրա շեշտադրումը՝ Մեծ մետաքսի ճանապարհից մինչև հայ-ղփչաղական (հին ղազախական) գրերը. այս ամենը կարող է հիանալի հիմք դառնալ Ղազախստանից Հայաստան զբոսաշրջային այցերի համար: Եվ հակառակը, հայ զբոսաշրջիկներին այսօր կարող են հետաքրքրել զբոսաշրջության տարբեր տեսակները՝ էկոտուրիզմից մինչև լեռնադահուկային, Կասպից ծովի առափնյա շրջաններից մինչև անվանի ԷՔՍՊՈ ցուցահանդեսի անցկացումը Ղազախստանում. այս ամենը մեր երկրների զբոսաշրջային ներուժն է, որը մինչև հիմա դեռ բավարար չափով չի օգտագործվել:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության Տուրիզմի զարգացման քաղաքականության վարչության պետ Մեխակ Ապրեսյանը նշեց, որ Հայաստանում ամեն տարի գրանցվում է զբոսաշրջային այցելությունների ցուցանիշների աճ, ինչպես նաև ենթակառուցվածքային ցուցանիշների բարելավում: Նրա խոսքերով՝ Հայաստանը առանց ծովի երկիր է, երկու փակ սահմաններով երկիր և զբոսաշրջային հոսքերը դեպի Հայաստան զարգացնելու համար անհրաժեշտ է ակտիվացնել մարքեթինգային քաղաքականությունը, ավելի հասանելի լինել աշխարհին սահմանային ռեժիմի պարզեցման և տրանսպորտային հաղորդակցությունների հասանելիության ոլորտում: «Հայաստանը հայտարարել է բաց երկնքի քաղաքականություն, և կարծում եմ, որ շուտով մենք կտեսնենք այդ քաղաքականության պտուղները», - ընդգծել է Ապրեսյանը՝ ավելացնելով, որ հայ-ղազախական զբոսաշրջային այցելությունների վիճակագրությունը դիտելիս առայժմ պարծենալու ոչինչ չունենք:



Ղազախստանի Հանրապետության Էկոտուրիզմի տեղեկատվական ռեսուրսային կենտրոնի համակարգող Այգուլ Իսագուլովան, ով հատուկ եկել էր Հայաստան այս համաժողովին մասնակցելու նպատակով, նշեց, որ այսօր Ղազախստանում աշխատում են երկրի զբոսաշրջային բրենդի ստեղծման վրա, և ներկաներին ներկայացրեց Ղազախստանի հինգ հիմնական զբոսաշրջային կլաստերները: Ղազախական տուրիստական ծառայությունների իրացման հիմնական շուկան Ռուսաստանն է, Չինաստանը, Հնդկաստանը և Եվրոպան:

«Հուսով ենք, որ Հայաստանը ևս կդառնա Ղազախստանի զբոսաշրջային շուկայի սպառողը, մանավանդ որ մինչև 2020թ.-ը մենք նախատեսում ենք զբոսաշրջիկների թիվը մեր երկիր հասցնել 8 մլն-ի»,- ասել է Այգուլ Իսագուլովան: Նրա խոսքերով՝ այսօր Ղազախստանում գործում է առանց վիզայի ռեժիմ աշխարհի 20 երկրների համար (Հայաստանի դեպքում դա ավելի քան 40 երկիր է), և երկրում անցկացվում է զբոսաշրջության զարգացման քաղաքականություն հատկապես այն երկրների հետ, որտեղ գործում են «տուրիստական վկայագրերը»:

Տնտեսական ինտեգրացիայի հարցերով փորձագետ, Հայաստանի զարգացման գործակալության Արտահանման և ձեռնարկությունների զարգացման բաժնի նախկին տնօրեն Լուսինե Թումյանն իր ելույթում կանգ է առել կոնկրետ գաղափարների վրա, որոնք կարելի է օգտագործել համատեղ հայ-ղազախական զբոսաշրջային ապրանքի ստեղծման համար: Նրա խոսքերով՝ Հայաստանի ու Ղազախստանի մշակութային և պատմական ժառանգությունը Մեծ մետաքսի ճանապարհին զբոսաշրջությունը զարգացնելու համար իր մեջ կրում է մեծ աշխարհաքաղաքական ներուժ, և այն բավականին հրատապ է մեր





երկրների համար: «Անցնելով ժամանակի ավազներով՝ հայերը պահպանել և շատ ժողովուրդների համար նկարագրել են նրանց մշակութային ժառանգությունը: Հայ-ղազախական հարաբերությունների համատեքստում ողջ աշխարհի գիտնականների համար արժեքավոր նյութ են բազմաթիվ հայ-ղփչաղական (հին ղազախական) ձեռագրերը, որոնք պահվում են Մատենադարանում, ինչպես նաև հայերեն տառերով ղփչաղերեն բազմաթիվ գրառումները Լեհաստանի, Ուկրաինայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ռուսաստանի և այլ երկրների թանգարաններում», - նշել է Թումյանը:

«Հաշվի առնելով Ղազախստանից Վրաստան ուղիղ չվերթների առկայությունը և ավիատոմսերի ցածր արժեքը (երկկողմ տոմսը՝ $350)՝ հետաքրքիր հեռանկար ունեն համատեղ զբոսաշրջային ծրագրերը Վրաստանում և Հայաստանում, այդ թվում՝ պատմամշակութային ուղղություններով, բիզնես-տուրիզմը, գինու տուրիզմը, էթնո-տուրիզմը՝ ներառյալ Հայաստանի տարածքում ղփչաղական հուշարձանները: Այսպես, 12-րդ դ. Ղփչաղ/Առինջ գյուղում կառուցվել է Ղփչաղավանքը, որը Ղազախստանի և ղփչաղների պատմությամբ հետաքրքրվող շատ զբոսաշրջիկների հետաքրքիր կլինի տեսնել», - ասել է Թումյանը:

Զբոսաշրջության զարգացման և փոխադարձ ապրանքաշրջանառության համար հետաքրքիր հեռանկար ունի Հայաստան-Իրան երկաթուղու կառուցումը, որը կարող է միանալ ՉԺՀ-ի, Ղազախստանի, Իրանի, Հայաստանի, Վրաստանի երկաթուղիներին՝ դուրս գալով դեպի Փոթիի, Բաթումիի, Բանդարաբասի նավահանգիստներ, ինչը կդառնա հնագույն Մետաքսի ճանապարհի վերականգնումը նոր հիմքի վրա: Նույնը կարելի է ասել Հյուսիս-Հարավ նախագծի վերաբերյալ, որը կմիացնի Հայաստանը միջազգային կարգի ավտոմայրուղով Իրանի և Վրաստանի հետ, այդ թվում և Բանդարաբաս, Բաթումիի և Փոթիի նավահանգիստների հետ:

Ղազախական տուրիստական ասոցիացիայի ներքին և ներգնա տուրիզմի ղեկավար Ռաուշան Սարտաևան, ով նաև տուրիստական գործակալություն է ղեկավարում, պատմեց հայ տուրօպերատորների հետ աշխատելու շահագրգռվածության մասին: Նրա խոսքերով՝ այսօր լավ հիմքի վրա դրված համագործակցություն կա Թուրքիայի, Վրաստանի, Ադրբեջանի, Ղրղզստանի հետ: Այսօր մեծ համբավ ունեն Մեծ մետաքսի ճանապարհով երթուղիները, և գոյություն ունեցող Հայաստան-Ղազախստան տուրիստական վակուումը կարելի է լցնել Մետաքսի ճանապարհի ճյուղի ստեղծմամբ, որը կմիացնի զբոսաշրջիկներին Հայաստանից, Իրանից և Ղազախստանից:

Ղազախստանի տուրիստական արդյունաբերության ներկայացուցիչներ Այգուլ Իսագուլովան և Ռաուշան Սարտաևան խոսում էին հայ գործընկերների հետ աշխատելու շահագրգռվածության և տուրիստական վակուումը լցնելու մասին, մանավանդ որ շուրջը անսահման գեղեցկություն կա:

«Բարի՛ գալուստ մեր երկիր». այս խոսքերը հիմնականն էին Հայաստանի և Ղազախստանի տուրիզմի ոլորտի ներկայացուցիչների զրույցում: Համաժողովի մասնակիցները կարծում են, որ ապագա համագործակցության հիմքն արդեն դրված է՝ մանավանդ հաշվի առնելով այն, որ երկու քաղաք՝ հայկական Ջերմուկը և ղազախստանյան Շչուչինսկը, քույր-քաղաքներ են: Իսկ «բարեկամները պետք է միմյանց հյուր գնան», ինչպես ասում է Մեխակ Ապրեսյանը, մանավանդ որ ինչպես մասնավոր հատվածի, այնպես էլ պետական շրջանների ներկայացուցիչները շահագրգռված են Ղազախստանի և Հայաստանի միջև տուրիստական կապերի զարգացմամբ:

Լուսինե Թումյանի խոսքերով՝ արդեն նախաձեռնություն կա հայկական առաջատար տուրօպերատորների կողմից՝ կազմակերպել ճանաչողական, գովազդային տուրեր առաջատար ղազախստանյան տուրօպերատորների համար, որոնք հետաքրքրված կլինեն տեղի զբոսաշրջիկներին Հայաստան ուղարկել պատմամշակութային, կորպորատիվ, գինու, բժշկական, ինչպես նաև զբոսաշրջության ակտիվ ձևերի ուղղություններով:

Ինչպես շեշտում էին շատ ելույթ ունեցողներ, չնայած քաղաքական և տնտեսական համագործակցության զարգացող ներուժին, չնայած ԵԱՏՄ, ՀԱՊԿ, ԱՊՀ ընդհանուր շրջանակներին, այսօր Հայաստանն ու Ղազախստանը այնքան էլ բաց չեն երկու երկրների քաղաքացիների համար զբոսաշրջության առումով: Եվ այդ դռները հարկավոր է բացել, մանավանդ որ համագործակցության ներուժը և միասին աշխատելու ցանկությունն առկա է:

Հայաստանի և Ղազախստանի զբոսաշրջային արդյունաբերության ներկայացուցիչների առաջին հանդիպումը, կարծում ենք, շուտով կտա իր պտուղները: Մանավանդ որ, ինչպես ասվում էր համաժողովի ժամանակ, շահագրգռված են ոչ միայն բիզնես-կառույցները, այլև պետությունները: Իսկ եթե հետաքրքրվածություն կա, երբ կա առաջին քայլը, ուրեմն շուտով կհայտնվեն նաև առաջին զբոսաշրջիկները:

Չէ՞ որ մենք միմյանց ցույց տալու իրոք շատ բան ունենք:




# ՎԵՐՋԱԲԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Տարիներ շարունակ Աստանան ու Երևանը ցուցադրում են միմյանց հետ փոխհարաբերությունների առավելագույն կառուցողական բնույթ: «Մեր երկրների միջև կառուցողական և վստահելի երկխոսություն է ձևավորված բոլոր մակարդակներով: Մենք շահագրգռված ենք խորացնելու և ընդլայնելու երկկողմ առևտրատնտեսական և մշակութային-հումանիտար հարաբերությունները Հայաստանի հետ»,- ասում է Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևը: Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի խոսքերով. «Հայաստանն ու Ղազախստանը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության դաշնակից երկրներ են, և դրանով ամեն բան ասված է»: Ս.Սարգսյանը համոզմունք է հայտնել, որ երկու երկրները ոչ ամբողջությամբ են օգտագործում տնտեսական համագործակցության հնարավորությունները: «Հեռանկարում մենք պետք է խրախուսենք մեր բիզնես-հանրությունների միջև շփումները, հարմար պայմաններ ստեղծենք փոխգործակցության համար»,- հայտարարել է ՀՀ նախագահը:

Վերոնշյալն այն բանի վկայությունն է, որ և՛ Հայաստանում, և՛ Ղազախստանում համագործակցությունը զարգացնելու հետաքրքրություն կա, ընդ որում՝ ամենատարբեր ոլորտներում՝ քաղաքականություն, տնտեսություն, մշակույթ, գիտություն, կրթություն և այլն:

Դիվանագիտական հարաբերություններ հաստատելու պահից երկու երկրների միջև ստորագրվել են Խաղաղության և համագործակցության մասին պայմանագիրը, տասնյակ համաձայնագրեր, արձանագրություններ, կոնվենցիաներ: Հայաստանի՝ ԵԱՏՄ մտնելով՝ բարձրացվել է փոխհարաբերությունները խորացնելու երկկողմ հետաքրքրությունը. կողմերը սկսել են մտածել քաղաքական և առևտրատնտեսական փոխգործակցության դինամիկայի ակտիվացման մասին:

Հայաստանի սպասելիքները հետևյալն են՝ սեփական արտադրանքի մուտք դեպի լայն սպառման շուկա, գործընկեր երկրներում հայրենական բիզնեսի ներդրումների պաշտպանություն և տնտեսական ռիսկերի հաղթահարում՝ ներառյալ հումքային շուկաների կոնյունկտուրան: Ինչ վերաբերում է Ղազախստանին, ապա KaznexInvest-ի գնահատականով՝ Հայաստանի շուկան որոշակի պոտենցիալ է ներկայացնում վերամշակված ապրանքի արտահանման համար: Համապատասխանաբար, այս հանգամանքը կարող է Ղազախստանին խթանել տվյալ ապրանքի արտադրության մակարդակը բարձրացնելու համար և բարենպաստ հանգամանքների դեպքում նրան հնարավորություն կտա սեփական տեղը զբաղեցնելու Հայաստանի տնտեսությունում:

Ղազախստանի նախաձեռնությունները՝ ուղղված ոչ միջուկային աշխարհի ստեղծմանը, միջմշակութային և միջդավանանքային երկխոսության զարգացմանը, տնտեսական ճգնաժամերը հաղթահարելու մեխանիզմների ձևավորմա-

նը, բազմիցս ստացել են Հայաստանի աջակցությունը զանազան միջազգային կառույցներում: Չէ՞ որ համագործակցության այն փորձը, մեր ժողովուրդների այն ջերմ ու բարեկամական հարաբերությունները, որոնք կային ԽՍՀՄ տարիներին և նրա փլուզումից հետո, հենց այնպես չեն կարող անհետանալ: Իսկ Ղազախստանի բազմահազարանոց հայկական համայնքը, որն այս երկրում ներկայացված է ինչպես քանակապես, այնպես էլ որակապես, շարունակում է համագործակցության ամենակարևոր օղակներից մնալ երկու երկրների համար, որոնց հայացքն այսօր հառնված է դեպի ապագա՝ համատեղ նախագծերի և փոխլրացնող շահերի:

Չնայած Հայաստանի և Ղազախստանի միջև առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը խոչընդոտում է ուղիղ տրանսպորտային կապի բացակայությունը, սակայն այդ հարաբերությունները զարգացման հեռանկարներ ունեն: Ղազախստանից Հայաստան ներկրման հիմնական ապրանքներն են հացահատիկի վերամշակման ապրանքները, մետաղական արտադրանքը, տարբեր տեսակի սարքավորումներ, կոնդենսատորներ, էլեկտրաշարժիչներ, պանելներ, տպագիր հրատարակություններ: Հայաստանից Ղազախստան հիմնականում արտահանվում է պլաստմասսա, կաուչուկ, կոշկեղեն, քարից, գիպսից ապրանքներ, քարի վերամշակման հաստոցներ, զարդեղեն, ալկոհոլ, մրգեղեն: Բացի այդ՝ Ղազախստանը մտնում է այն երկրների եռյակի մեջ, որոնք Հայաստանի համար դրամային տրանսֆերտների առաջատար աղբյուր են, որոնք հանրապետություն են ուղարկվում հայկական սփյուռքի և արտասահմանում աշխատանքային միգրանտների կողմից:

«Հայաստանը և Ղազախստանը նախատեսում են համատեղ նախագծեր իրականացնել»,- ասում է KaznexInvest Արտահանման և ներդրումների ազգային գործակալության խորհրդի փոխնախագահ Մեյերժան Մայկենովը, ով ընդգծում է, որ «երկու կողմերն էլ պատրաստ են ցանկացած համագործակցության տարբեր ոլորտներում»: Նրա խոսքերով՝ երկրների միջև ապրանքաշրջանառությունն այս պահին այն մակարդակին չէ և չի բավարարում կողմերի պահանջները, չնայած կա բավականին լուրջ ներուժ: Նա նշել է երկրների միջև համագործակցության զարգացման համար տարվող աշխատանքի անհրաժեշտությունը՝ մանավանդ նկատի առնելով ԵԱՏՄ-ն, որը մեծ հնարավորություններ է տալիս համագործակցության համար՝ հաշվի առնելով ընդհանուր մաքսային տարածությունն իր ծավալուն շուկայով, ապրանքների, մարդկային ռեսուրսների և կապիտալի ազատ տեղաշարժի հնարավորությունը: «Համապատասխանաբար անհրաժեշտ է օգտագործել բոլոր հնարավորությունները, որ տալիս է մեզ ԵԱՏՄ-ն, և ավելացնել առևտրային համագործակցությունը մեր երկրների միջև», - ասում է Մայկենովը:

Ղազախստանը համագործակցության հնարավորություններ է տեսնում գործնականում բոլոր ոլորտներում և պատրաստ է հայկական սպառողին առաջարկել ինչպես ծառայությունների, այնպես էլ մեքենաշինության, սննդամթերքի, քիմիական բնագավառների ապրանքների լայն սպեկտր: Հայ արտադրողներն էլ են բաց համատեղ նախագծերի իրականացման համար: Այսպես 2015թ. Երևանում կայացավ առաջին հայ-ղազախական բիզնես-ֆորումը, որը կազմակերպել էին ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը և ՂՀ Արտահան-






ման ու ներդրումների ազգային գործակալությունը: Հայ և ղազախ բիզնեսմենները, որոնք հասցրին բավարար տեղեկատվություն ստանալ երկու երկրների ներդրումային կլիմայի և համագործակցության հնարավորությունների մասին, սկսեցին B2B («բիզնեսը բիզնեսի համար») ձևաչափով երկխոսություն:

«Ղազախստանն ավարտել է դեպի Իրան երկաթուղու շինարարությունը: Ղազախստանյան բեռները կհասնեն մինչև Թավրիզ քաղաք, որից մինչև հայկական սահման ընդամենը 56կմ է, - ասում է «Ինտեգրացիա և զարգացում» ՀԿ նախագահ Արամ Սաֆարյանը: - Եթե մենք ներդրողներ գտնենք և կապենք Ղազախստան-Թուրքմենստան-Իրան երկաթուղին Հայաստանի հետ, ապա իսկայական հնարավորություններ կբացենք համագործակցության համար»:

Ի դեպ նշենք, որ համագործակցության զարգացման հեռանկարներն ակնհայտ են նաև այլ ոլորտներում՝ մշակույթի և բժշկության, Ղազախստանի և Հայաստանի գիտական շրջանների միջև և զբոսաշրջության ոլորտում, գյուղատնտեսության ոլորտի և դատաիրավական կառույցների ներկայացուցիչների միջև և այլն:

Եթե պատկերավոր խոսենք, ապա այսօր Հայաստանին ու Ղազախստանին լիարժեք առևտրատնտեսական համագործակցությունից բաժանում է ընդամենը 56կմ: Որովհետև երկկողմ կապերի այն նվաճումների առկայությունը, որոնք այսօր գոյություն ունեն Հայաստանի և Ղազախստանի միջև, ենթադրում է երկար ճանապարհի դեպի ապագա, ինչի համար 56 կիլոմետրն ընդամենը ճանապարհի մի փոքր հատված է, որը երկու կողմերը ցանկության դեպքում կարող են բառացիորեն տնկել համագործակցության ծաղիկներով: Իսկ նման ցանկություն (և դրա մասին է խոսում ամբողջ «Հայաստան-Ղազախստան. համագործակցության հարթակներ» գիրքը) իրոք կա և՛ Հայաստանի, և՛ Ղազախստանի ներկայացուցիչների մոտ:



# ԱԶԳԻ ԾՐԱԳԻՐ՝ ՀԻՆԳ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 100 ՔԱՅԼ

Պետության ղեկավար Նուրսուլթան Նազարբաևի Ազգի ծրագիրը՝ հինգ ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման 100 քայլ:

«100 կոնկրետ քայլ». սա պատասխան է գլոբալ ներքին մարտահրավերներին և միևնույն ժամանակ նոր պատմական պայմաններում զարգացած պետությունների 30-յակ մտնելու ԱԶԳԻ ԾՐԱԳԻՐ:

«100 կոնկրետ քայլերը» մեր երկրին կտան մի այնպիսի ԱՄՐՈՒԹՅԱՆ ՊԱՇԱՐ, ինչը թույլ կտա հաստատուն կերպով ԱՆՑՆԵԼ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԴ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ:

Ռազմավարություն-2050 ծրագրի ՈՒՂՈՒՑ ՉՇԵՂՎԵԼ և ԱՄՐԱՊՆԴԵԼ ՂԱԶԱԽՍՏԱՆՅԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Ծրագիրը արմատական փոփոխություններ է մտցնում հասարակության և պետության մեջ, որոնց գլխավոր նպատակը «ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄՆ» է, ԱՅԼ ՈՉ ԹԵ ԴՐԱՆՑ «ԱՐՏԱՔԻՆ ԱԽՏԱՆԻՇՆԵՐԻ» ՀԱՐԹԵՑՈՒՄԸ:

## 5 ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

- ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ
- ՕՐԵՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ
- ԻՆԴՈՒՍՏՐԱԼԱՑՈՒՄ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ
- ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՊԱԳԱՅԻ ԱԶԳ
- ԹԱՓԱՆՑԻԿ ՀԱՇՎԵՏՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# 100 ԿՈՆԿՐԵՏ ՔԱՅԼ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

## I. ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

**1.** ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ:

Ծառայության անցնելը պետք է սկսվի ստորին պաշտոններից:

**2.** Ստորին պաշտոնների համար թեկնածուների ընտրությունը և հետագա կարիերային առաջխաղացումը պետք է իրականացվեն ԿՈՄՊԵՏԵՆՏ ՄՈՏԵՑՄԱՆ հիման վրա:

**3.** Առաջին անգամ պետական ծառայության ընդունվողների ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ ԴՅ ՊԵՏԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ և ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻՆ ՀԱԿԱԶԴՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԴԵՐԻ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ հաշվին: Ընտրության եռաստիճան համակարգի ներմուծում:

**4.** ՊԱՐՏԱԴԻՐ ՓՈՐՁԱԺԱՄԿԵՏ առաջին անգամ պետծառայության անցնողների համար 3 + 3 ՁԵՎԱՉԱՓՈՎ (համապատասխանության շեմային վերահսկողություն 3 և 6 ամիս անց համապատասխանաբար):

**5.** Պետական ծառայողների աշխատանքի վարձատրության ԲԱՐՁՐԱՑՈՒՄ՝ գործունեության արդյունքներից կախված:

**6.** ԱՆՑՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ:
Պետծառայողների համար՝ տարեկան անհատական պլանների կատարում: Պետական մարմինների համար՝ ռազմավարական ծրագրերի կատարում. նախարարների և ակիմների համար՝ պետական ծառայությունների որակի, կյանքի որակի, ներդրումների ներգրավման հատուկ ինդիկատորներ. կառավարության անդամների համար՝ ինտեգրալ մակրոտնտեսական ինդիկատորներ:

**7.** Պետական ծառայողների ԲԱԶԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ համար ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՃՇՏՈՂ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ներմուծում:

**8.** Ռոտացիայով աշխատող պետծառայողներին ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ պաշտոնական պարտականությունների կատարման ժամանակահատվածում ԱՌԱՆՑ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ:

**9.** ՊԵՏԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄ, որակավորման բարձրացում ոչ պակաս, քան երեք տարին մեկ անգամ:

**10.** ՊԵՏԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՑՈՒՄ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ: Մերիտոկրատիայի սկզբունքի ամրապնդում «Բ» կորպուսի բարձր պաշտոնների առաջքաշման հաշվին միայն մրցույթով ստորին պաշտոններ զբաղեցնող պետծառայողների թվից:

**11.** Պետծառայությունում աշխատելու թույլտվություն ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՄԵՆԵՋԵՐՆԵՐԻ, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԱՌԱՆՁԻՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ և ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ ՂՅ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ: Նրանց նշանակումը կարող է իրականացվել հատուկ պահանջմունքներով և պաշտոնների առանձին ցանկով: Այս քայլը պետական ծառայությունը դարձնում է բաց և մրցունակ համակարգ:

**12.** ՆՈՐ ԷԹԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ: Նոր Պետծառայության էթիկական օրենսգրքի մշակում: Էթիկայի հարցերով լիազորի պաշտոնի ներմուծում:

**13.** ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈՒԺԵՂԱՑՈՒՄ, այդ թվում՝ նոր օրենսդրության մշակմամբ: Պետծառայության և կոռուպցիային հակազդելու հարցերով գործակալությունում Հակակոռուպցիոն հատուկ ստորաբաժանման ստեղծում՝ համակարգային նախազգուշացման և կոռուպցիոն իրավախախտումների կանխման համար:

**14.** ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆՈՐ ՕՐԵՆՔԻ ընդունում, որը կտարածվի բոլոր պետական մարմինների ծառայողների վրա, այդ թվում՝ իրավապաշտպան:

**15.** ԳՈՐԾՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ԱՏԵՍՏԱՑԻԱՅԻ անցկացում պետծառայության մասին նոր օրենքի ընդունումից, որակավորման պահանջների բարձրացումից և աշխատանքի վարձատրության նոր համակարգի ներմուծումից հետո:

# II. ՕՐԵՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

**16.** ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՆՍՏԱՆՑԻԱՆԵՐԻ ՕՊՏԻՄԻԶԱՑՈՒՄ՝ ԴԵՊԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ԴՅՈՒՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ: ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀՆԳԱՍՏԻՃԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ (առաջին, վճռաբեկ, վերաքննիչ, վերահսկողական և կրկնական վերահսկողական) ԱՆՑՈՒՄ ԴԵՊԻ ԵՌԱՄԱԿԱՐԴԱԿ ՀԱՄԱԿԱՐԳ (առաջին, վճռաբեկ և վերաքննիչ):

**17.** ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԽՍՏԱՑՈՒՄ դատական պաշտոնների համար: Պարտադիր նորմ է՝ դատական գործընթացներին մասնակցության 5 տարվա ստաժը: Իրավիճակային թեստերի համակարգի ներմուծում մասնագիտական ունակությունները ստուգելու համար: Դատավորի թեկնածուները ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՄԵԿ ՏԱՐԻ ՍՏԱԺԱՎՈՐՈՒՄ կանցնեն՝ ստանալով կրթաթոշակ: Մեկամյա ստաժավորման ավարտից հետո դատավորները կանցնեն ՄԵԿ ՏԱՐՎԱ ՓՈՐՁԱՇՐՋԱՆ:

**18.** ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ առանձնացումը ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ՝ ուսումնառության և դատական պրակտիկայի փոխադարձ կապն ուժեղացնելու նպատակով: Տվյալ ինստիտուտը կգործի Գերագույն դատարանին կից և կապահովի գործող դատավորների որակավորման բարձրացումը կանոնավոր հիմունքներով:

**19.** ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ՝ ՀԱՇՎԵՏՈՒ ԼԻՆԵԼՈՒ ՈՒԺԵՂԱՑՈՒՄԸ: Դատավորների նոր ԷԹԻԿԱՅԻ ՕՐԵՆՍԳՐՔԻ մշակում, որի հիման վրա քաղաքացիները կարող են բողոքարկել դատավորների գործողությունները երկրի Գերագույն դատարանին կից հատուկ ստեղծված ԴԱՏԱԿԱՆ ԺՅՈՒՐԻՈՒՄ:

**20.** ԲՈԼՈՐ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՁԱՅՆԱՏԵՍԱԳՐՈՒՄ պարտադիր կարգով: Դատավորը չպետք է տեսաձայնագրումը կանգնեցնելու կամ տեսաձայնագրման նյութերը խմբագրելու հնարավորություն ունենա:



**21.** Ժյուրիի կիրառման ոլորտի ընդլայնում: Քրեական գործերի օրենսդրական սահմանում, որտեղ ԺՅՈՒՐԻԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՊԱՐՏԱԴԻՐ:

**22.** ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՄԵՂԱԴՐՈՂԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԻՋԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ բոլոր հետաքննչական գործողությունները վավերացնելու լիազորությունները փուլառփուլ հետաքննող դատավորին փոխանցելու հաշվին:

**23.** ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԱՌԱՆՁԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ստեղծում: Գերագույն դատարանում ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ կազմակերպում՝ խոշոր ներդրողների մասնակցությամբ վեճերը քննելու համար:

**24.** Աստանա քաղաքում AIFC ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ստեղծում Դուբայի փորձի օրինակով:

**25.** ՂՀ Գերագույն դատարանին կից միջազգային խորհրդի ստեղծում ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ներմուծման համար ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ: Խորհուրդը Գերագույն դատարանի համար խորհրդատվություններ կանցկացնի ղազախստանյան արդարադատության կատարելագործման հարցերով:

**26.** Քաղաքացիական-իրավական վեճերում դատարանում ԴԱՏԱԽԱԶԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ կրճատում դատական ընթացակարգերի պարզեցման և դատական գործընթացի արագացման համար: Քաղաքացիական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխությունների կատարում:

**27.** Մասնավոր դատական կատարածուների ինստիտուտի հետագա զարգացում: ԴԱՏԱԿԱՆ ԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԱՌՓՈՒԼ ԿՐՃԱՏՈՒՄ:

**28.** Ոստիկանության աշխատակիցների ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԿՈՄՊԵՏԵՆՏ ՄՈՏԵՑՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ: Ոստիկանության աշխատակիցների թեկնածուների և գործող աշխատակիցների թեստավորման հատուկ համակարգի ներմուծում՝ անհատական հատկանիշները և մասնագիտական ունակությունները ստուգելու համար:

**29.** ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ: Ծառայության կատարման միասնական կանոնների ներմուծում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր իրավապաշտպան ծառայության գերատեսչական առանձնահատկությունները:

**30.** ՏԵՂԻ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ստեղծում, որը հաշվետու է տեղի գործադիր մարմիններին և տեղի հանրությանը: Տեղի ոստիկանական ծառայության կոմպետենտությունը. հանրային կարգուկանոնը պաշտպանելու, կենցաղային հանցավորությանը հակազդելու հարցեր, ճանապարհային-պարեկային ծառայություն, «զրոյական» հանդուրժողականություն մանր իրավախախտումների նկատմամբ: Ճանապարհային-պարեկային ոստիկանության աշխատակիցները կապահովվեն տեսագրանցիչներով, որոնք կֆիքսեն այն ամենը, ինչ անում է ոստիկանության աշխատակիցը պարեկային հերթափոխի ընթացքում:

**31.** Ոստիկանության թափանցիկության ապահովում էթիկական նորմերը խախտող ոստիկանների գործողությունների վերաբերյալ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ստեղծման հաշվին: ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄՐԱԳՐՎԵՆ ՕՐԵՆՍԴՐՈՐԵՆ:

**32.** «Քրեական իրավախախտումների քարտեզ» ազգային տեղեկատվական համակարգի հիման վրա «ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ» ինտերնետ-պորտալի ստեղծում: Քարտեզի վրա կնշվեն երկրում կատարված բոլոր քրեական իրավախախտումները կատարումից ոչ ուշ, քան մեկ շաբաթ ժամկետում: ԴԱ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՏԱ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱՀՍԿԵԼՈՒ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ:

**33.** Ազատազրկման վայրերից ազատված և հաշվառման մեջ գտնվող քաղաքացիների սոցիալական ռեաբիլիտացիայի արդյունավետ համակարգի կազմում: Այդպիսի քաղաքացիների համար ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՌԵԱԲԻԼԻՏԱՑԻԱՅԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆԴԱՐՏԻ մշակում:

**34.** Քրեակատարողական ենթակառուցվածքի արդիականացում ՊԵՏԱԿԱՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ շրջանակներում:
Միջազգային փորձի ուսումնասիրում և առաջարկների մշակում քրեակատարողական հաստատությունների կառուցման, ապահովման և կառավարման մեջ մասնավոր հատվածի ներգրավման առնչությամբ:



## III. ԻՆԴՈՒՍՏՐԱԼԱՑՈՒՄ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

**35.** ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ԴՆԵԼ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ դրանց արդյունավետ օգտագործման նպատակով: Փոփոխություններ մտցնել ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԵՎ ԱՅԼ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ:

**36.** ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ընթացակարգի պարզեցում: Գյուղատնտեսական հողերի օգտագործման կանոնավոր մոնիթորինգ: Բոլոր չօգտագործվող հողերի փոխանցում ՊԵՏԱԿԱՆ ՖՈՆԴ ՀԵՏԱԳԱ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՄԱՐ:

**37.** Հարկային և մաքսային քաղաքականությունների և ընթացակարգերի օպտիմիզացիա: Միասնական մաքսային տարիֆի Մաքսային քանակի կրճատում «0-5-12» մոդելով միատեսակ ապրանքախմբերի շրջանակներում ТН ВЭД 6 նշանների վրա:

**38.** «Մեկ պատուհանի» սկզբունքի ներդրում արտահանողների և ներդրողների համար մաքսային ընթացակարգեր անցնելիս: Էլեկտրոնային հայտարարագիր լրացնելու համակարգի զարգացում (ապրանքների մաքսային մաքրման ավտոմատացված համակարգի ներդրում): Արտահանման և ներկրման համար փաստաթղթերի քանակի և դրանց մշակման ժամանակի կրճատում:

**39.** ՄԱՔՍԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄ: Ներկրողին հարկման նպատակով կհետևեն Ղազախստանի տարածք ապրանքի ներկրման պահից մինչև դրա իրացումը:

**40.** ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՔՐՄԱՆ «ՊՈՍՏՖԱԿՏՈՒՄ» ՌԵԺԻՄԻ ՆԵՐԴՐՈՒՄ: ВЭД մասնակիցների առանձին կատեգորիաներին ապրանք թողարկելու հնարավորությունների տրամադրում մինչև ապրանքի մասին հայտարարագիր տալը:

**41.** ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ԵՎ ԴՐԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՊԱՐԶԵՑՈՒՄ: Գործող օրենսդրության մեջ փոփոխությունների և լրացումների իրականացում:

**42.** 2017թ. հունվարի 1-ից ՄՏՑՆԵԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ պետական ծառայողների համար՝ հետագայում փուլառփուլ անցնելով բոլոր քաղաքացիներին:

**43.** ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՑԱՆՑԻ ՍՏԵՂԾՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ: Կենտրոնները հարկ մուծողների էլեկտրոնային փաստաթղթերի միասնական արխիվ մուտքի իրավունք կունենան: ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ համակարգի ներդրում: Հայտարարագիր ներկայացնողները կդասակարգվեն ըստ ռիսկի կատեգորիաների՝ հարկային վերահսկողության մասին որոշում ընդունելու համար: Հայտարարագրի առաջին հանձնումից հետո ֆիզիկական անձինք կրկնակի ստուգման չեն ենթարկվի երեք տարվա ընթացքում:

**44.** ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ: Ավելացված արժեքի հարկի փոխարեն վաճառքից հարկի ներմուծման հարցի մանրամասն ուսումնասիրում:

**45.** ԳՈՐԾՈՂ ՀԱՐԿԱՅԻՆ ՌԵԺԻՄՆԵՐԻ ՕՊՏԻՄԻԶԱՑԻԱ եկամուտների և ծախսերի հարկային հաշվառման պարտադիր ներմուծմամբ:

**46.** Թույլտվությունների ստացման գործընթացի օպտիմիզացիա: ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՄԱՆ ԵՌԱՍՏԻՃԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ («30-20-10») ՆԵՐՄՈՒԾՈՒՄ: Առաջին աստիճան՝ ճարտարապետական-պլանավորման առաջադրանքի տրամադրում. կտևի հայտի հանձնումից հետո մինչև 30 օր: Երկրորդ՝ էսքիզային նախագծի (դիզայն-նախագծի) համաձայնեցում՝ մինչև 20 օր, երրորդ՝ հենց թույլտվությունը՝ մինչև 10 օր:

**47.** Մինչնախագծային և նախագծի նախահաշվի փաստաթղթերի փորձաքննության անցկացման համար ՊԵՏԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀԻՑ ՓՈՒԼԱՌՓՈՒԼ ՀՐԱԺԱՐՈՒՄ: Նախագծերի փորձաքննության փոխանցում մրցակցային միջավայր:

**48.** ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՄԱՆ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ: Շինարարության մեջ գնագոյացման նոր մեթոդի ներմուծումը հնարավորություն կտա որոշելու օբյեկտների շինարարության նախահաշվային արժեքը ընթացիկ գներով՝ նյութերի, ապրանքների, սարքավորումների և աշխատավարձի իրական շուկայական արժեքով, ինչպես նաև կապահովի նախահաշվային-նորմատիվային բազայի օպերատիվ թարմացումը նոր նյութերով, սարքավորումներով և տեխնոլոգիաներով:

**49.** ԵՎՐՈԿՈԴԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ՀՆԱՑԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ, որոնք կիրառվում են խորհրդային ժամանակներից: Նոր նորմատիվների ընդունումը թույլ կտա կիրառել ինովացիոն տեխնոլոգիաներ և նյութեր, բարձրացնել ղազախստանյան մասնագետների մրցունակությունը շինարարական ծառայությունների շուկայում, ինչպես նաև հնարավորություն կստեղծի ղազախստանյան ընկերությունների համար դուրս գալու շինարարության ոլորտի ծառայությունների արտասահմանյան շուկաներ:



**50.** ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ: «ՄԵԿ ԳՆՈՐԴԻ» ՄՈԴԵԼԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ: Սա թույլ կտա հարթել մարզերի միջև էլեկտրաէներգիայի սակագների տարբերությունները:

**51.** ՄԱՐԶԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՈՒՄ: Սա թույլ կտա բարձրացնել էներգամատակարարման հուսալիությունը, իջեցնել մարզերում էլեկտրաէներգիայի փոխանցման ծախսերը և իջեցնել էլեկտրաէներգիայի գինը սպառողների համար:

**52.** ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱՅՈՒՄ ՆՈՐ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ, ԻՆՉԸ ԿԽԹԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄՈՒՏՔՆ ԱՅԴ ԲՆԱԳԱՎԱՌ: Սակագնի կառուցվածքի փոփոխում: Սակագնում կառանձնացվի երկու կոմպոնենտ. ֆիքսված մաս կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար և օգտագործված էլեկտրաէներգիայի համար վճար՝ էլեկտրաէներգիայի փոփոխական արտադրական ծախսերը փակելու համար: Սա կփոխի առկա իրավիճակը, երբ սակագները հաստատվում են «ծախսային» մեթոդով:

**53.** ՀԱԿԱՄՈՆՈՊՈԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ԲԵՐԵԼՈՎ ՆՐԱՆ ՏՀԶԿ (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն) ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ: Նորացված ծառայությունը պետք է կողմնորոշվի դեպի ազատ մրցակցության առաջքաշումը:

**54.** ԲԻԶՆԵՍ-ՕՄԲՈՒԴՍՄԵՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ՝ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ՇԱՀԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ: Նոր ինստիտուտի կազմի մեջ կմտնեն բիզնեսի և Ձեռներեցների ազգային պալատի ներկայացուցիչները:

**55.** ՆՎԱԶԱԳՈՒՅՆԸ ՏԱՍԸ ՏՐԱՆՍԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ՀԱՏՎԱԾ՝ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐ ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ: Միջազգային բիզնեսին տեղեկացում նոր հնարավորությունների մասին միջազգային տնտեսական ֆորումներում:

**56.** Տնտեսության առաջնային հատվածներում ՀԱՄԱՏԵՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ստեղծում «խարսխային ներդրողների»՝ միջազգային ռազմավարական գործընկերների հետ («Էյր Աստանայի», «Թենգիզշևրոյլ»-ի օրինակով): Հետագայում համատեղ ձեռնարկություններում պետության մասնաբաժինը դուրս կբերվի Սկզբնական հրապարակային առաջարկի՝ IPO: ԲԱՐԵՆՊԱՍՏ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՌԵԺԻՄԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԱՄՆ-Ի, ԿԱՆԱԴԱՅԻ, ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ՝ արտասահմանից բարձրակարգ մասնագետներ գրավելու համար:

**57.** Ռազմավարական (խարսխային) ներդրողների ներգրավում, որոնք ունեն ՉԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԿԼԱՍՏԵՐՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՋՈՂ ՓՈՐՁ:

**58.** Ռազմավարական (խարսխային) ներդրողների ներգրավում՝ ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՕՊԵՐԱՏՈՐԻ ստեղծման համար:

**59.** ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԷՆԵՐԳԱՏՆՏԵՍՄԱՆ ՈԼՈՐՏ՝ ՄԻՋԱԶԳԱՅՆՈՐԵՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԷՆԵՐԳԱԾԱՌԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՄԻՋՈՑՈՎ: Նրանց հիմնական խնդիրն է մասնավոր էներգածառայական ընկերությունների զարգացման խթանումը էներգատնտեսման ոլորտում համալիր ծառայություններ տրամադրելու համար՝ փոխհատուցելով սեփական ծախսերը և ստանալով ֆինանսական եկամուտ ըստ էության հասանելի էներգետիկ խնայողություններից:

**60.** ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԿԱԹԻ ԵՎ ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ: Հիմնական խնդիրն է. արտադրված ապրանքի մինչև կեսի արտահանման ապահովում ԱՊՀ երկրների շուկաներ երեք տարվա ընթացքում: Աշխատանքը կկառուցվի նորզելանդական Fronterra-ի և հոլանդական Arla-ի օրինակով՝ գյուղում զարգացնելով կոոպերատիվ արտադրությունը:

**61.** ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ՄՍԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ: Հիմնական խնդիրներն են հումքային բազայի զարգացումը և վերամշակված ապրանքի արտահանումը:

**62.** «ԱԶԳԱՅԻՆ ՉԵՄՊԻՈՆՆԵՐ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ իրականացում՝ կողմնորոշվելով կոնկրետ ընկերությունների՝ տնտեսության ոչ հումքային բնագավառներում միջին բիզնեսի առաջատարների աջակցության վրա: Բիզնես-առաջատարների սահմանումը «նոու-հաու»-ի փոխանցման կենտրոններ ստեղծելու հնարավորություն կտա:

**63.** ԵՐԿՈՒ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԿԼԱՍՏԵՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔ: ՆԱԶԱՐԲԱԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԱՍՏԱՆԱ ԲԻԶՆԵՍ ԿԱՄՊՈՒՍ»-ՈՒՄ ԿՏԵՂԱԿԱՅՎԵՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ՝ համատեղ գիտահետազոտական ծրագրերի և փորձանախագծային աշխատանքների կատարման, ինչպես նաև դրա հետագա առևտրայնացման համար: Կոնկրետ արտադրական ծրագրերի իրականացման համար ինովացիոն տեխնոլոգիաների պարկը կգրավի տեղական և արտասահմանյան բարձրտեխնոլոգիական ընկերություններին:



**64.** «Գիտական և/կամ գիտատեխնիկական գործունեության արդյունքների առևտրայնացման մասին» օրենքի մշակում, որը կպարունակի ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՆՈՎԱՑԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ: Գիտական դրամաշնորհների և ծրագրերի կառուցվածքի վերակողմնորոշում արդյունաբերական-ինովացիոն զարգացման պետական ծրագրի կարիքների համար:

**65.** ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ-ՀԱՂՈՐԴԱԿՑԱՅԻՆՀՈՍՔԵՐՈՒՄ:«ԵՎՐԱՍԻԱԿԱՆՏՐԱՆՍՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔ» ՄՈՒԼՏԻՄՈԴԱԼ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ստեղծման նախագծի մեկնարկ, որը թույլ կտա իրականացնել Ասիայից Եվրոպա բեռների անխափան տարանցումը: Տրանսպորտային միջանցքը կանցնի. առաջին ուղղություն՝ Ղազախստանի, Ռուսաստանյան Դաշնության տարածքով դեպի Եվրոպա: Երկրորդ ուղղություն՝ Ղազախստանի տարածքով Հորգոսից մինչև Ակտաու նավահանգիստ, Կասպից ծովով Ադրբեջան, այնուհետև՝ Վրաստանով Եվրոպա: 2014թ. վերջին ստեղծված Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի հետագա ներգրավումը այս նախագծին:

**66.** Միջազգային ավիացիոն հաբի ստեղծում: Ալմաթիի մոտ ռազմավարական ներդրողի ներգրավմամբ կկառուցվի ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՆՈՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ:

**67.** «ԷՅՐ ԱՍՏԱՆԱ» ԱՎԻԱՓՈԽԱԴՐՈՂԻ ԵՎ «КТЖ» ԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ԽՈՇՈՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ: «Էյր Աստանան» կկենտրոնանա միջազգային ուղղությունների վրա և նոր ուղղություններ կբացի դեպի աշխարհի հիմնական ֆինանսային կենտրոններ (Նյու Յորք, Տոկիո, Սինգապուր): «Էյր Աստանայի» զարգացումը կներդաշնակվի «КТЖ»-ի՝ այլընտրանքային երթուղիների զարգացման ծրագրերի հետ, ինչը թույլ կտա իջեցնել բեռի տեղափոխման արժեքն ավելի քան երկու անգամ:

**68.** ԱՎԻԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ բարելավում՝ Ղազախստանով ավիատարանցման գրավչությունը բարձրացնելու համար: Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի գործունեությունը կողմնորոշված կլինի Քաղաքացիական ավիացիայի բրիտանական պետական գործակալության և ԵՄ ավիացիայի անվտանգության գործակալության մոդելների վրա:

**69.** Աստանան դարձնել ԵՎՐԱՍԻԱՅԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ, որը հետազոտողների, ուսանողների, ձեռներեցների, զբոսաշրջիկների կգրավի ողջ տարածաշրջանից: Միաժամանակ քաղաքում կստեղծվի ժամանակակից միջազգային տրանսպորտային-լոգիստիկ համակարգ՝ ներառյալ օդանավակայանի նոր տերմինալը:

**70.** ԱՍՏԱՆԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ (AIFC) ՍՏԵՂԾՈՒՄ ASTANAEXPO-2017-ի ենթակառուցվածքի բազայի վրա՝ ՏԱԼՈՎ ՆՐԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ: Ֆինանսային կենտրոնի հատուկ իրավաբանական կարգավիճակի ամրագրում սահմանադրության մեջ: Կենտրոնը կլինի որպես ՖԻՆԱՆՍԱՅԻՆ ՀԱԲ ԱՊՀ երկրների, ինչպես նաև Արևմտյան և Կենտրոնական Ասիայի ողջ տարածաշրջանի համար: ԱՆԿԱԽ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՄԲ, որը կգործի անգլիական իրավունքի սկզբունքներով: Դատավորների կազմը ձևավորվում է օտարերկրյա մասնագետներից: ՀԵՌԱՆԿԱՐՈՒՄ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՅԻՆ ՀԱԲԸ ՊԵՏՔ Է ՄՏՆԻ ԱՇԽԱՐՀԻ 20 ԱՌԱՋԱՏԱՐ ՖԻՆԱՆՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՄԵՋ:

**71.** Ֆինանսային կենտրոնի զարգացման ռազմավարության մշակում՝ մասնագիտանալով ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ: Էլիտար ֆինանսական ծառայությունների նոր տեսակների զարգացում, այդ թվում privatebanking-ի և ակտիվների կառավարման ոլորտում: Կենտրոնում ներմուծել լիբերալ հարկային ռեժիմ: Հնարավոր է օֆշորային ֆինանսական շուկայի ստեղծում: Դուբայի օրինակով ներմուծել ներդրումային ռեզիդենտության սկզբունքը:

**72.** Ֆինանսային կենտրոնի տարածքում ներդնել անգլերեն լեզուն՝ որպես պաշտոնական: Կենտրոնի ինքնուրույն օրենսդրությունը պետք է ԿԱԶՄՎԻ ԵՎ ԿԻՐԱՌՎԻ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ:

**73.** Ապահովել ֆինանսային կենտրոնի միջազգային տրանսպորտային հասանելիությունը: Ստեղծել ֆինանսային կենտրոնի ԿԱՆՈՆԱՎՈՐ ԵՎ ՀԱՐՄԱՐԱՎԵՏ ԱՎԻԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԱՆՑ ԱՌԱՋԱՏԱՐ ՖԻՆԱՆՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԵՏ:

**74.** Ընդերքի օգտագործման ոլորտին թափանցիկության և կանխատեսելիության բարձրացում CRIRSCO ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԼԻՆԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՄԲ:

**75.** Բոլոր օգտակար հանածոների համար ներդնել ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԴՅՈՒՐԱՑՎԱԾ ՄԵԹՈԴԸ՝ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ:

**76.** Մարդկային կապիտալի որակի բարձրացում ՏՀԶԿ երկրների չափանիշների հիման վրա: 12-ԱՄՅԱ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԱՌՓՈՒԼ ՆԵՐԴՐՈՒՄ, դպրոցական ուսուցման չափանիշների նորացում ֆունկցիոնալ գրագիտության զարգացման համար: Ավագ դպրոցում ներդնել անհատական ֆինանսավորում, ստեղծել հաջող դպրոցների խթանման համակարգ:



**77.** Որակյալ կադրերի պատրաստում ՏԱՍԸ ԱՌԱՋԱՏԱՐ ՔՈԼԵՋՆԵՐՈՒՄ ԵՎ ՏԱՍԸ ԲՈՒՀԵՐՈՒՄ տնտեսության վեց հիմնական ոլորտների համար՝ երկրի մյուս ուսումնական հաստատություններում փորձի հետագա տարածմամբ:

**78.** ԲՈՒՀԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ փուլառփուլ ընդլայնում՝ հաշվի առնելով Նազարբաև համալսարանի փորձը: Մասնավոր բուհերի վերափոխումը ոչ առևտրային կազմակերպությունների՝ միջազգային պրակտիկային համապատասխան:

**79**. Կրթական համակարգում՝ ավագ դպրոցում և բուհերում, փուլառփուլ անցում անգլերեն լեզվով ուսուցման: ԳԼԽԱՎՈՐ ՆՊԱՏԱԿՆ Է՝ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԱՃԸ:

**80.** ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄ: Առողջապահության համակարգի ֆինանսական կայունության ուժեղացում պետության, գործատուի և քաղաքացիների ՀԱՄԵՐԱՇԽ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ սկզբունքի հիման վրա: Առաջնային բժշկական-սանիտարական օգնության ֆինանսավորում: Առաջնային օգնությունը կդառնա ազգային առողջապահության կենտրոնական օղակը՝ հիվանդությունները կանխարգելելու և դրանց հետ նախնական փուլում պայքարելու համար:

**81.** ՄԱՍՆԱՎՈՐ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ԲՈՒԺՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ: Սոցիալական բժշկական ապահովագրության պայմաններում ծառայությունների հասանելիության և որակի բարձրացման նպատակով նախնական բժշկական-սոցիալական օգնության ֆինանսավորման հիման վրա մրցակցության հաշվին ապահովել բժշկական կազմակերպությունների անցումը կորպորատիվ կառավարման սկզբունքների: Խթանել պետական բժշկական կազմակերպությունների սեփականաշնորհումը, ընդլայնել անվճար բժշկական օգնության երաշխավորված ծավալի տրամադրումը ոչ պետական կազմակերպությունների միջոցով:

**82.** ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ ՍՏԵՂԾԵԼ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ: Գլխավոր նպատակն է բժշկական սպասարկման առաջատար չափանիշների ներդրումը (բուժման արձանագրություններ, կադրերի պատրաստում, դեղորայքային ապահովում, որակի և հասանելիության վերահսկում):

**83.** Աշխատանքային հարաբերությունների լիբերալացում: Նոր ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ մշակում:

**84.** ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՕՊՏԻՄԻԶԱՑԻԱ ԴՐԱ ՀԱՍՑԵԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ: Սոցիալական օգնություն կհատկացվի միայն այն քաղաքացիներին, ովքեր, իրոք, դրա կարիքն ունեն: Ցածր եկամուտներով աշխատունակ քաղաքացիներին պետական հասցեական սոցիալական օգնություն կտրամադրվի միայն այն պայմանով, որ նրանք ակտիվորեն մասնակցեն զբաղվածությանը նպաստելու և սոցիալական ադապտացման ծրագրերում:

## I V. ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ

**85.** «МӘҢГІЛІК ЕЛ» (Հավերժական երկիր) հայրենասիրական ակտի նախագծի մշակում:

**86.** ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ «ՄԵԾ ԵՐԿԻՐ, ՄԵԾ ԸՆՏԱՆԻՔ» ՄԱՍՇՏԱԲԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ մշակում և իրականացում, որը կամրապնդի ղազախստանյան ինքնությունը և պայմաններ կստեղծի ամբողջական քաղաքացիական հանրույթի ձևավորման համար: Այս ողջ աշխատանքը միահյուսված կլինի մինչև 2020թ. ՂՀ զբոսաշրջային ոլորտի զարգացման հայեցակարգի իրականացման (հաշվի առնելով ներքին տուրիզմի զարգացումը) և մարզային մշակութային-տուրիստական կլաստերների ստեղծման հետ, որոնք են՝ «Աստանա՝ Եվրասիայի սիրտ», «Ալմաթի՝ Ղազախստանի ազատ մշակութային գոտի», «Բնության և քոչվոր մշակույթի միասնություն», «Ալթայի մարգարիտ», «Մեծ Մետաքսի ճանապարհի վերածնում», «Կասպիական դարպասներ»:

**87.** «МЕНІҢ ЕЛІМ» քաղաքացիական ինքնության ազգային նախագծի մշակում և իրականացում, որի շրջանակներում նախատեսված է մի շարք տեխնոլոգիական ծրագրերի իրականացում: Դրանցից մեկն է «ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ» ՄԱՍՇՏԱԲԱՅԻՆ ԻՆՏԵՐՆԵՏ-ՆԱԽԱԳԾԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ, ՈՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՆՊԱՏԱԿՆ Է՝ ՕԳՆԵԼ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԶԲՈՍԱՇՐՋԻԿԻ ԱՎԵԼԻ ՇԱՏ ԲԱՆ ԻՄԱՆԱԼ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ: Պորտալում կտեղադրվեն 3D տեսատուրեր Ղազախստանով, տեղեկատվություն երկրի պատմության և մշակույթի, հետաքրքիր իրադարձությունների և ղազախստանցիների կյանքի մասին: Պորտալը կդառնա երկրի մի ուրույն «այցեքարտ», ազգային ուղեցույց, ազգային պատվո տախտակ հետաքրքիր քաղաքացիների մասին և հարթակ՝ վիրտուալ շփման համար:

**88.** Համընդհանուր աշխատանքի հասարակության գաղափարի առաջքաշման ազգային նախագծի մշակում և իրականացում, որն ուղղված է ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԱՌԱՋՔԱՇՄԱՆԸ՝ հաշվի առնելով «НҰРЛЫ ЖОЛ» ենթակառուցվածքային զարգացման ծրագրի, ինդուստրալացման երկրորդ հնգամյակի իրականացման պլանները, ինչպես նաև ղազախստանցիների հաջողությունների (մեր ժամանակի հերոսների) անհատական պատմությունները, որոնք բարձր արդյունքների են հասել աշխատանքային, ձեռներեցության, գիտակրթական և այլ մասնագիտական գործունեության մեջ, համբավ են ձեռք բերել բանվորական և մասնագիտական-տեխնիկական մասնագիտություններում պետական քաղաքականության շնորհիվ անկախության տարիներին, որոնք համապատասխանում են «Ղազախստան-2050» Ռազմավարության ինդուստրալացման և իրականացման պետական քաղաքականության պահանջմունքներին:

**89.** «НҰРЛЫ БОЛАШАҚ» ազգային նախագծի մշակում և իրականացում: МӘҢГІЛІК ЕЛ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ դպրոցական կրթության գործող ուսումնական ծրագրերում:

**90.** 5 ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման, ինչպես նաև ղազախստանյան ինքնության գաղափարի ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՈՒՂԵԿՑՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՔԱՇՈՒՄ լրատվամիջոցներում, համացանցում, նոր սերնդի ՁԼՄ-ներում, ինչպես նաև սոցիալական ցանցերում:

## V. ՀԱՇՎԵՏՈՒ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

**91.** ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԻՑ ԱՆՑՈՒՄ ԴԵՊԻ ԿՈՆԿՐԵՏ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՊԵՏԿԱՌԱՎԱՐՈՒՄ մոնիթորինգի, գնահատման և վերահսկման ստանդարտացված և նվազագույն ընթացակարգերի շրջանակներում: Կարգապահական վերահսկման համակարգը պետք է հիմնված լինի բացառապես նպատակային ինդիկատորների հասնելու վերահսկման վրա: ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ԲՈԼՈՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՎԵՐԱՑՎԵՆ: Պետական մարմիններին կտրամադրվի ինքնուրույնություն՝ նրանց առջև դրված նպատակային ինդիկատորներին հասնելու գործունեության ընթացքում:

**92.** ՊԵՏԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԿՈՄՊԱԿՏ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ: ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՔԱՆԱԿԻ ԿՐՃԱՏՈՒՄ: ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԼՈՒԾԱՐՈՒՄ՝ ինտեգրելով առանձին ոլորտային ծրագրերը պետական ծրագրերի, ինչպես նաև պետական մարմինների ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ մեջ: ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ և տարածքների զարգացման ծրագրերի ՎԵՐԱՖՈՐՄԱՏԱՎՈՐՈՒՄ՝ գլխավոր նպատակային ինդիկատորների մասով:

**93.** ԱՈՒԴԻՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ներմուծում: Պետական ծրագրերի գնահատումը կանցկացվի երեք տարին մեկ անգամ: Պետական մարմինների արդյունավետութ-

յան գնահատումը կիրականացվի ամեն տարի՝ ըստ ռազմավարական ծրագրերի: «Պետական աուդիտի և ֆինանսային վերահսկողության մասին» օրենքի ընդունում: Հաշվիչ կոմիտեն կաշխատի համաշխարհային առաջնակարգ աուդիտորական ընկերությունների մոդելով և կհեռանա ընթացիկ գործառնական վերահսկողությունից:

**94.** «Բաց կառավարության» ներմուծում: ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ մշակում, ինչը թույլ կտա պետական մարմինների տրամադրության տակ գտնվող ցանկացած տեղեկատվությունը, բացառությամբ պետական գաղտնիքին վերաբերող և այլ տեղեկատվության, դարձնել օրենսդրորեն պահպանվող:

**95.** Պետական մարմինների ղեկավարների՝ բնակչության առջև ԱՄԵՆԱՄՅԱ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆԵՐԴՆՈՒՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ և նրանց հաշվետվությունների տեղադրում պաշտոնական կայքերում: Ամենամյա հաշվետվությունների պրակտիկայի ներդնում ազգային բուհերի ղեկավարների գործունեության արդյունքների մասին ուսանողության, գործատուների, հանրության ներկայացուցիչների և ԶԼՄ ներկայացուցիչների առջև:

**96.** Ապահովել ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԲԱԶԱՆԵՐԻ ՕՆԼԱՅՆ-հասանելիություն: Ողջ բյուջետային և կոնսոլիդացված ֆինանսային հաշվետվությունը, արտաքին ֆինանսային աուդիտի արդյունքները, պետական քաղաքականության արդյունավետության գնահատականի ամփոփիչ արդյունքները, պետական ծառայությունների որակի հանրային գնահատականի արդյունքները, հանրապետական և տեղի բյուջեների կատարման մասին հաշվետվությունը ԿՀՐԱՊԱՐԱԿՎԵՆ:

**97.** ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ինքնակարգավորման և տեղական ինքնակառավարման զարգացման միջոցով: ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՈՉ ԲՆՈՐՈՇ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ԿՈՆԿՐԵՏ ՄԻՋԱՎԱՅՐ և ինքնակարգավորվող կազմակերպություններին: Կառավարությունը կոմպակտ կդառնա պետությանը ոչ բնորոշ և ավելորդ գործառույթների կրճատման հաշվին:

**98.** Գյուղական շրջանի, աուլի, գյուղի, ավանի, շրջանային նշանակության քաղաքի մակարդակով ԿՆԵՐԴՐՎԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԲՅՈՒՋԵ: Շրջանային կենտրոններում և հանրապետական նշանակության քաղաքներում կաշխատեն համապատասխան բյուջեների նախագծերի քննարկումներում քաղաքացիների մասնակցության մեխանիզմներ:



**99.** ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԵՎ ԱԿԻՄՆԵՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԴԵՐԻ ՈՒԺԵՂԱՑՈՒՄ ռազմավարական պլանների և տարածքների զարգացման ծրագրերի կատարման, բյուջեների, հաշվետվությունների, նպատակային ինդիկատորների նվաճման, քաղաքացիների իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի նախագծերի քննարկման մասով: ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ օրենքով ամրագրումը կբարձրացնի պետական որոշումների ընդունման թափանցիկությունը:

**100.** «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ՊԵՏԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ստեղծում, որը կդառնա ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՊՐՈՎԱՅԴԵՐԸ Կանադայում CanadaService-ի և Ավստրալիայում Centrelink-ի օրինակով: Պետական կորպորացիան ինտեգրում է բնակչության սպասարկման բոլոր կենտրոնները մեկ միասնական համակարգի մեջ: Ղազախստանյան քաղաքացիները կստանան ԲՈԼՈՐ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԿ ՏԵՂՈՒՄ: Պետծառայությունների միջազգային սերտիֆիկացիան համապատասխանեցնել ISO 9000 ՍԵՐԻԱՅԻ ՈՐԱԿԻ ՄԵՆԵՋՄԵՆԹԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ:

# ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

• Օպերատիվ կերպով երկրի Նախագահին կից ՍՏԵՂԾՎԵԼ Է ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ, որի կազմում կա հայրենի և արտասահմանյան փորձագետներից բաղկացած ՀԻՆԳ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ:

• Ազգային հանձնաժողովը պետք է իրականացնի ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ՝ ՓՈՒԼԱՌՓՈՒԼ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՎ ՀԻՆԳ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ: Այն կապահովի պետական մարմինների, բիզնես-հատվածի և քաղաքացիական հասարակության արդյունավետ փոխգործակցությունը:

• Ազգային հանձնաժողովը պետք է ԸՆԴՈՒՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆԿՐԵՏ ԾՐԱԳՐԵՐ: Նրա առաջարկները պետք է հաստատվեն երկրի Նախագահի կողմից: Հաստատված որոշումների կատարման համար օպերատիվ կերպով ԿԸՆԴՈՒՆՎԵՆ ՕՐԵՆՔՆԵՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՎ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ:

• Նախարարների և ակիմների կարևոր նախաձեռնությունների իրականացման արդյունավետությանը խստորեն ԿՀԵՏԵՎԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ:

• Ազգային հանձնաժողովին կից անհրաժեշտ է ձևավորել ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԹՎԻՑ: Տվյալ խորհուրդն առաջարկներ կմշակի և կիրականացնի բարեփոխումների իրականացման ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՆԿԱԽ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ:

• Որպես Ազգային հանձնաժողովի աշխատանքային մարմին՝ անհրաժեշտ է սահմանել ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Ներածություն.
Հայաստան-Ղազախստան.
համագործակցության ակունքներ.........................................................7**

**Գլուխ 1.
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.........................................................12**

Համագործակցության հարթակ՝ ԱՊՀ................................................................14
Համագործակցության հարթակ՝ ԵԱՏՄ...............................................................16
Համագործակցության հարթակ՝ ՀԱՊԿ...............................................................18
Համագործակցության հարթակ՝ ոչ միջուկային աշխարհ................................20
2015-ը Հայաստանի և Ղազախստանի
Սահմանադրությունների 20-ամյակի տարին է................................................23
Ամանժոլ Նուրմագամբետով. «20 տարվա ընթացքում
Ղազախստանում ճգնաժամային երևույթներ չեն եղել»..................................26
«100 քայլ»՝ վստահ հայտ դեպի ապագա.........................................................30

**ԳԼՈՒԽ 2.
ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՍԱՄԲԼԵԱՆ 20 ՏԱՐԵԿԱՆ Է......................37**

Կազբեկ Մանսուրով. «Կա մի գլխավոր գաղափար՝
մենք բոլորս միանման ենք»..................................................................................42
Անատոլի Բաշմակով. «Աշխարհը կփրկի հոգու էկոլոգիան»............................44
Ղազախստանի հայեր. հանդուրժողականությունը մեր
կյանքի ձևն է, մենք բոլորս ղազախստանցիներ ենք........................................48
Նարինե Միքայելյան.
«Հանդուրժողականությունը մեր կյանքի ձևն է»...........................................54
Ալբերտ Պողոսյան. «Երախտագիտություն այն հողին,
որը կերակրել է մեզ».............................................................................................56
Արտյոմ Սերոբյան. «Ալմաթիի հայերը ապրիլի
24-ին 62 հազար մոմ են վառել»...........................................................................58
Արամ Նավասարդյան. «Հարկավոր է մեր միջոցառումներին
որքան հնարավոր է շատ երիտասարդների ներգրավել»..................................59
Բարսեղ Թումանյան. «Այստեղ ոչ թե հանդուրժողականություն է,
այլ ուղղակի լավ վերաբերմունք միմյանց նկատմամբ».................................61
Բարեկամության ու հանդուրժողականության մասին....................................64

**ԳԼՈՒԽ 3.
Համաշխարհային ԵՎ ավանդական կրոնների առաջնորդների
5-րդ համագումարը.......................................................................73**

Քաղաքական ու կրոնական առաջնորդներ. աշխատանք միասին.................76
Գալիմ Ծոյկին. Ղազախստան՝« բարեկամության լաբորատորիա».................81
Տեր Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյան. «Մենք միշտ բաց ենք
խաղաղությանն ուղղված նախաձեռնությունների համար»...........................85
Հայր Դմիտրի Սաֆոնով. «Սա ոչ թե կրոնական ծայրահեղականություն է,
այլ կրոնով քողարկված ծայրահեղականություն»..........................................87
Շեյխ Մուհամմեդ Հուսեյն Հաջի Նայիբ Ալսաբեկով. «Տարեցտարի
կյանքը բարդանում է, ի հայտ են գալիս նոր աղանդներ»...............................89
Արքեպիսկոպոս Միգել Մաուրի Բուենդիա. «Մի կողմից պետք է վարձքը
տանք Կեսարին, մյուս կողմից՝ Աստծուն»........................................................90
Դր. Զ.Մ.Դավե. «Հարաբերություններ կառուցելու լավագույն ճանապարհը
բռնության չդիմելն է»............................................................................................91
Սրբազան Ալթան. «Բուդդան ասում էր. «Զարգացրեք ձեր մեջ
իսկական սեր»»......................................................................................................93
Դր. Ալի Մուհամմեդ Հելմի. «Ցավոք, բռնությունն ու կրոնական
ծայրահեղականությունն օրեցօր աճում են»......................................................94
Աստծո, հավատի եվ կրոնի մասին աֆորիզմներ, մեջբերումներ....................96

**Գլուխ 4.
2017՝ Ղազախստանի համար բրենդային տարի..................................107**

Աստանա. «ԷՔՍՊՈ-2017»-ի նախաշեմին.......................................................109
Ղազախստանը պատրաստվում է «Ունիվերսիադա-2017»-ի
անցկացմանը.........................................................................................................112
Իլյա Ուրազակով. «Ալմաթին ապրում է «Ունիվերսիադա-2017»-ի
նախապատրաստությամբ»...................................................................................114
Հայաստան-Ղազախստան. «Բարի գալուստ, հյուր»........................................118

**Վերջաբան.
Հայաստանի և Ղազախստանի միջև համագործակցության
զարգացման հեռանկարները.......................................................127**

**Հավելված - Ազգի ծրագիր՝ հինգ ինստիտուցիոնալ
բարեփոխումների իրականացման 100 քայլ.......................................131**

## ՂԱԶԱԽՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ.
## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐ


**Խմբագիրներ՝** Նաիրա Մկրտչյան, Կարինե Օհանյան

**Խորհրդատուներ՝**

Աննա Մկրտչյան,
*«Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ վարչության անդամ*

Հայկուհի Կաթրջյան,
*«Արմեդիա» ՏՎԳ տնօրեն*

Նարեկ Մինասյան,
*«Հայացք» կիրառական քաղաքականության և հետազոտությունների վերլուծական կենտրոնի ղեկավար*

**Հեղինակային խումբ՝**

Աննա Կարապետյան

Արփինե Հովսեփյան

Գրետա Ավետիսյան

Իզաբելլա Բարխուդարյան

Լիանա Հովհաննիսյան

Հակոբ Թումանյան

Հասմիկ Վարդանյան

**Սրբագրիչ՝** Լևոն Խաչատրյան

**Գրքի ձևավորումը՝** Լիկա Խաչատրյանի


---


ՀՏԴ 327
ԳՄԴ 66.4
Ղ 153

Ղազախստան-Հայաստան. համագործակցության հարթակներ
Ղ 153 Եր: Տիգրան Մեծ, 2015. - 152 էջ:

ՀՏԴ 327
ԳՄԴ 66.4

ISBN 978-99941-0-699-8



© «Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ, 2015
© «Արմեդիա» ՏՎԳ, 2015



Տպաքանակ՝ 500:

Չափսը՝ 70x100/16: Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ կավճապատ, 90 գ/մ$^2$

Տպագրված է **«Տիգրան Մեծ»** հրատարակչություն ՓԲԸ տպարանում


ЖӘНЕ ДӘСТҮРЛІ ДІНДЕР
10-11 маусым
V CONGRESS OF THE LEADERS OF
WORLD AND TRADITIONAL RELIGIONS
10-11 June
